- Դուք ստացել եք ապահովագրված ծառայությունը Blue Shield Promise-ի ցանցում ցուցակագրված Medi-Cal-ի մատակարարից: Դուք կարիք չունեք բավարարելու այս պայմանը, եթե ստացել եք արտակարգ իրավիճակի ծառայություններ, ընտանիքի ծրագրման ծառայություններ կամ մեկ այլ ծառայություն, որը Medi-Cal-ը արտացանցային մատակարարներին թույլ է տալիս մատուցել առանց նախավավերացման:
- Եթե ապահովագրված ծառայությունը սովորաբար պահանջում է նախավավերացում, Դուք տրամադրում եք ապացույց մատակարարից, որը ցույց է տալիս ապահովագրված ծառայության բժշկական կարիքը:

Blue Shield Promise-ը Ձեզ կտեղեկացնի Ձեզ փոխհատուցելու իր որոշման մասին նամակով, որը կոչվում է Գործողության ծանուցագիր (Notice of Action): Եթե Դուք համապատասխանում եք վերը նշված բոլոր պայմաններին, Medi-Cal-ում ցուցակագրված մատակարարը պետք է Ձեզ հետ վճարի Ձեր վճարած ամբողջ գումարի համար: Եթե մատակարարը հրաժարվի Ձեզ հետ վճարել, Blue Shield Promise-ը հետ կվճարի Ձեզ վճարած ամբողջ գումարի համար: Մենք պարտավոր ենք Ձեզ փոխհատուցել պահանջն ստանալուց հետո 45 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե մատակարարը ցուցակագրված է Medi-Cal-ում, բայց Blue Shield Promise-ի ցանցում չէ և հրաժարվում է Ձեզ փոխհատուցել, Blue Shield Promise-ը Ձեզ հետ կվճարի, բայց միայն մինչև այն գումարը, որը կվճարեր FFS Medi-Cal-ը: Blue Shield Promise-ը Ձեզ հետ կվճարի արտակարգ իրավիճակի ծառայությունների, ընտանիքի ծրագրման ծառայությունների կամ մեկ այլ ծառայության համար, որը Medi-Cal-ը թույլ է տալիս տրամադրել արտացանցային մատակարարների կողմից՝ առանց նախավավերացման: Եթե Դուք չեք բավարարում վերը նշված պայմաններից որևէ մեկը, Blue Shield Promise-ը Ձեզ հետ չի վճարի:

Blue Shield Promise-ը Ձեզ հետ չի վճարի, եթե՝

- Դուք խնդրել և ստացել եք ծառայություններ, որոնք չեն ապահովագրվում Medi-Cal-ի կողմից, օրինակ՝ գեղարարական ծառայություններ:
- Ծառայությունն ապահովագրված ծառայություն չէ Blue Shield Promise-ի համար:
- Դուք ունեք Medi-Cal ծախսերի չբավարարված ծախսաբաժին:



Ձանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսագանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ blueshieldca.com/promise/medi-cal:

- Դուք գնացել եք բժշկի մոտ, ով չի ընդունում Medi-Cal, և ստորագրել եք մի ձևաթուղթ, որտեղ նշվում էր, որ այնուամենայնիվ ցանկանում եք քննվել, և որ Դուք ինքներդ կվճարեք ծառայությունների համար:
- Եթե ունեք Medicare Part D, դեղատոմսային դեղերի համար համավճարները ապահովագրվում են Ձեր Medicare Part D ծրագրի կողմից:



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ blueshieldca.com/promise/medi-cal:

3. Ինչպես խնամք ստանալ

Առողջական խնամքի ծառայություններ ստանալը

ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ԿԱՐԴԱԼ ՀԵՏԵՎՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆԸ, ՈՐՊԵՍՁԻ ԻՄԱՆԱՔ ՈՒՄԻՑ ԿԱՍ ՈՐ ՄԱՏԱԿԱՐԱՐՆԵՐԻ ԽՄԲԻՑ ԿԱՐԵԼԻ Է ԱՌՈՂՋԱԿԱՆ ԽԱՄՔ ՍՏԱՆԱԼ

Առողջական խնամքի ծառայությունների ստացումը կարող էք սկսել Ձեր անդամագրության գործուն ամսաթվից: Միշտ Ձեզ հետ ունեցեք Ձեր Blue Shield Promise-ի ճանաչողական քարտը, Medi-Cal-ի նպաստների ճանաչողական քարտը (BIC) և առողջական ապահովագրության ցանկացած այլ քարտ: Երբեք թույլ մի տվեք որևէ մեկին օգտագործել Ձեր BIC-ը կամ Blue Shield Promise-ի ճանաչողական քարտը:

Միայն Medi-Cal-ի ապահովագրություն ունեցող նոր անդամները պարտավոր են Առաջնային խնամքի մատակարար (PCP) ընտրել Blue Shield Promise-ի ցանցում: Medi-Cal-ի և այլ համապարփակ առողջական ապահովագրություն ունեցող նոր անդամները պարտավոր չեն PCP ընտրել: Blue Shield Promise-ի ցանցը կազմված է մի խումբ բժիշկներից, հիվանդանոցներից և ուրիշ մատակարարներից, որոնք գործում են Blue Shield Promise-ի հետ: Պարտավոր եք PCP ընտրել Blue Shield Promise-ի անդամ դառնալուց հետո 30 օրվա ընթացքում: Եթե չընտրեք մի PCP, Blue Shield Promise-ը կընտրի այդպիսին Ձեզ համար:

Blue Shield Promise-ում կարող եք նույն PCP-ն կամ տարբեր PCP-ներ ընտրել ընտանիքի բոլոր անդամների համար, քանի դեռ PCP-ն հասանելի է:



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝

blueshieldca.com/promise/medi-cal:

Եթե ունեք մի բժիշկ, որին ցանկանում եք պահել, կամ ուզում եք գտնել մի նոր PCP, կարող եք որոնել Մատակարարների հասցեագրքում: Այն պարունակում է ցանկը Blue Shield Promise-ի ցանցում գտնվող PCP-ների: Մատակարարների հասցեագիրքը ունի Ձեր ընտրության օգնող այլ տեղեկություններ: Եթե Ձեզ անհրաժեշտ է Մատակարարների հասցեագիրք, զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY կամ 711) համարով: Մատակարարների հասցեագիրքը կարող եք նաև գտնել Blue Shield Promise-ի կայքում՝ blueshieldca.com/promise/medi-cal:

Եթե չեք կարող Ձեզ անհրաժեշտ խնամքը ստանալ Blue Shield Promise-ի ցանցում գտնվող մասնակից մատակարարից, Ձեր PCP-ն պարտավոր է Blue Shield Promise -ից վավերացում խնդրել, որպեսզի Ձեզ ուղարկի արտացանցային մատակարարի: Մա կոչվում է ուղեգիր: Արտացանցային մատակարարի գնալու համար վավերացում պետք չէ, որպեսզի ստանաք զգայուն ծառայություններ, որոնք նկարագրված են այս գլխում ավելի ուշ՝ «Զգայուն խնամք» վերնագրի ներքո:

Կարդացեք այս գլխի մնացած մասը, ավելին իմանալու համար PCP-ների, Մատակարարների հասցեագրքի և մատակարարների ցանցի մասին:

Դեղատների նպաստներն այժմ կառավարվում են Վճարովի ծառայությամբ (FFS) Medi-Cal-ի Rx ծրագրի միջոցով: Ավելին իմանալու համար կարդացեք 4-րդ Գլխի «Medi-Cal-ի այլ ծրագրեր և ծառայություններ» բաժինը:

Առաջնային խնամքի մատակարար (PCP)

Պարտավոր եք PCP ընտրել Blue Shield Promise-ին անդամագրվելուց հետո 30 օրվա ընթացքում: Նայած Ձեր տարիքի և սեռի, կարող եք որպես Ձեր առաջնային խնամքի մատակարարին ընտրել ընդհանուր մասնագետի, Մանկաբարձ/Գինեկոլոգի, ընտանեկան հիվանդությունների մասնագետի, ներքին հիվանդությունների մասնագետի կամ Ձեր առաջնային խնամքի մատակարարին (PCP): Առաջնային



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսագանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ blueshieldca.com/promise/medi-cal:

խնամք տրամադրող բուժքույրը (Nurse Practitioner, NP), օգնական բժիշկը (Physician Assistant, PA) կամ վկայագրված բուժքույր-մանկաբարձը նույնպես կարող է գործել որպես Ձեր PCP: NP, PA կամ վկայագրված բուժքույր-մանկաբարձը նստրելու դեպքում, թերևս Ձեզ համար նշանակեն Ձեր խնամքը վերահսկող բժշկի: Եթե անդամ եք և՛ Medicare-ի, և՛ Medi-Cal-ի, կամ եթե ունեք այլ համապարփակ առողջական խնամքի ապահովագրություն, պարտավոր չեք PCP ընտրել:

Կարող եք ընտրել Հնդկացիների առողջական խնամքի մատակարար (IHCP), Դաշնային որակավորման առողջապահական կենտրոն (FQHC) կամ Գյուղական առողջապահական կլինիկա (Rural Health Clinic, RHC) որպես Ձեր PCP: Նայած մատակարարի տեսակի, թերևս կարողանաք ընտրել մեկ PCP Ձեր ողջ ընտանիքի անդամների համար, ովքեր անդամ են Blue Shield Promise-ի:

Նշում՝ Ամերիկյան հնդկացիները կարող են ընտրել IHCP որպես PCP, նույնիսկ եթե IHCP-ն Blue Shield Promise-ի ցանցում չէ:

Անդամագրվելուց հետո 30 օրվա ընթացքում PCP չընտրելու դեպքում, Blue Shield Promise-ը PCP կնշանակի Ձեզ համար: Եթե Ձեզ համար նշանակել են PCP և ցանկանում եք փոխել այն, զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Փոփոխությունը կատարվում է հաջորդ ամսի առաջին օրը:

Ձեր PCP-ն կանի հետևյալը՝

- Կճանաչի Ձեր առողջական պատմությունը և կարիքները
- Կպահի Ձեր առողջական արձանագրությունները
- Կտա Ձեզ անհրաժեշտ կանխարգելիչ և սովորական առողջական խնամքը
- Կուղղորդի (կուղարկի) Ձեզ մասնագետի անհրաժեշտության դեպքում
- Կդասավորի հիվանդանոցային խնամքը անհրաժեշտության դեպքում

Blue Shield Promise-ի ցանցում PCP գտնելու համար կարող եք նայել

Մատակարարների հասցեագրքին: Մատակարարների հասցեագիրքը ունի ցանկը IHCP-ների, FQHC-ների և RHC-ների, որոնք գործում են Blue Shield Promise-ի հետ:



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսագանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝

blueshieldca.com/promise/medi-cal:

Blue Shield Promise-ի Մատակարարների հասցեագիրքը կարող եք առցանց գտնել հետևյալ կայքում՝ blueshieldca.com/promise/medi-cal: Կամ կարող եք խնդրել, որ Մատակարարների հասցեագիրքը փոստով ուղարկվի Ձեզ՝ զանգահարելով Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Կարող եք նաև զանգահարել պարզելու համար, որ արդյո՞ք Ձեր ցանկացած PCP-ն ընդունում է նոր հիվանդների:

Բժիշկների և մատակարարների ընտրությունը

Դուք լավագույնս գիտեք Ձեր առողջական խնամքի կարիքները, ուստի լավագույն կլինի, որ Դուք ընտրեք Ձեր PCP-ին:

Լավագույն է մնալ մեկ PCP-ի մոտ, որպեսզի նրանք կարողանան ճանաչել Ձեր առողջական խնամքի կարիքները: Սակայն եթե ցանկանում եք անցնել նոր PCP-ի, կարող եք փոխել որևէ ժամանակ: Պարտավոր եք ընտրել մի PCP, ով գտնվում է Blue Shield Promise-ի մատակարարների ցանցում և ընդունում է նոր հիվանդների:

Ձեր նոր ընտրանքը կդառնա Ձեր PCP-ն փոփոխության կատարման հաջորդող ամսի առաջին օրը:

Ձեր PCP-ին փոխելու համար զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Դուք կարող եք նաև փոխել Ձեր PCP-ին՝ մուտք գործելով Blue Shield Promise-ի անդամի աղբյուրների հարթակ՝ blueshieldca.com/promise/medi-cal: Blue Shield Promise-ը թերևս փոխի Ձեր PCP-ին, եթե PCP-ն նոր հիվանդների չի ընդունում, հեռացել է Blue Shield Promise-ի ցանցից կամ խնամք չի մատուցում Ձեր տարիքի անձանց, կամ եթե կան PCP-ի հետ կապված լուծման սպասող որակի մտահոգություններ: Blue Shield Promise-ը կամ Ձեր PCP-ն թերևս խնդրի, որ անցնեք մի նոր PCP-ի, եթե Ձեր հարաբերությունը լավ չէ Ձեր PCP-ի հետ կամ համաձայն չեք նրան, կամ եթե բաց եք թողնում ժամադրությունները կամ ուշ եք ներկայանում: Եթե Blue Shield Promise-ին անհրաժեշտ լինի փոխել Ձեր PCP-ին, Blue Shield Promise-ը գրավոր կհաղորդի Ձեզ:

Եթե Ձեր PCP-ն փոխվի, փոստով կստանաք մի նամակ և Blue Shield Promise-ի անդամի նոր ճանաչողական քարտ: Այն կունենա անունը Ձեր նոր PCP-ի:

Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք, եթե հարցեր ունեք նոր ճանաչողական քարտ ստանալու վերաբերյալ:



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսագանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ blueshieldca.com/promise/medi-cal:

Որոշ բաներ, որոնց մասին պետք է մտածեք PCP ընտրելիս:

- Արդյո՞ք PCP-ն հոգ է տանում երեխաների մասին:
- Արդյո՞ք PCP-ն աշխատում է այն կլինիկայում, որտեղ ես սիրում եմ հաճախել:
- Արդյո՞ք PCP-ի գրասենյակը մոտ է իմ տանը, աշխատավայրին կամ երեխաների դպրոցին:
- Արդյո՞ք PCP-ի գրասենյակը մոտ է իմ բնակության վայրին և արդյո՞ք հեշտ է PCP-ի գրասենյակ հասնելը:
- Արդյո՞ք բժիշկներն ու անձնակազմը խոսում են իմ լեզվով:
- Արդյո՞ք PCP-ն աշխատում է ինձ դուր եկած հիվանդանոցի հետ:
- Արդյո՞ք PCP-ն մատուցում է այն ծառայությունները, որոնք կարող են ինձ անհրաժեշտ լինել:
- Արդյո՞ք PCP-ի աշխատանքային ժամերը համապատասխանում են իմ ժամանակացույցին:

Առողջության սկզբնական գնահատում (IHA)

Blue Shield Promise-ը հանձնարարում է, որ Ձեր նոր PCP-ին այցելեք որպես նոր անդամ առաջին 120 օրերի ընթացքում, առողջության սկզբնական գնահատման (initial health assessment, IHA) համար: IHA-ը նպատակադրում է օգնել, որ Ձեր PCP-ն ճանաչի Ձեր առողջական խնամքի պատմությունն ու կարիքները: Ձեր PCP-ն կարող է Ձեզ մի շարք հարցեր տալ Ձեր առողջական պատմության մասին կամ խնդրել, որ լրացնեք մի հարցաթերթիկ: Ձեր PCP-ն նաև Ձեզ կհայտնի առողջապահական խորհրդատվության և դասընթացների մասին, որոնք կարող են օգնել Ձեզ:

Երբ զանգահարեք Ձեր IHA ժամադրությունը դասավորելու նպատակով, հեռախոսին պատասխանող անձին հայտնեք, որ Blue Shield Promise-ի անդամ եք: Տվեք Ձեր Blue Shield Promise-ի ճանաչողական համարը:



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝

blueshieldca.com/promise/medi-cal:

Ձեր BIC-ը և Blue Shield Promise-ի ճանաչողական քարտը տարեք Ձեր ժամադրություններին: Լավ կլինի, որ Ձեր այցի համար Ձեզ հետ տանեք Ձեր դեղերի ցանկը և հարցերը: Պատրաստվեք Ձեր PCP-ի հետ քննարկել Ձեր առողջական խնամքի կարիքներն ու մտահոգությունները:

Անպայման զանգահարեք Ձեր PCP-ի գրասենյակ, եթե պիտի ուշանաք կամ չեք կարող գնալ Ձեր ժամադրության:

Եթե հարցեր ունեք IHA-ի վերաբերյալ, զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով:

Սովորական խնամք

Սովորական խնամքը կանոնավոր առողջական խնամք է: Այն ընդգրկում է կանխարգելիչ խնամքը, որը կոչվում է քաջառողջության կամ լավ խնամք: Այն օգնում է, որ մնաք առողջ և օգնում է, որ խուսափեք հիվանդանալուց: Կանխարգելիչ խնամքն ընդգրկում է սովորական ստուգումները և առողջապահական կրթությունն ու խորհրդատվությունը: Երեխաները կարող են ստանալ շատ անհրաժեշտ վաղ կանխարգելիչ ծառայություններ, ինչպիսիք են լսողության և տեսողության զննումները, զարգացման գործընթացի գնահատումը և շատ այլ ծառայություններ, որոնք առաջարկվում են մանկաբույժների «Փայլուն ապագաների» ցուցումներով (https://downloads.aap.org/AAP/PDF/periodicity_schedule.pdf): Ի հավելումն կանխարգելիչ խնամքի, սովորական խնամքը նաև ընդգրկում է խնամքը՝ երբ հիվանդ եք: Blue Shield Promise-ն ապահովագրում է Ձեր PCP-ի մատուցած խնամքը:

Ձեր PCP-ն կանի հետևյալը՝

- Ձեզ կտա Ձեր սովորական խնամքի մեծ մասը, ներառյալ՝ սովորական ստուգումները, սրսկումները, բուժումը, դեղատոմսերը և բժշկական խորհուրդ
- Կպահի Ձեր առողջական արձանագրությունները
- Ձեզ կուղղորդի (կուղարկի) մասնագետների անհրաժեշտության դեպքում
- Կպատվիրի ռենտգեն պատկերումները, կրծքագիրները կամ լաբորատորային անալիզները, եթե կարիքն ունեք դրանց



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսագանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ blueshieldca.com/promise/medi-cal:

Սովորական խնամքի կարիքի դեպքում, Ձեր Բժշկին կգանգահարեք ժամադրության համար: Անպայման գանգահարեք Ձեր PCP-ին բժշկական խնամք ստանալուց առաջ, բացառությամբ արտակարգ իրավիճակի: Արտակարգ իրավիճակի համար գանգահարեք **911** կամ գնացեք մոտակա շտապ օգնության կայանը:

Ձեր ծրագրի ապահովագրած և չապահովագրած առողջական խնամքի և ծառայությունների մասին ավելին իմանալու համար, կարդացեք այս տեղեկագրի «Նպաստներ և ծառայություններ» և «Երեխաների և երիտասարդների լավ խնամք» բաժինները:

Blue Shield Promise-ի բոլոր մատակարարները կարող են օգտագործել օժանդակ միջոցներ և ծառայություններ՝ հաշմանդամ մարդկանց հետ շփվելու համար: Նրանք կարող են նաև շփվել Ձեզ հետ այլ լեզվով կամ ձևաչափով: Ասեք Ձեր մատակարարին կամ Blue Shield Promise-ին, թե ինչ է Ձեզ անհրաժեշտ:

Մատակարարների ցանց

Մատակարարների ցանցը ներկայացնում է մի խումբ բժիշկներ, հիվանդանոցներ և ուրիշ մատակարարներ, որոնք գործում են Blue Shield Promise-ի հետ: Դուք Ձեր ապահովագրված ծառայությունները կստանաք Blue Shield Promise-ի ցանցի միջոցով: Նշում՝ Ամերիկյան հնդկացիները կարող են ընտրել IHCP որպես PCP, նույնիսկ եթե IHCP-ն Blue Shield Promise-ի ցանցում չէ:

Եթե Ձեր PCP-ն, հիվանդանոցը կամ ուրիշ մատակարար, ունի բարոյական առարկություն Ձեզ ապահովագրված ծառայություն մատուցելու կապակցությամբ, ինչպես՝ ընտանիքի ծրագրումը կամ վիժումը, գանգահարեք Blue Shield Promise Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Բարոյական առարկությունների մասին ավելին իմանալու համար կարդացեք ավելի ուշ սույն գլխի «Բարոյական առարկություն» բաժինը:

Եթե Ձեր մատակարարն ունի բարոյական առարկություն, նա Ձեզ կօգնի գտնել մի



Չանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսագանգն անվճար է: Կամ գանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝

blueshieldca.com/promise/medi-cal:

ուրիշ մատակարար, ով Ձեզ կտա Ձեզ անհրաժեշտ ծառայությունները: Blue Shield Promise-ը կարող է նաև օգնել Ձեզ գտնել մի մատակարար, որը կկատարի ծառայությունը:

Ներգանցային մատակարարներ

Ձեր առողջական խնամքի կարիքների մեծ մասի համար կօգտվեք Blue Shield Promise-ի ներգանցային մատակարարներից: Ձեր կանխարգելիչ և սովորական խնամքը կստանաք ներգանցային մատակարարներից: Դուք նաև կօգտվեք Blue Shield Promise-ի ներգանցային մասնագետներից, հիվանդանոցներից և ուրիշ մատակարարներից:

Ներգանցային մատակարարների Մատակարարների հասցեագիրքը ստանալու համար զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Մատակարարների հասցեագիրքը կարող եք նաև գտնել առցանց հետևյալ կայքում՝ blueshieldca.com/promise/medi-cal: Պայմանագրային Դեղերի ցանկի պատճենը ստանալու համար զանգահարեք Medi-Cal Rx 800-977-2273 (TTY 800-977-2273 և սեղմեք 7 կամ 711): Կամ այցելեք Medi-Cal Rx-ի հետևյալ կայքը՝ <https://medi-calrx.dhcs.ca.gov/home/>:

Դուք պարտավոր եք նախավավերացում (նախօրոք լիազորում) ստանալ Blue Shield Promise-ից նախքան այցելելը Blue Shield Promise-ի ցանցում չգտնվող մատակարարի, ներառյալ՝ Blue Shield Promise-ի սպասարկման տարածքը, բացի հետևյալ իրավիճակներից՝

- Ձեզ անհրաժեշտ են արտակարգ իրավիճակի ծառայություններ, որի դեպքում հավաքեք 911 կամ գնացեք մոտակա հիվանդանոցը
- Գտնվում եք Blue Shield Promise-ի սպասարկման տարածքից դուրս և կարիք ունեք հրատապ խնամքի, որի դեպքում կարող եք գնալ որևէ հրատապ խնամքի հաստատություն



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսագանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ blueshieldca.com/promise/medi-cal:

- Կարիք ունեք ընտանիքի ծրագրման ծառայությունների, որի դեպքում կարող եք գնալ Medi-Cal-ի որևէ մատակարարի՝ առանց նախավավերացման
- Կարիք ունեք հոգեկան առողջության ծառայությունների, որի դեպքում կարող եք գնալ կա՛մ ներքանցային մատակարարի, կա՛մ վարչաշրջանի հոգեկան առողջության մատակարարի՝ առանց նախավավերացման

Եթե չեք գտնվում այսպիսի իրավիճակներից մեկում և չեք ստանում նախավավերացում և ստանում եք խնամք արտացանցային մատակարարից, թերևս պարտավոր լինեք վճարել արտացանցային մատակարարներից ստացված խնամքի համար:

Արտացանցային մատակարարներ, ովքեր գտնվում են սպասարկման տարածքում

Արտացանցային մատակարարները նրանք են, ովքեր չունեն Blue Shield Promise-ի հետ գործելու համաձայնություն: Բացի շտապ օգնությունից, թերևս պարտավորվեք վճարել արտացանցային մատակարարներից ստացված խնամքի համար: Եթե Ձեզ անհրաժեշտ են ապահովագրված առողջական խնամքի ծառայություններ, թերևս կարողանաք դրանք անվճար ստանալ ցանցից դուրս, պայմանով, որ դրանք լինեն բժշկականորեն անհրաժեշտ և հասանելի չլինեն ցանցի ներսում:

Blue Shield Promise-ը կարող է վավերացնել ուղեգիրը Ձեզ համար՝ արտացանցային մատակարարի մոտ, եթե անհրաժեշտ ծառայությունները մատչելի չեն ցանցում կամ գտնվում են Ձեր տնից շատ հեռու: Եթե մենք Ձեզ ուղղորդենք արտացանցային մատակարարի մոտ, մենք կվճարենք Ձեր խնամքի համար:

Blue Shield Promise-ի սպասարկման տարածքում հրատապ խնամքի համար Դուք պետք է այցելեք Blue Shield Promise-ի ցանցի հրատապ խնամքի մատակարարին: Ներքանցային մատակարարից հրատապ խնամք ստանալու համար նախավավերացման կարիք չունեք: Եթե չեք ստանում նախավավերացում, թերևս պարտավոր լինեք վճարել հրատապ խնամքի համար, որը ստանում եք արտացանցային մատակարարից Blue Shield Promise-ի սպասարկման տարածքում: Շտապ օգնության, շտապ խնամքի և զգայուն խնամքի ծառայությունների մասին լրացուցիչ տեղեկությունների համար անցեք այս գլխի այդ վերնագրերին:

Նշում՝ Եթե Ամերիկյան հնդկացի եք, կարող եք խնամք ստանալ IHCP-ում մեր



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝

blueshieldca.com/promise/medi-cal:

մատակարարների ցանցից դուրս՝ առանց ուղեգրի:

Եթե օգնության կարիք ունեք արտացանցային ծառայությունների հետ կապված, զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով:

Սպասարկման տարածքից դուրս

Եթե գտնվում եք Blue Shield Promise-ի սպասարկման տարածքից դուրս և Ձեզ անհրաժեշտ է մի խնամք, որը արտակարգ իրավիճակի կամ հրատապ խնամք չէ, անմիջապես զանգահարեք Ձեր PCP-ին: Կամ զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Անդամները, ովքեր Blue Shield Promise-ի սպասարկման տարածքից և (կամ) մատակարարների ցանցից դուրս ունեն ոչ-արտակարգ իրավիճակի կամ ոչ-հրատապ խնամքի կարիք, պետք է ունենան նախավճարացում նախքան ծառայությունը ստանալը: Խնդրում ենք զանգահարել Ձեր PCP-ին կամ Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք:

Շտապ օգնության համար զանգահարեք **911** համարով կամ գնացեք ամենից մոտիկ շտապ օգնության կայանը: Blue Shield Promise-ն ապահովագրում է արտացանցային շտապ օգնությունը: Եթե ճանապարհորդեք Կանադա կամ Մեքսիկա և կարիքը ունենաք հիվանդանոցային բուժում պահանջող արտակարգ իրավիճակի ծառայությունների, Blue Shield Promise-ը կապահովագրի Ձեր խնամքը: Եթե կատարում եք միջազգային ճանապարհորդություն Կանադայից կամ Մեքսիկայից դուրս և կարիքը ունեք արտակարգ իրավիճակի ծառայությունների, շտապ օգնության, կամ որևէ առողջական խնամքի ծառայության, Blue Shield Promise-ը չի ապահովագրի Ձեր խնամքը:

Եթե վճարել եք արտակարգ իրավիճակի ծառայությունների համար, որոնք պահանջում են հիվանդանոցային բուժում Կանադայում կամ Մեքսիկայում, կարող եք խնդրել Blue Shield Promise-ից, որ փոխհատուցի Ձեզ: Blue Shield Promise-ը կքննի Ձեր խնդրանքը:

Եթե Դուք գտնվում եք մեկ այլ նահանգում, ներառյալ ԱՄՆ տարածքները (Ամերիկյան



Ջանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝

blueshieldca.com/promise/medi-cal:

Սամոա, Գուամ, Հյուսիսային Մարիանայի կղզիներ, Պուերտո Ռիկո և ԱՄՆ Վիրջինյան կղզիներ), Դուք ապահովագրված եք շտապ օգնության համար, բայց ոչ բոլոր հիվանդանոցներն ու բժշկներն են ընդունում Medicaid-ը (Medi-Cal-ը -այլ նահանգներում կոչվում է Medicaid): Եթե շտապ օգնության կարիք ունեք Կալիֆորնիայից դուրս, հիվանդանոցին կամ շտապ օգնության կայանի բժշկին տեղեկացրեք, որ ունեք Medi-Cal և Blue Shield Promise-ի անդամ եք որքան հնարավոր է շուտ: Խնդրեք հիվանդանոցին պատճենել Ձեր Blue Shield Promise-ի ճանաչողական քարտը: Ասեք հիվանդանոցին և բժշկներին, որ հաշիվ ներկայացնեն Blue Shield Promise-ին: Եթե հաշիվ եք ստանում մեկ այլ նահանգում ստացած ծառայությունների համար, անմիջապես զանգահարեք Blue Shield Promise-ին: Մենք կաշխատենք հիվանդանոցի և/կամ բժշկի հետ՝ կազմակերպելու, որ Blue Shield Promise-ը վճարի Ձեր խնամքի համար:

Եթե Դուք Կալիֆորնիայից դուրս եք և շտապ անհրաժեշտություն ունեք լրացնելու ամբուլատոր դեղատոմսային դեղերն, ապա խնդրեք դեղատանը զանգահարել Medi-Cal Rx 800-977-2273 համարով օգնության համար:

Նշում՝ Ամերիկյան հնդկացիները կարող են ծառայություններ ստանալ արտացանցային IHCP-ներում:

Եթե հարցեր ունեք արտացանցային կամ սպասարկման տարածքից դուրս խնամքի վերաբերյալ, զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY կամ 711) համարով: Եթե գրասենյակը փակ է, և Դուք օգնություն եք ցանկանում ներկայացուցչից, զանգահարեք Բուժքույրերի խորհրդատվական հեռախոսագիծ օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ տոնական օրերը՝ 1-800-609-4166 (TTY 711) համարով:

Եթե Ձեզ հրատապ խնամք է հարկավոր Blue Shield Promise-ի սպասարկման տարածքից դուրս, գնացեք մոտակա հրատապ խնամքի հաստատությունը: Եթե ճանապարհորդում եք Միացյալ Նահանգներից դուրս և կարիքը ունեք շտապ օգնության, Blue Shield Promise-ը չի ապահովագրի Ձեր խնամքը: Հրատապ խնամքի մասին հավելյալ տեղեկության համար գնացեք այս գլխում ավելի ուշ ներկայացվող «Հրատապ խնամքի» բաժին:



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝

blueshieldca.com/promise/medi-cal:

Լիազորված մոդելով կառավարվող խնամքի ծրագրեր

Blue Shield Promise-ը գործում է մեծ թվով բժիշկների, մասնագետների, հիվանդանոցների և առողջական խնամքի ուրիշ մատակարարների հետ: Մի շարք այսպիսի մատակարարներ գործում են ինչ-որ ցանցի ներսում, որը երբեմն կոչվում է «բժշկական խումբ» կամ «անկախ կիրառման ընկերակցություն» (Independent Practice Association, IPA): Այս մատակարարները կարող են նաև ուղղակի պայմանագիր կնքած լինել Blue Shield Promise-ի հետ:

Ձեր PCP-ն Ձեզ կուղղորդի մասնագետների և ծառայությունների, որոնք կապ ունեն իր բժշկական խմբի, IPA-ի կամ Blue Shield Promise-ի հետ: Եթե արդեն գնում եք մասնագետի մոտ, խոսեք Ձեր PCP-ի հետ կամ զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise Հաճախորդների խնամքը կօգնի, որ այցելեք այդ մատակարարին, եթե իրավասու եք խնամքի շարունակման: Հավելյալ տեղեկության համար անցեք այս տեղեկագրի խնամքի շարունակում բաժինը:

Բժիշկներ

Դուք կընտրեք Ձեր բժշկին որպես առաջնային խնամքի մատակարար (PCP) Blue Shield Promise-ի Մատակարարների հասցեագրից: Ձեր ընտրած բժիշկը պետք է լինի ներգանցային մատակարար: Blue Shield Promise-ի Մատակարարների հասցեագրի պատճենը ստանալու համար զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Կամ այն գտեք առցանց այս կայքում՝ blueshieldca.com/promise/medi-cal:

Եթե ընտրում եք նոր բժշկի, Դուք նույնպես պետք է զանգահարեք՝ համոզվելու համար, որ Ձեր ցանկացած PCP-ն ընդունում է նոր հիվանդներ:

Եթե այցելում էիք մի բժշկի Blue Shield Promise-ի անդամ դառնալուց առաջ, և այդ բժիշկը Blue Shield Promise-ի ցանցի մաս չէ կազմում, թերևս կարողանաք շարունակել այցելել այդ բժշկին սահմանափակ ժամանակով: Սա կոչվում է խնամքի շարունակում: Խնամքի շարունակման վերաբերյալ ավելին կարող եք կարդալ այս տեղեկագրում: Ավելին իմանալու համար զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով:



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսագանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ blueshieldca.com/promise/medi-cal:

Մասնագետի կարիք ունենալու դեպքում, Ձեր PCP-ն Ձեզ ուղեգիր կտա Blue Shield Promise-ի ցանցում գտնվող մասնագետի համար: Մի շարք մասնագետներ ուղեգիր չեն պահանջում: Ուղեգրերի մասին հավելյալ տեղեկության համար գնացեք այս գլխում ավելի ուշ ներկայացվող «Ուղեգրեր» բաժին:

Հիշեք, եթե չընտրեք մի PCP-ի, Blue Shield Promise-ը կընտրի այդպիսին Ձեզ համար, եթե չունեք այլ համապարփակ առողջական ապահովագրություն՝ բացի Medi-Cal-ից: Դուք ամենից լավ գիտեք Ձեր առողջական խնամքի կարիքները, ուստի լավագույնն այն է, որ Դուք կատարեք ընտրությունը: Եթե անդամ եք և՛ Medicare-ի, և՛ Medi-Cal-ի, կամ եթե ունեք այլ առողջական խնամքի ապահովագրություն, պարտավոր չեք PCP ընտրել:

Եթե ցանկանում եք փոխել Ձեր PCP-ն, պարտավոր եք PCP ընտրել Blue Shield Promise-ի Մատակարարների հասցեագրքից: Ստուգեք, վստահ լինելու համար, որ PCP-ն ընդունում է նոր հիվանդներին: Ձեր PCP-ին փոխելու համար զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Կարող եք նաև փոխել ձեր PCP-ին՝ մուտք գործելով Blue Shield Promise-ի կայք:

Հիվանդանոցներ

Արտակարգ իրավիճակի դեպքում զանգահարեք **911** համարով կամ գնացեք մոտակա հիվանդանոցը:

Եթե չկա արտակարգ իրավիճակ և կարիքը ունեք հիվանդանոցային խնամքի, Ձեր PCP-ն կորոշի Ձեր գնալիք հիվանդանոցը: Դուք պետք է գնաք հիվանդանոց, որն օգտագործում է Ձեր PCP-ն և գտնվում է Blue Shield Promise-ի մատակարարների ցանցում: Blue Shield Promise-ի ցանցի հիվանդանոցները նշվել են Մատակարարների հասցեագրքում:

Կանանց առողջության մասնագետներ

Կարող եք կանանց առողջության մասնագետի գնալ Blue Shield Promise-ի ցանցի ներսում՝ ապահովագրված խնամքի համար, որը անհրաժեշտ է կանանց սովորական և կանխարգելիչ առողջական խնամքի ծառայություններ մատուցելու նպատակով: Այս ծառայություններն ստանալու համար Ձեր PCP-ից ուղղորդման կարիքը չկա: Կանանց



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսագանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝

blueshieldca.com/promise/medi-cal:

առողջության մասնագետ գտնելու նպատակով օգնության համար կարող եք զանգահարել Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Կարող եք նաև զանգահարել 24/7 գործող Բուժքույրերի խորհրդատվական հեռախոսագիծ 1-800-609-4166 (TTY 711) համարով:

Մատակարարների հասցեագիրք

Blue Shield Promise-ի Մատակարարների հասցեագիրքը Blue Shield Promise-ի ցանցին մասնակցող մատակարարների ցանկն է: Ցանցը բաղկանում է մի խումբ մատակարարներից, որոնք գործում են Blue Shield Promise-ի հետ:

Blue Shield Promise-ի Մատակարարների հասցեագիրքը ներկայացնում է ցանկը հիվանդանոցների, PCP-ների, մասնագետների, առաջնային խնամք տրամադրող բուժքույրերի, բուժքույր-մանկաբարձների, օգնական բժիշկների, ընտանեկան ծրագրման մատակարարների, Դաշնային որակավորման առողջապահական կենտրոնների (FQHC), ամբուլատոր հոգեկան առողջության մատակարարների, կառավարվող երկարաժամկետ ծառայությունների և աջակցության (MLTSS), Անկախ ծննդաբերության կենտրոնների (Freestanding Birth Centers, FBC), Հնդկացիների առողջական խնամքի մատակարարների (IHCP) և Գյուղական առողջապահական կլինիկաների (RHC):

Մատակարարների հասցեագիրքը պարունակում է Blue Shield Promise-ի ներցանցային մատակարարների անուններ, մասնագիտություններ, հասցեներ, հեռախոսահամարներ, աշխատանքային ժամեր և խոսվող լեզուներ: Այն նշում է, որ արդյո՞ք մատակարարն ընդունում է նոր հիվանդների: Այն նաև նշում է շենքի ֆիզիկական մատչելիության մակարդակը, ինչպես՝ կայանատեղ, թեքահարթակներ, կառչածոդերով աստիճաններ և լայն բացվող դռներով ու կառչածոդերով զուգարաններ: Եթե ցանկանում եք տեղեկություններ իմանալ բժշկի կրթության, վերապատրաստման և հավաստագրման մասին, զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով:

Առցանց Մատակարարների հասցեագիրքը կարող եք գտնել հետևյալ կայքում՝ blueshieldca.com/promise/medi-cal:



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ blueshieldca.com/promise/medi-cal:

Եթե Ձեզ անհրաժեշտ է տպագիր Մատակարարների հասցեագիրք, զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով:

Medi-Cal Rx Դեղատոների հասցեագրքում կարող եք գտնել **Medi-Cal Rx**-ի հետ աշխատող դեղատոների ցանկը հետևյալ հասցեով՝

<https://medi-calrx.dhcs.ca.gov/home/>: Դուք կարող եք նաև գտնել Ձեր մոտակայքում գտնվող դեղատուն՝ զանգահարելով **Medi-Cal Rx 1-800-977-2273** (TTY 800-977-2273 և սեղմեք 7 կամ 711):

Խնամքի մատչելիությունը ժամանակին

Ձեր ներքանցային մատակարարը Ձեզ ժամադրություն պետք է առաջարկի ստորև նշված ժամկետներում:

Երբեմն խնամքի համար ավելի երկար սպասելը խնդիր չէ: Ձեր մատակարարը կարող է երկարացնել Ձեր սպասման ժամանակը, եթե դա չի վնասում Ձեր առողջությանը: Ձեր գրառումներում պետք է նշվի, որ ավելի երկար սպասման ժամանակը վնաս չի պատճառի Ձեր առողջությանը:

Ժամադրության տեսակը	Դուք պետք է ժամադրություն ստանաք հետևյալի համար՝
Հրատապ խնամքի ժամադրություններ, որոնք չեն պահանջում նախաավերացում (նախօրոք լիազորում)	48 ժամ
Հրատապ խնամքի ժամադրություններ, որոնք պահանջում են նախաավերացում (նախօրոք լիազորում)	96 ժամ
Ոչ-հրատապ (սովորական) առաջնային խնամքի ժամադրություններ	10 աշխատանքային օր
Ոչ-հրատապ (սովորական) մասնագետների խնամքի ժամադրություններ	15 աշխատանքային օր



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ blueshieldca.com/promise/medi-cal/:

Ժամադրության տեսակը	Դուք պետք է ժամադրություն ստանաք հետևյալի համար՝
Ոչ-հրատապ (սովորական) հոգեկան առողջության մատակարարի խնամքի (ոչ-բժիշկ) ժամադրություններ	10 աշխատանքային օր
Ոչ-հրատապ (սովորական) հոգեկան առողջության մատակարարի (ոչ-բժիշկ) հետևման խնամքի ժամադրություններ	10 աշխատանքային օր վերջին ժամադրությունից
Ոչ-հրատապ (սովորական) ժամադրություններ՝ օժանդակ (աջակցող) ծառայությունների համար՝ վնասվածքի, հիվանդության կամ ուրիշ առողջական վիճակի ախտորոշման կամ բուժման նպատակով	15 աշխատանքային օր

Ուրիշ սպասման ժամանակի չափանիշներ	Դուք պետք է կարողանաք շփվել այսքան ժամանակում՝
Հաճախորդների խնամքի հեռախոսով սպասման ժամանակը սովորական աշխատանքային ժամերի ընթացքում	10 րոպե
Բուժքույրերի խորհրդատվական հեռախոսագծի համար հեռախոսով սպասման ժամանակը	30 վայրկյան (բուժքրոջ միանալ)

Ուղևորման ժամանակ կամ խնամքից հեռավորություն

Blue Shield Promise-ը պարտավոր է հետևել ուղևորման ժամանակի կամ խնամքից հեռավորության չափանիշներին Ձեր խնամքի համար: Այս չափանիշները օգնում են երաշխավորել, որ խնամքը կարողանում էք ստանալ՝ առանց շատ երկար ուղևորության կամ Ձեր բնակության վայրից շատ հեռու վայրում: Ուղևորման ժամանակի կամ հեռավորության չափանիշները կախված են ըստ Ձեր բնակած վարչաշրջանի:



Ձանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսագանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝

blueshieldca.com/promise/medi-cal:

Եթե Blue Shield Promise-ը չի կարող խնամք մատուցել Ձեզ ուղևորման ժամանակի կամ հեռավորության չափանիշների ծիրում, DHCS-ը կարող է վավերացնի այլընտրական մատչելիության չափանիշ կոչվող մի տարբեր չափանիշ: Այցելեք blueshieldca.com/promise/medi-cal կայքը Blue Shield Promise-ի ժամանակի և հեռավորության չափանիշների համար՝ հիմնված Ձեր բնակության վայրի վրա: Կամ զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով:

Եթե մատակարարի կողմից խնամքի կարիք ունեք, և այդ մատակարարը գտնվում է Ձեր բնակավայրից հեռու, զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Դրանք կարող են օգնել Ձեզ գտնել մոտակայքում գտնվող մատակարարին: Եթե Blue Shield Promise-ը չի կարողանում ավելի մոտիկ մատակարարի մոտ խնամք գտնել Ձեզ համար, կարող եք Blue Shield Promise-ից խնդրել, որ Ձեզ համար փոխադրում դասավորի, որպեսզի գնաք մատակարարի մոտ, նույնիսկ եթե այդ մատակարարը գտնվում է Ձեր բնակության վայրից հեռու: Եթե դեղատների մատակարարների հետ կապված օգնության կարիք ունեք, խնդրում ենք զանգահարել Medi-Cal Rx 800-977-2273 համարով (TTY 800-977-2273 և սեղմեք 7 կամ 711):

Հեռու է համարվում, եթե չեք կարող այդ մատակարարին գնալ Blue Shield Promise-ի՝ Ձեր վարչաշրջանի ուղևորման ժամանակի կամ հեռավորության չափանիշների ծիրում, անկախ որևէ այլընտրական մատչելիության չափանիշից, որը Blue Shield Promise-ը կարող է օգտագործել Ձեր փոստային թվանիշի համար:

Ժամադրություններ

Երբ առողջական խնամքի կարիք ունեք՝

- Զանգահարեք Ձեր PCP-ին
- Զանգահարելիս, պատրաստի ունեցեք Ձեր Blue Shield Promise-ի ճանաչողական համարը
- Գրասենյակը փակ լինելու դեպքում, պատգամ թողեք Ձեր անունով և հեռախոսահամարով



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ blueshieldca.com/promise/medi-cal:

- Ձեր BIC-ը և Blue Shield Promise-ի ճանաչողական քարտը տարեք Ձեր ժամադրություններին
- Անհրաժեշտության դեպքում, Ձեր ժամադրության համար փոխադրում խնդրեք
- Խնդրեք լեզվական օգնություն կամ բանավոր թարգմանչի ծառայություններ Ձեր ժամադրությունից առաջ, որպեսզի ծառայություններն ունենաք Ձեր այցի պահին, ըստ անհրաժեշտության:
- Ժամանակին եղեք Ձեր ժամադրությանը, ժամանելով մի քանի րոպե շուտ՝ մոտք գործելու, ձևաթղթերը լրացնելու և Ձեր PCP-ի ցանկացած հարցի պատասխանելու համար:
- Անմիջապես զանգահարեք, եթե չեք կարող Ձեր ժամադրությունը հարգել կամ ուշանալու եք
- Պատրաստի ունեցեք Ձեր հարցերն ու դեղերին վերաբերող տեղեկությունը՝ դրանց կարիքն առաջանալու դեպքում

Եթե ունեք արտակարգ իրավիճակ, զանգահարեք **911** համարով կամ գնացեք մոտակա շտապ օգնության կայանը:

Ժամադրության վայր հասնելը

Եթե միջոց չունեք հասնելու Ձեր ապահովագրված ծառայություններին և ժամադրություններին և վերադառնալու նրանցից, կարող ենք օգնել կազմակերպել փոխադրումը Ձեզ համար: Այս ծառայությունը, որը կոչվում է բժշկական փոխադրում, արտակարգ իրավիճակների համար **չէ**: Եթե Դուք արտակարգ իրավիճակում եք, զանգահարեք **911**: Բժշկական փոխադրումը հասանելի է ծառայությունների և ժամադրությունների համար, որոնք կապված չեն արտակարգ իրավիճակի ծառայությունների հետ, և թերևս անվճար հասանելի լինեն Ձեզ:

Հավելյալ տեղեկության համար գնացեք «Փոխադրման նպաստներ այն իրավիճակների համար, որոնք արտակարգ իրավիճակներ չեն» բաժին:



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսագանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ blueshieldca.com/promise/medi-cal:

Չեղարկում և հետաձգում

Եթե չեք կարող ներկայանալ Ձեր ժամադրության, անմիջապես զանգահարեք Ձեր մատակարարի գրասենյակ: Բժիշկներից շատերը խնդրում են Ձեզ զանգահարել Ձեր ժամադրությունից 24 ժամ (1 աշխատանքային օր) առաջ, եթե Դուք պետք է չեղարկեք Ձեր ժամադրությունը: Եթե անընդհատ բաց եք թողնում ժամադրությունները, Ձեր բժիշկը կարող է այլևս չցանկանալ Ձեզ ունենալ որպես հիվանդ:

Վճարում

Դուք ոչ մի վճարում **չեք** կատարի ապահովագրված ծառայությունների համար: Հիմնականում, մատակարարից հաշիվ չեք ստանա: Ձեր Blue Shield Promise-ի ճանաչողական քարտը և Ձեր Medi-Cal-ի BIC-ը պարտավոր եք ցույց տալ որևէ առողջական խնամքի ծառայություն կամ դեղատոմսային դեղ ստանալու պահին, որպեսզի Ձեր մատակարարն իմանա, թե ում վճարել: Թերևս ստանաք Նպաստների բացատրություն (Explanation of Benefits, EOB) կամ հաշվեցույց մատակարարից: EOB-ները և հաշվեցույցները հաշիվներ չեն:

Հաշիվ ստանալու դեպքում զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Եթե դեղատոմսերի համար հաշիվ եք ստանում, զանգահարեք Medi-Cal Rx 800-977-2273 (TTY 800-977-2273 և սեղմեք 7 կամ 711): Կամ այցելեք Medi-Cal Rx-ի հետևյալ կայքը՝ <https://medi-calrx.dhcs.ca.gov/home/>: Blue Shield Promise-ին հայտնեք գանձելի գումարը, ծառայության ամսաթիվը և հաշվի դրդապատճառը: Դուք պարտավոր **չեք** մատակարարին վճարել որևէ գումար, որը կազմում է Blue Shield Promise-ի պարտավորությունը որևէ ապահովագրված ծառայության համար: Դուք պարտավոր եք նախավավերացում (նախօրոք լիազորում) ստանալ Blue Shield Promise-ից նախքան այցելելը Blue Shield Promise-ի ցանցում չգտնվող մատակարարի, ներառյալ՝ Blue Shield Promise-ի սպասարկման տարածքը, բացի հետևյալ իրավիճակներից՝



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսագանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ blueshieldca.com/promise/medi-cal:

- Ձեզ անհրաժեշտ են արտակարգ իրավիճակի ծառայություններ, որի դեպքում հավաքեք 911 կամ գնացեք մոտակա հիվանդանոցը
- Կարիք ունեք ընտանիքի ծրագրման ծառայությունների կամ ծառայությունների, որոնք կապ ունեն սեռական ճանապարհով փոխանցվող վարակների հետ, որի դեպքում կարող եք գնալ Medi-Cal-ի որևէ մատակարարի՝ առանց նախավավերացման
- Կարիք ունեք հոգեկան առողջության ծառայությունների, որի դեպքում կարող եք գնալ կա՛մ ներքանցային մատակարարի, կա՛մ վարչաշրջանի հոգեկան առողջության մատակարարի՝ առանց նախավավերացման

Եթե Դուք չեք ստանում նախավավերացում, թերևս պարտավորվեք վճարել արտացանցային մատակարարներից ստացված խնամքի համար: Եթե Ձեզ անհրաժեշտ են ապահովագրված առողջական խնամքի ծառայություններ, թերևս կարողանաք դրանք անվճար ստանալ արտացանցային մատակարարից, պայմանով, որ դրանք լինեն բժշկականորեն անհրաժեշտ, հասանելի չլինեն ցանցի ներսում և նախավավերացված Blue Shield Promise-ի կողմից: Շտապ օգնության, շտապ խնամքի և զգայուն խնամքի ծառայությունների մասին լրացուցիչ տեղեկությունների համար անցեք այս գլխի այդ վերնագրերին:

Եթե հաշիվ ստանաք կամ Ձեզանից խնդրվի վճարել համավճար, երբ կարծում եք, որ չպետք է վճարեք, զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Եթե վճարեք հաշիվը, կարող եք պահանջի ձևաթուղթ ներկայացնել Blue Shield Promise-ին: Պարտավոր եք Blue Shield Promise-ին գրավոր հայտնել, թե ինչու եք հարկադրվել վճարել իրի կամ ծառայության համար: Blue Shield Promise-ը կընթերցի Ձեր պահանջը և կորոշի, որ կարո՞ղ եք հետ ստանալ Ձեր փողը: Հարցերի համար զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով:

Եթե Դուք ծառայություններ եք ստանում Վետերանների գործերի համակարգում կամ չապահովագրված կամ չլիազորված ծառայություններ եք ստացել Կալիֆորնիայից դուրս, Դուք կարող եք պատասխանատու լինել վճարման համար:

Blue Shield Promise-ը Ձեզ հետ չի վճարի, եթե՝



Չանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսագանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝

blueshieldca.com/promise/medi-cal:

- Ծառայությունները չեն ապահովագրվում Medi-Cal-ի կողմից, օրինակ՝ գեղարարական ծառայությունները:
- Դուք ունեք Medi-Cal ծախսերի չբավարարված բաժին:
- Դուք գնացել եք բժշկի մոտ, ով չի ընդունում Medi-Cal, և ստորագրել եք մի ձևաթուղթ, որտեղ նշվում էր, որ այնուամենայնիվ ցանկանում եք հետագոյնում, և որ Դուք ինքներդ կվճարեք ծառայությունների համար:
- Դուք խնդրել եք, որ Ձեզ հետ վճարեն դեղատոմսերի համավճարների համար, որոնք ապահովագրված են Ձեր Medicare Part D ծրագրով:

Ուղեգրեր

Ձեր PCP-ն կամ մի ուրիշ մասնագետ Ձեզ ուղեգիր կտա մասնագետի այցելելու այն ժամանակամիջոցի ընթացքում, որը նշվել է այս տեղեկագրի «Խնամքի մատչելիությունը ժամանակին» բաժնում, եթե Ձեզ անհրաժեշտ է դա: Մասնագետը մի բժիշկ է, ով հավելյալ ուսում է ստացել բժշկության ինչ-որ մարզում: Ձեր PCP-ն Ձեզ հետ կգործի մասնագետի ընտրության համար: Ձեր PCP-ի գրասենյակը կարող է օգնել, որ ժամանակ նշանակեք մասնագետին այցելելու համար:

Ուղեգրի կարիք ունեցող ուրիշ ծառայությունների թվում են՝ գրասենյակում իրականացվող բուժգործողությունները, ռենտգեն պատկերումները, լաբորատորային անալիզները և մասնագետները:

Ձեր PCP-ն թերևս Ձեզ ձևաթուղթ տա մասնագետին տանելու համար: Մասնագետը կլրացնի ձևաթուղթը և հետ կուղարկի Ձեր PCP-ին: Մասնագետը Ձեր կբուժի քանի դեռ կգտնի, որ կարիք ունեք բուժման:

Եթե ունեք երկար ժամանակով հատուկ բժշկական խնամք պահանջող առողջական խնդիր, Ձեզ անհրաժեշտ կլինի մի մշտական ուղեգիր: Սա նշանակում է, որ կարող եք նույն մասնագետին այցելել ավելի երկար ժամանակ՝ առանց նոր ուղեգիր ստանալու:

Եթե դժվարանում եք մշտական ուղեգիր ստանալ կամ ցանկանում եք պատճենը Blue Shield Promise-ի ուղղորդումների քաղաքականության, զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով:



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսագանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝

blueshieldca.com/promise/medi-cal:

Ձեզ ուղեգիր անհրաժեշտ չէ հետևյալի համար՝

- PCP-ի այցերը
- Մանկաբարձության/գինեկոլոգիայի (OB/GYN) այցեր
- Հրատապ և արտակարգ իրավիճակի խնամքի այցեր
- Չափահասի զգայուն ծառայություններ, ինչպես՝ սեռական ոտնձգության խնամքը
- Ընտանիքի ծրագրման ծառայություններ (ավելին իմանալու համար զանգահարեք ընտանիքի ծրագրման տեղեկությունների և ուղղորդման ծառայության գրասենյակ 1-800-942-1054 համարով)
- ՄԻԱՎ-ի ստուգում և խորհրդատվություն (12 տարեկան կամ ավելի տարեց դեռահասներ)
- Սեռական ճանապարհով փոխանցվող վարակիչ ծառայություններ (12 տարեկան կամ ավելի տարեց դեռահասներ)
- Ոսկրահարդարման ծառայություններ (ուղեգիր կարող է պահանջվել, երբ տրամադրում են արտացանցային FQHC-ները, RHC-ները և IHC-ները)
- Հոգեկան առողջության սկզբնական գնահատում
- Հոգեկան առողջության շարունակական թերապիա

Անչափահասները կարող են նաև ստանալ որոշակի հոգեկան առողջության ամբուլատոր ծառայություններ, զգայուն ծառայություններ և թմրամիջոցների օգտագործման խանգարման ծառայություններ՝ առանց ծնողի համաձայնության: Հավելյալ տեղեկությունների համար կարդացեք «Դեռահասների համաձայնությամբ ծառայություններ» և «Թմրանյութի օգտագործման խանգարման բուժման ծառայություններ» այս տեղեկագրքում:

Պատրա՞ստ եք թողնել ծիւելը: Անգլերենի համար զանգահարեք՝ 1-800-300-8086 կամ իսպաներեն՝ 1-800-600-8191 պարզելու համար, թե ինչպես: Կամ այցելեք www.kickitca.org կայքը:



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսագանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ blueshieldca.com/promise/medi-cal:

Նախավավերացում (նախօրոք լիազորում)

Խնամքի մի շարք տեսակների համար Ձեր PCP-ն կամ մատակարարը պարտավոր է Blue Shield Promise -ից արտոնություն խնդրել՝ նախքան խնամքն ստանալը: Սա կոչվում է նախօրոք լիազորում, նախօրոք վավերացում կամ նախավավերացում խնդրել: Սա նշանակում է, որ Blue Shield Promise-ը պետք է վստահ լինի, որ խնամքը բժշկականորեն անհրաժեշտ կամ պետքական է:

Բժշկականորեն անհրաժեշտ ծառայությունները տրամաբանական են և անհրաժեշտ Ձեր կյանքը պաշտպանելու համար, արգելում են Ձեր լուրջ հիվանդ կամ հաշմանդամ դառնալը, կամ մեղմացնում են սաստիկ ցավը՝ ախտորոշված ախտից, հիվանդությունից կամ վնասվածքից: Մինչև 21 տարեկան Անդամների համար Medi-Cal ծառայությունները ներառում են խնամք, որը բժշկականորեն անհրաժեշտ է ֆիզիկական կամ հոգեկան հիվանդությունը կամ վիճակը շտկելու կամ օգնելու համար:

Հետևյալ ծառայությունները միշտ պահանջում են նախավավերացում (նախօրոք լիազորում), նույնիսկ եթե դրանք ստանում եք Blue Shield Promise-ի ներքանցային մատակարարից՝

- Հիվանդանոցային բուժում, եթե արտակարգ իրավիճակ չէ
- Ծառայություններ Blue Shield Promise-ի սպասարկման տարածքից դուրս, եթե ոչ արտակարգ կամ ոչ հրատապ են
- Ամբուլատոր վիրահատություն
- Երկարաժամկետ խնամք կամ հմուտ բուժքույրական ծառայություններ բուժքույրական հաստատությունում
- Մասնագիտացված բուժումներ, պատկերում, ստուգում և բուժգործողություններ
- Բժշկական փոխադրման ծառայություններ, երբ դա արտակարգ իրավիճակ չէ: Շտապ օգնության ծառայությունները չեն պահանջում նախավավերացում:
- Գլխավոր օրգանների փոխպատվաստում



Ձանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսագանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝

blueshieldca.com/promise/medi-cal:

Առողջապահության և անվտանգության օրենսգրքի (Health and Safety Code) 1367.01(h)(1) Բաժնի ներքո, Blue Shield Promise-ը սովորական նախավավերացումները (նախօրոք լիազորումներ) կորոշի 5 աշխատանքային օրվա ընթացքում, երբ Blue Shield Promise-ը ստանա որոշման համար տրամաբանորեն անհրաժեշտ տեղեկությունը:

Խնդրանքների համար, որոնց դեպքում մատակարարը նշում կամ Blue Shield Promise-ը որոշում է, որ տիպական ժամկետին հետևելը կարող է լրջորեն վտանգել Ձեր կյանքը կամ առողջությունը կամ առավելագույն գործառույթ ձեռք բերելու, պահպանելու կամ վերագտնելու կարողությունը, Blue Shield Promise-ը կկայացնի արագացված (արագ) նախավավերացման (նախօրոք լիազորում) որոշում: Blue Shield Promise-ը ծանուցում կտա այնքան արագ՝ ինչքան Ձեր առողջական վիճակը պահանջի և ոչ ավելի ուշ քան 72 ժամից՝ ծառայությունների համար խնդրանքն ստանալուց հետո:

Նախավավերացման (նախօրոք լիազորում)

Խնդրանքները վերանայվում են կլինիկական կամ բժշկական անձնակազմի կողմից, օրինակ բժիշկների, բուժքույրերի և դեղագործների:

Blue Shield Promise-ը չի վճարում վերանայողներին՝ ապահովագրություն կամ ծառայություններ մերժելու համար: Եթե Blue Shield Promise-ը չվավերացնի խնդրանքը, Blue Shield Promise-ը Ձեզ կուղարկի Գործողության ծանուցագրի (NOA) նամակ: NOA նամակը Ձեզ կհայտնի ինչպես բողոք ներկայացնել, եթե համաձայն չլինեք որոշման:

Blue Shield Promise-ը կապ կհաստատի Ձեզ հետ, եթե Blue Shield Promise-ին անհրաժեշտ լինի հավելյալ ժամանակ Ձեր խնդրանքը վերանայելու համար:

Շտապ օգնության համար Ձեզ երբեք նախավավերացում (նախօրոք լիազորում) անհրաժեշտ չի լինի, նույնիսկ արտացանցայինի և սպասարկման տարածքից դրսի դեպքերում: Սա ներառում է երկունքն ու մանկածնությունը, եթե հղի եք: Ձեզ նախավավերացում պետք չէ որոշակի զգայուն խնամքի ծառայությունների համար: Ավելին իմանալու համար զգայուն խնամքի ծառայությունների մասին, գնացեք այս գլխում ավելի ուշ ներկայացվող «Զգայուն խնամք» բաժին:

Նախավավերացման (նախօրոք լիազորման)



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ blueshieldca.com/promise/medi-cal:

հետ կապված հարցերի համար զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով:

Երկրորդ կարծիքներ

Թերևս երկրորդ կարծիք ցանկանաք խնամքի վերաբերյալ, որի համար Ձեր մատակարարը հայտնում է, որ այն անհրաժեշտ է Ձեզ, կամ՝ Ձեր ախտորոշման կամ բուժման ծրագրի վերաբերյալ: Օրինակ, թերևս երկրորդ կարծիք ցանկանաք, եթե վստահ չեք, որ արդյո՞ք Ձեզ անհրաժեշտ է նշանակված բուժում կամ վիրահատություն, կամ եթե փորձել եք հետևել բուժման ծրագրի և այն չի հաջողվել:

Եթե ցանկանում եք ստանալ երկրորդ կարծիք, մենք Ձեզ կուղարկենք ցանցի որակավորված մատակարարի մոտ, որը կարող է Ձեզ երկրորդ կարծիք հայտնել: Մատակարար ընտրելու կապակցությամբ օգնության համար զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով:

Blue Shield Promise-ը կվճարի երկրորդ կարծիքի համար, եթե Դուք կամ Ձեր ցանցի մատակարարը խնդրեք այն և երկրորդ կարծիքն ստանաք ցանցի մատակարարից: Ցանցի մատակարարից երկրորդ կարծիք ստանալու համար Ձեզ անհրաժեշտ չի լինի Blue Shield Promise-ից արտոնություն: Այնուամենայնիվ, եթե Ձեզ ուղեգիր է անհրաժեշտ, Ձեր ցանցի մատակարարը կարող է օգնել Ձեզ ուղեգիր ստանալ երկրորդ կարծիքի համար, եթե դրա կարիքը ունեք:

Եթե Blue Shield Promise-ի ցանցում չկա Ձեզ երկրորդ կարծիք տվող մատակարար, Blue Shield Promise-ը կվճարի արտացանցային մատակարարից երկրորդ կարծիքի համար: Blue Shield Promise-ը Ձեզ 5 օրվա ընթացքում կհայտնի, որ արդյո՞ք երկրորդ կարծիքի համար Ձեր ընտրած մատակարարը վավերացվել է: Եթե ունեք քրոնիկ, ծանր կամ լուրջ հիվանդություն կամ ունեք Ձեր առողջությանը սպառնացող անմիջական և լուրջ վտանգ, ներառյալ, բայց չսահմանափակվելով կյանքի, վերջույթների կամ մարմնի հիմնական մասերի կամ մարմնական գործառույթի կորստով, Blue Shield Promise-ը Ձեզ գրավոր կտեղեկացնի 72 ժամվա ընթացքում:

Եթե Blue Shield Promise-ը մերժի երկրորդ կարծիքի Ձեր խնդրանքը, կարող եք



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսագանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝

blueshieldca.com/promise/medi-cal:

բողոքարկել: Բողոքների մասին ավելին իմանալու համար այցելեք այս տեղեկագրի «Զեկուցում և խնդիրների լուծում» գլխում «Գանգատներ» վերնագիրը:

Զգայուն խնամք

Դեռահասների համաձայնությամբ ծառայություններ

Եթե չեք բոլորել 18 տարին, կարող եք մի շարք ծառայություններ ստանալ առանց ծնողի կամ խնամակալի արտոնության: Այս ծառայությունները կոչվում են դեռահասների համաձայնությամբ ծառայություններ:

Կարող եք հետևյալ ծառայություններն ստանալ առանց ծնողի կամ խնամակալի արտոնության՝

- Սեռական բռնաբարման ծառայություններ, ներառյալ՝ ամբուլատոր հոգեկան առողջության խնամքը
- Հղիություն
- Ընտանիքի ծրագրում և ծննդյան վերահսկում
- Վիժումների ծառայություններ

Եթե 12 տարեկան եք կամ ավելի տարեց, կարող եք նաև ստանալ այս ծառայությունները առանց ծնողի կամ խնամակալի արտոնության՝

- Ամբուլատոր հոգեկան առողջության խնամք հետևյալի համար՝
 - Սեռական ոտնձգություն
 - Արյունապղծություն
 - Ֆիզիկական ոտնձգություն
 - Երեխաների շահագործում
 - Երբ ինքներդ Ձեզ կամ ուրիշներին վնաս հասցնելու մտքեր ունեք
- ՄԻԱՎ/ԶԻԱՀ-ի (HIV/AIDS) կանխարգելում, ստուգում և բուժում
- Սեռական ճանապարհով փոխանցվող վարակների կանխարգելում, ստուգում և բուժում
- Թմրանյութի օգտագործման խանգարման բուժում



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսագանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝

blueshieldca.com/promise/medi-cal:

- Հավելյալ տեղեկությունների համար գնացեք այս տեղեկագրքի «Թմրանյութի օգտագործման խանգարման բուժման ծառայություններ» բաժին:

Հղիության ստուգման, ընտանիքի ծրագրման ծառայությունների, ծննդյան վերահսկման ծառայությունների, կամ սեռական ճանապարհով փոխանցվող վարակների ծառայությունների համար բժշկը կամ հիվանդանոցը պարտադիր չէ, որ մաս կազմի Blue Shield Promise-ի ցանցին: Դուք կարող եք ընտրել Medi-Cal-ի ցանկացած մատակարար և այցելել նրանց այս ծառայությունների համար առանց ուղեգրի կամ նախավավերացման (նախօրոք լիազորման): Մասնագիտացված հոգեկան առողջության ծառայություններ չներկայացնող դեռահասների համաձայնությամբ ծառայությունների համար կարող եք ներցանցային մատակարարի գնալ առանց նախավավերացման: Անհրաժեշտ չէ, որ Ձեր PCP-ն Ձեզ ուղղորդի կամ անհրաժեշտ չէ, որ Դուք նախավավերացում ստանաք Blue Shield Promise-ից՝ այս Անդամի տեղեկագրքի ներքո ապահովագրված դեռահասների համաձայնությամբ ծառայություններ ստանալու համար:

Դեռահասների համաձայնությամբ ծառայությունները, որոնք մասնագիտացված հոգեկան առողջության ծառայություններ են, չեն ապահովագրվում այս Անդամի տեղեկագրքի ներքո: Մասնագիտացված հոգեկան առողջության ծառայությունները ապահովագրվում են վարչաշրջանի հոգեկան առողջության ծրագրի կողմից Ձեր բնակած վարչաշրջանում:

Դեռահասները կարող են իրենց առողջական մտահոգությունների մասին ներկայացուցչի հետ գաղտնի զրուցել՝ զանգահարելով 24/7 Բուժքույրերի խորհրդատվական հեռախոսագիծ, տոնական օրերը ներառյալ, 1-800-609-4166 (TTY 711) համարով:

Blue Shield Promise -ը զգայուն ծառայություններ ստանալու մասին տեղեկություններ չի ուղարկի ծնողների կամ խնամակալների: Խնդրում ենք տեսնել «Օանուցագիր գաղտնի հաղորդակցության խնդրանքների մասին» բաժինը՝ զգայուն ծառայությունների հետ կապված գաղտնի հաղորդակցություններ խնդրելու կերպի վերաբերյալ հավելյալ տեղեկության համար:



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ blueshieldca.com/promise/medi-cal:

Չափահասների զգայուն խնամքի ծառայություններ

Որպես չափահաս (18 տարեկան և ավելի տարեց), թերևս չցանկանաք Ձեր PCP-ին այցելել որոշակի զգայուն կամ գաղտնի խնամքի համար: Այդպիսի դեպքում, կարող եք խնամքի հետևյալ տեսակների համար ընտրել որևէ բժշկի կամ կլինիկա՝

- Ընտանիքի ծրագրում և ծննդյան վերահսկում (ներառյալ ամլացումը՝ 21 տարեկան և ավելի տարեց չափահասների համար)
- Հղիության ստուգում և խորհրդատվություն
- ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ի կանխարգելում և ստուգում
- Սեռական ճանապարհով փոխանցվող վարակների կանխարգելում, ստուգում և բուժում
- Սեռական ունեցման խնամք
- Վիժումների ամբուլատոր ծառայություններ

Պարտադիր չէ, որ բժիշկը կամ կլինիկան մաս կազմի Blue Shield Promise-ի ցանցին:

Դուք կարող եք ընտրել Medi-Cal-ի որևէ մատակարար և այցելել նրան այս ծառայությունների համար առանց ուղեգրի կամ նախավավերացման (նախօրոք լիազորման): Արտացանցային մատակարարի ծառայությունները, որոնք կապված չեն զգայուն խնամքի հետ, չեն կարող ապահովագրվել: Այս ծառայությունները մատուցող բժշկի կամ կլինիկա գտնելու կամ այս ծառայություններն (ներառյալ փոխադրումը) ստանալու նպատակով օգնության համար կարող եք զանգահարել

Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով Կարող եք նաև զանգահարել 24/7 գործող Բուժքույրերի խորհրդատվական հեռախոսագիծ, տոնական օրերը ներառյալ, 1-800-609-4166 (TTY 711) համարով:

Blue Shield Promise -ը զգայուն ծառայություններ ստանալու մասին տեղեկություններ չի ուղարկի ընտանիքի ուրիշ անդամների: Խնդրում ենք տեսնել «Ծանուցագիր գաղտնի հաղորդակցության խնդրանքների մասին» բաժինը՝ զգայուն ծառայությունների հետ կապված գաղտնի հաղորդակցություններ խնդրելու կերպի վերաբերյալ հավելյալ տեղեկության համար:



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝

blueshieldca.com/promise/medi-cal:

Բարոյական առարկություն

Մի շարք մատակարարներ բարոյական առարկություն ունեն մի շարք ապահովագրված ծառայությունների նկատմամբ: Սա նշանակում է, որ նրանք իրավունք ունեն **չմատուցելու** մի շարք ապահովագրված ծառայություններ, եթե բարոյապես համաձայն չեն ծառայությունների հետ: Եթե Ձեր մատակարարն ունի բարոյական առարկություն, նա Ձեզ կօգնի անհրաժեշտ ծառայությունների համար գտնել մի ուրիշ մատակարար: Blue Shield Promise-ը ևս կարող է Ձեզ հետ գործել մատակարար գտնելու համար:

Որոշ հիվանդանոցներ և այլ մատակարարներ չեն տրամադրում հետևյալ ծառայություններից մեկը կամ մի քանիսը, որոնք կարող են ապահովագրվել ձեր ծրագրի պայմանագրով, և որոնք կարող են անհրաժեշտ լինել Ձեզ կամ ընտանիքի անդամներից մեկին՝

- Ընտանիքի ծրագրում
- Հակաբեղմնավորման ծառայություններ, ներառյալ՝ շտապ հակաբեղմնավորումը
- Ամլացումը, ներառյալ՝ երկունքի և ծննդաբերության ժամանակ արգանդափողի կապումը
- Անպտղության բուժումները
- Վիժումը:

Հավելյալ տեղեկություն պետք է ձեռք բերեք անդամագրվելուց առաջ: Ձանգահարեք Ձեր ապագա բժշկին, բժշկական խմբին, անկախ գործառույթյան ընկերակցության կամ կլինիկային կամ զանգահարեք Blue Shield Promise-ին 1-800-605-2556 (TTY 711) համարով՝ համոզվելու, որ Դուք կարող եք ստանալ Ձեզ անհրաժեշտ առողջական խնամքի ծառայությունները:

Այս ծառայությունները մատչելի են և Blue Shield Promise-ը պետք է ապահովի, որ Դուք կամ Ձեր ընտանիքի անդամը հանդիպեք մատակարարի հետ կամ ընդունվեք հիվանդանոց, որը կկատարի ապահովագրված ծառայությունները: Ձանգահարեք Blue Shield Promise-ին 1-800-605-2556 (TTY 711) համարով, եթե հարցեր կամ օգնության կարիք ունեք մատակարար գտնելու հարցում:



Ձանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսագանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝

blueshieldca.com/promise/medi-cal:

Հրատապ խնամք

Հրատապ խնամքը արտակարգ իրավիճակի կամ կյանքին սպառնացող բնույթի վիճակի համար չէ։ Այն ծառայությունների համար է, որոնք Ձեզ անհրաժեշտ են հանկարծահաս հիվանդությունից, վնասվածքից կամ դեռևս Ձեր ունեցած վիճակի բարդացումից Ձեր առողջության հասնելիք լուրջ վնասի կանխարգելման համար։ Հրատապ խնամքի ժամադրություններից մեծ մասը, որոնք նախազգուշացման (նախօրոք լիազորում) կարիք չունեն, հասանելի են Ձեր ժամադրության խնդրանքից 48 ժամվա ընթացքում։ Եթե Ձեզ անհրաժեշտ հրատապ խնամքի ծառայությունները պահանջում են նախազգուշացում, Ձեզ կառաջարկվի ժամադրություն՝ Ձեր խնդրանքից 96 ժամվա ընթացքում։

Հրատապ խնամքի համար զանգահարեք Ձեր PCP-ին։ Եթե չեք կարող հասնել Ձեր PCP-ին, զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով։ Կամ կարող եք Բուժքույրերի խորհրդատվական հեռախոսագիծ զանգահարել օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ տոնական օրերը, 1-800-609-4166 (TTY 711) համարով՝ իմանալու Ձեզ համար լավագույն խնամքի մակարդակի մասին։

Եթե Ձեզ հրատապ խնամք է հարկավոր տարածքից դուրս, գնացեք մոտակա հրատապ խնամքի հաստատությունը։

Հրատապ խնամքի կարիքները կարող են լինել՝

- Մրսածություն
- Կոկորդի ցավ
- Տենդ
- Ականջացավ
- Ձգված մկան
- Մայրության ծառայություններ

Հրատապ խնամքի ծառայությունները պետք է ստանաք ներցանցային մատակարարից, երբ գտնվում եք Blue Shield Promise-ի սպասարկման տարածքում։ Blue Shield Promise-ի սպասարկման տարածքում գտնվող ներցանցային



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով։ Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00։ Հեռախոսագանգն անվճար է։ Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով։ Այցելեք առցանց այս հասցեով՝

blueshieldca.com/promise/medi-cal:

մատակարարներից հրատապ խնամք ստանալու համար պետք չունեք նախավճարեցման (նախօրոք լիազորման): Եթե գտնվում եք Blue Shield Promise-ի սպասարկման տարածքից դուրս, բայց Միացյալ Նահանգներում, հրատապ խնամք ստանալու համար պետք չունեք նախավճարեցման: Գնացեք մոտակա հրատապ խնամքի հաստատություն: Medi-Cal-ը չի ապահովագրում հրատապ խնամքի ծառայությունները Միացյալ Նահանգներից դուրս: Եթե ճանապարհորդում եք Միացյալ Նահանգներից դուրս և կարիքը ունեք շտապ օգնության, մենք չենք ապահովագրի Ձեր խնամքը:

Եթե հոգեկան առողջությանը հրատապ խնամքի կարիք ունեք, զանգահարեք Ձեր վարչաշրջանի հոգեկան առողջության ծրագրին կամ Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Դուք կարող եք զանգահարել Ձեր վարչաշրջանի հոգեկան առողջության ծրագրին կամ Ձեր Blue Shield Promise-ի Վարքագծային առողջության կազմակերպությանը (Behavioral Health Organization) ցանկացած ժամանակ, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Բոլոր վարչաշրջանների անվճար հեռախոսահամարները առցանց գտնելու համար այցելեք հետևյալ կայքը՝ <http://www.dhcs.ca.gov/individuals/Pages/MHPContactList.aspx>:

Ձեր հրատապ խնամքի մատակարարը թերևս Ձեզ դեղ տա Ձեր հրատապ խնամքի այցի ծիրում: Ձեր այցի ծիրում դեղեր ստանալու դեպքում, Blue Shield Promise-ը կապահովագրի դեղերը Ձեր ապահովագրված հրատապ խնամքի ծիրում: Եթե Ձեր հրատապ խնամքի մատակարարը Ձեզ դեղատոմս տանելու համար դեղատոմս է տալիս, Medi-Cal Rx ծրագիրը կապահովագրի դեղերը: Ավելին իմանալու համար Medi-Cal Rx-ի մասին, դիմեք «Դեղատոմսային դեղեր, որոնք ապահովագրված են Medi-Cal Rx-ի կողմից» խորագրին «Medi-Cal-ի ուրիշ ծրագրեր և ծառայություններ» բաժնում 4-րդ Գլխի մեջ:

Շտապ օգնություն

Շտապ օգնության համար զանգահարեք **911** համարով կամ գնացեք ամենից մոտիկ շտապ օգնության կայանը (Emergency Room, ER): Կայանը: Շտապ օգնության համար Ձեզ Blue Shield Promise-ից նախավճարեցում (նախօրոք լիազորում) անհրաժեշտ չի լինի:



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ blueshieldca.com/promise/medi-cal:

Միացյալ Նահանգների ներսում, ներառյալ՝ ԱՄՆ տարածքները, իրավունք ունեք օգտվելու որևէ հիվանդանոցից կամ շտապ օգնության դրվածքից:

ԱՄՆ-ից դուրս, ապահովագրվում են միայն այն արտակարգ իրավիճակի ծառայությունները, որոնք հիվանդանոցային բուժում են պահանջում Կանադայում և Մեքսիկայում: Այլ երկրներում շտապ օգնությունը և այլ խնամքը ապահովագրված չեն:

Շտապ օգնությունը կյանքին սպառնացող բժշկական վիճակների համար է: Այս խնամքը սահմանված է հիվանդության կամ վնասվածքի, որի համար առողջապահության և բժշկության մասին միջին գիտելիքների տեր շրջահայաց (տրամաբանող) պարզ անձը (ոչ առողջական խնամքի մասնագետը) կարող է սպասել, որ խնամքը անմիջապես չստանալու դեպքում, դուք լուրջ վտանգի տակ կդնեիք Ձեր առողջությունը (կամ Ձեր չծնված երեխայի առողջությունը), կամ Ձեր մարմնին, մարմնի գործառնություններին, մարմնի օրգաններին կամ մարմնի մասերին լուրջ վնաս կհասցնեք: Օրինակները ընդգրկում են, առանց դրանցով սահմանափակվելու՝

- Ակտիվ երկունք
- Ոսկրի կոտրվածք
- Սաստիկ ցավը
- Կրծքավանդակի ցավ
- Շնչառության խանգարում
- Սաստիկ այրվածք
- Չափից մեծ դեղաչափ
- Ուշաթափություն
- Սաստիկ արյունահոսություն
- Հոգեբուժական արտակարգ իրավիճակի վիճակներ, ինչպես՝ սաստիկ ընկճվածությունը կամ ինքնասպանական մտքերը (կարող են ապահովագրված լինել վարչաշրջանի հոգեկան առողջության ծրագրերով)

Մի գնացեք շտապ օգնության սենյակ (ER) սովորական խնամքի կամ խնամքի համար, որն անհապաղ անհրաժեշտ չէ: Սովորական խնամքը պետք է ստանաք Ձեր PCP-ից, ով լավագույնս ճանաչում է Ձեզ: Եթե կասկածներ ունեք արտակարգ իրավիճակի վերաբերյալ, զանգահարեք Ձեր PCP-ին: Կարող եք նաև զանգահարել 24/7 գործող



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝

blueshieldca.com/promise/medi-cal:

Բուժքույրերի խորհրդատվական հեռախոսագիծ, տոնական օրերը ներառյալ,
1-800-609-4166 (TTY 711) համարով:

Եթե շտապ օգնության կարիք ունեք տնից հեռու գտնվելիս, գնացեք մոտակա շտապ օգնության կայանը (ER), նույնիսկ եթե այն չի գտնվում Blue Shield Promise-ի ցանցում: ER գնալու դեպքում նրանցից խնդրեք զանգահարել Blue Shield Promise: Դուք կամ Ձեզ ընդունած հիվանդանոցը պարտավոր եք Blue Shield Promise զանգահարել շտապ օգնության ստացման հաջորդող 24 ժամվա ընթացքում: Եթե ճանապարհորդվում եք ԱՄՆ-ից դուրս, բացի Կանադայից կամ Մեքսիկայից, և Ձեզ շտապ օգնություն է հարկավոր, Blue Shield Promise-ը չի ապահովագրի Ձեր խնամքը:

Արտակարգ իրավիճակի փոխադրության կարիքի դեպքում զանգահարեք **911** համարով: Պարտավոր չեք նախ Ձեր PCP-ին կամ Blue Shield Promise-ին դիմել ER գնալուց առաջ:

Եթե Ձեր արտակարգ իրավիճակից հետո խնամքի կարիք ունեք արտացանցային հիվանդանոցում (հետ-կայունացման խնամք), հիվանդանոցը կզանգահարի Blue Shield Promise:

Հիշեք՝ Մի զանգահարեք **911** համարով, եթե չկա արտակարգ իրավիճակ: Շտապ օգնությունն ստացեք միայն արտակարգ իրավիճակի, ոչ թե սովորական խնամքի կամ հարբուխի կամ կոկորդի ցավի նման երկրորդական հիվանդությունների համար: Եթե կա արտակարգ իրավիճակ, զանգահարեք **911** համարով կամ գնացեք մոտակա շտապ օգնության կայանը:

Blue Shield Promise-ի Բուժքույրերի խորհրդատվական հեռախոսագիծը Ձեզ անվճար բժշկական տեղեկություններ և խորհրդատվություն է տալիս օրը 24 ժամ, տարվա ամեն օր: Զանգահարեք 1-800-609-4166 (TTY 711) համարով:



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսագանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝

blueshieldca.com/promise/medi-cal:

Բուժքույրերի խորհրդատվական հեռախոսագիծ

Blue Shield Promise-ի Բուժքույրերի խորհրդատվական հեռախոսագիծը Ձեզ անվճար բժշկական տեղեկություններ և խորհրդատվություն է տալիս օրը 24 ժամ, տարվա ամեն օր: Զանգահարեք 1-800-609-4166 (TTY 711) համարով՝

- Խոսելու բուժքրոջ հետ, ով կպատասխանի բժշկական հարցերին, խորհուրդ կտա խնամքի համար և կօգնի Ձեզ որոշել, թե արդյոք Դուք պետք է անմիջապես այցելեք մատակարարի
- Օգնություն ստանալու բժշկական պայմանների, ինչպիսիք են շաքարախտը կամ հեղձուկը (ասթմա), ներառյալ խորհուրդներ այն մասին, թե ինչպիսի մատակարար կարող է հարմար լինել Ձեր վիճակի համար

Բուժքույրերի խորհրդատվական հեռախոսագիծը **չի կարող** օգնել կլինիկայում ժամադրությունների կամ դեղերի լրացումների հարցում: Զանգահարեք Ձեր մատակարարի գրասենյակ, եթե դրա հետ կապված օգնության կարիք ունեք:

Բուժքույրը անվճար կօգնի Ձեզ Ձեր լեզվով: Ձեր Բուժքույրերի խորհրդատվական հեռախոսագծի համարը նշվել է Ձեր առողջապահական ծրագրի ճանաչողական քարտի վրա:

Նախօրոք հրահանգներ

Առողջության նախօրոք հրահանգը օրինական ձևաթուղթ է: Ձևաթղթում կարող եք նշել, թե ինչպիսի առողջական խնամք եք ցանկանում՝ հետագայում խոսելու կամ որոշումներ կայացնելու անկարողության դեպքում: Կարող եք թվարկել, թե ինչպիսի խնամք **չեք** ցանկանում: Կարող եք նշանակել մեկին, ինչպես՝ կողակցին, որպեսզի Ձեր առողջական խնամքի համար որոշումներ կայացնի, երբ Դուք չեք կարող:



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսագանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝

blueshieldca.com/promise/medi-cal:

Նախօրոք հրահանգի ձևաթուղթը կարող եք ստանալ դեղատներից, հիվանդանոցներից, իրավաբանական գրասենյակներից և բժշկների գրասենյակներից: Թերևս հարկադրվեք վճարել ձևաթղթի համար: Կարող եք նաև անվճար ձևաթուղթ գտնել առցանց և ներբեռնել այն: Կարող եք Ձեր ընտանիքի անդամից, PCP-ից, կամ վստահելի անձից խնդրել, որ Ձեզ օգնի ձևաթուղթը լրացնելու համար:

Իրավունք ունեք պահանջելու, որ Ձեր նախօրոք հրահանգը տեղադրեն Ձեր բժշկական արձանագրություններում: Իրավունք ունեք Ձեր նախօրոք հրահանգը փոխելու կամ ջնջելու որևէ ժամանակ:

Իրավունք ունեք իմանալու նախօրոք հրահանգի օրենքների փոփոխության մասին: Blue Shield Promise-ը Ձեզ կտեղեկացնի նահանգային օրենքի փոփոխությունների մասին փոփոխությանը հաջորդող 90 օրվա ընթացքում:

Հավելյալ տեղեկության համար կարող եք զանգահարել Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 համարով:

Օրգանի և հյուսվածքի նվիրում

Դուք կարող եք օգնել կյանքեր փրկելու գործին՝ դառնալով օրգանի կամ հյուսվածքի նվիրատու: Եթե 15-ից 18 տարեկան եք, կարող եք նվիրատու դառնալ Ձեր ծնողի կամ խնամակալի գրավոր համաձայնությամբ: Կարող եք Ձեր միտքը որևէ ժամանակ փոխել օրգանի նվիրատու լինելու վերաբերյալ: Եթե ցանկանում եք ավելին իմանալ օրգանի և հյուսվածքի նվիրման վերաբերյալ, խոսեք Ձեր PCP-ի հետ: Կարող եք նաև այցելել Միացյալ Նահանգների Առողջապահության և մարդու ծառայությունների նախարարության (Department of Health and Human Services) կայքը՝ www.organdonor.gov:



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսագանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ blueshieldca.com/promise/medi-cal:

4. Նպաստներ և ծառայություններ

Ինչ է ապահովագրում Ձեր առողջապահական ծրագիրը

Այս գլուխը բացատրում է որպես Blue Shield Promise-ի անդամ Ձեր ապահովագրված ծառայությունները: Ձեր ապահովագրված ծառայություններն անվճար են պայմանով, որ բժշկականորեն անհրաժեշտ լինեն և մատուցվեն ցանցի մատակարարի կողմից: Դուք պետք է նախավավերացում (նախօրոք լիազորում) խնդրեք, եթե խնամքը արտացանցային է, բացառությամբ որոշակի զգայուն ծառայությունների և շտապ օգնության: Ձեր առողջապահական խնամքը թերևս ապահովագրի արտացանցային մատակարարի բժշկականորեն անհրաժեշտ ծառայությունները: Բայց դրա համար Դուք նախավավերացում (նախօրոք լիազորում) պետք է խնդրեք Blue Shield Promise-ից: Բժշկականորեն անհրաժեշտ ծառայությունները տրամաբանական են և անհրաժեշտ են Ձեր կյանքը պաշտպանելու համար, արգելում են Ձեր լուրջ հիվանդ կամ հաշմանդամ դառնալը, կամ մեղմացնում են սաստիկ ցավը՝ ախտորոշված ախտից, հիվանդությունից կամ վնասվածքից: Մինչև 21 տարեկան Անդամների համար Medi-Cal ծառայությունները ներառում են խնամք, որը բժշկական տեսանկյունից անհրաժեշտ է ֆիզիկական կամ հոգեկան հիվանդությունը կամ վիճակը շտկելու կամ դրան օգնելու համար: Ձեր ապահովագրված ծառայությունների վերաբերյալ ավելի շատ մանրամասների համար զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով:

Մինչև 21 տարեկան անդամները ստանում են լրացուցիչ նպաստներ և ծառայություններ: Կարդացեք 5-րդ Գլուխը՝ «Երեխաները և երիտասարդների խնամքը»՝ լրացուցիչ տեղեկությունների համար:

Blue Shield Promise-ի առաջարկված հիմնական առողջապահական նպաստներից մի քանիսը թվարկված են ստորև: Աստղով (*) նշված նպաստները կարող են նախավավերացման կարիք ունենալ:



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝

blueshieldca.com/promise/medi-cal:

- Ասեղնաբուծություն*
- Սուր (կարճաժամկետ բուժում) տնային* առողջապահական թերապիա և ծառայություններ
- Չափահասի անընկալացումներ (սրսկումներ)
- Ալերգիայի ստուգում և ներարկումներ *
- Շտապ օգնության ծառայություններ արտակարգ իրավիճակների համար
- Զգայազրկողի ծառայություններ
- Հեղձուկի (ասթմա) կանխարգելում
- Լսաբանություն*
- Վարքագծային առողջության բուժումներ*
- Կենսանշիչների ստուգում
- Սրտի վերականգնում*
- Ոսկրահարդարման ծառայություններ*
- Քիմիաբուծում և ճառագայթաբուծում*
- Ճանաչողական առողջության գնահատումներ
- Համայնքային առողջապահության աշխատողների ծառայություններ
- Ատամնաբուժական ծառայություններ՝ սահմանափակ (կատարվում է բժշկական մասնագետի/PCP-ի կողմից բժշկական գրասենյակում) *
- Դիալիզի/արյան դիալիզի ծառայություններ
- Doula (երկունքի աջակցության ծառայություններ)
- Տեսական օգտագործման բժշկական սարքեր (DME)*
- Զույգ (մոր և նորածնի) խնամքի ծառայություններ
- Շտապ օգնության կայանի այցեր
- Աղիքային և արտաղիքային սնուցում*
- Ընտանիքի ծրագրման գրասենյակային այցեր և խորհրդատվություն (կարող եք այցելել ոչ-մասնակից մատակարարին)
- Ընտանեկան թերապիա
- Վերականգնողական ծառայություններ և սարքեր*
- Լսողական սարքեր*
- Տանը մատուցվող առողջական խնամք*
- Անբուժելի հիվանդների խնամք*
- Ստացիոնար բժշկական և վիրաբուժական խնամք*
- Լաբորատորիա և ռադիոլոգիա*
- Երկարատև տնային առողջության բուժում և ծառայություններ*
- Մայրության և նորածնի խնամք
- Հիմնական օրգանի փոխապատվաստում*



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝

blueshieldca.com/promise/medi-cal:

- Աշխատանքային թերապիա*
- Օրթեզ/պրոթեզ*
- Օստոմիա և միզական պաշարներ*
- Հիվանդանոցային ամբուլատոր ծառայություններ*
- Հոգեկան առողջության ամբուլատոր ծառայություններ
- Ամբուլատոր վիրահատություն*
- Ցավամոքիչ խնամք*
- PCP-ի այցերը
- Մանկաբուժական ծառայություններ*
- Ֆիզիկական թերապիա*
- Ոսկրաբուժական ծառայություններ*
- Թոքի վերականգնում*
- Ամբողջ գենոմի արագ հաջորդականացում
- Վերականգնողական ծառայություններ և սարքեր*
- Հմուտ բուժքույրական ծառայություններ
- Մասնագետների այցեր
- Խոսքի թերապիա*
- Վիրաբուժական ծառայություններ*
- Հեռավար բժշկություն/Հեռավար առողջապահություն
- Սեռափոխության ծառայություններ*
- Հրատապ խնամք
- Տեսողական ծառայություններ*
- Կանանց առողջության ծառայություններ

Ապահովագրված ծառայությունների սահմանումները և նկարագրությունները կարելի է գտնել 8-րդ գլխում՝ «Կարևոր համարներ և բառեր, որոնք պետք է իմանալ»:



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ blueshieldca.com/promise/medi-cal:

Բժշկականորեն անհրաժեշտ ծառայությունները տրամաբանական են և անհրաժեշտ են Ձեր կյանքը պաշտպանելու համար, արգելում են Ձեր լուրջ հիվանդ կամ հաշմանդամ դառնալը, կամ մեղմացնում են սաստիկ ցավը՝ ախտորոշված ախտից, հիվանդությունից կամ վնասվածքից:

Բժշկականորեն անհրաժեշտ ծառայությունները ներառում են այն ծառայությունները, որոնք անհրաժեշտ են տարիքին համապատասխան աճի և զարգացման կամ գործառույթային կարողությունները ձեռք բերելու, պահպանելու կամ վերականգնելու համար:

Մինչև 21 տարեկան անդամների համար ծառայությունը բժշկականորեն անհրաժեշտ է, եթե անհրաժեշտ է շտկել կամ բարելավել թերությունները, ֆիզիկական և մտավոր հիվանդությունները կամ վիճակները դաշնային Վադ և պարբերական զննման, ախտորոշման և բուժման (**Early and Periodic Screening, Diagnostic and Treatment, EPSDT**) նպաստի շրջանակներում: Սա ներառում է խնամք, որն անհրաժեշտ է շտկելու կամ օգնելու թեթևացնել ֆիզիկական կամ հոգեկան հիվանդությունը կամ վիճակը կամ պահպանել անդամի վիճակը, որպեսզի այն չվատթարանա:

Բժշկականորեն անհրաժեշտ ծառայությունները չեն ներառում՝

- Բուժումներ, որոնք չեն փորձարկվել կամ դեռ փորձարկվում են
- Ծառայություններ կամ ապրանքներ, որոնք ընդհանուր առմամբ ընդունված չեն որպես արդյունավետ
- Ծառայություններ, որոնք դուրս են բնականոն ընթացքից և բուժման տևողությունից կամ ծառայություններ, որոնք չունեն կլինիկական ուղեցույցներ
- Ծառայություններ խնամողի կամ մատակարարի հարմարության համար

Blue Shield Promise-ը կհամակարգի այլ ծրագրերի հետ՝ ապահովելու, որ Դուք ստանաք բոլոր բժշկականորեն անհրաժեշտ ծառայությունները, նույնիսկ եթե այդ ծառայությունները ապահովագրված են մեկ այլ ծրագրով, այլ ոչ թե Blue Shield Promise-ով:



Ձանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսազանգ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝

blueshieldca.com/promise/medi-cal:

Բժշկականորեն անհրաժեշտ ծառայությունները ներառում են ապահովագրված ծառայություններ, որոնք ողջամիտ և անհրաժեշտ են հետևյալի համար՝

- Կյանքը պաշտպանելու
- Լուրջ հիվանդությունների կամ նշանակալի հաշմանդամության կանխարգելում
- Սաստիկ ցավը մեղմացնելու
- Տարիքին համապատասխան աճ և զարգացում ձեռք բերելու
- Գործառույթային կարողություններ ձեռք բերելու, պահպանելու և վերականգնելու

Մինչև 21 տարեկան Անդամների համար բժշկականորեն անհրաժեշտ ծառայությունները ներառում են վերը նշված բոլոր ապահովագրված ծառայությունները, ինչպես նաև ցանկացած այլ անհրաժեշտ առողջական խնամք, ախտորոշիչ ծառայություններ, բուժում և այլ միջոցներ՝ թերությունները, ֆիզիկական և հոգեկան հիվանդություններն ու վիճակները ուղղելու կամ շտկելու համար, ինչպես պահանջվում է դաշնային վաղ և պարբերաբար գնման, ախտորոշման և բուժման (EPSDT) նպաստի շրջանակներում:

EPSDT-ն տրամադրում է կանխարգելման, ախտորոշման և բուժման ծառայությունների լայն շրջանակ ցածր եկամուտ ունեցող նորածինների, երեխաների և մինչև 21 տարեկան դեռահասների համար: EPSDT-ի նպաստն ավելի ապահով է, քան մեծահասակների նպաստը և նախատեսված է երեխաների հիվանդությունների վաղ հայտնաբերում և խնամք ապահովելու համար, որպեսզի առողջական խնդիրները հնարավորինս շուտ կանխվեն կամ ախտորոշվեն և բուժվեն: EPSDT-ի նպատակն է երաշխավորել, որ առանձին երեխաներ ստանան իրենց անհրաժեշտ առողջական խնամքը, երբ դրա կարիքն ունեն. ճիշտ խնամքը ճիշտ երախայի համար ճիշտ ժամանակին ճիշտ դրվածքում:

Blue Shield Promise-ը կհամակարգի այլ ծրագրերի հետ՝ ապահովելու, որ Դուք ստանաք բոլոր բժշկականորեն անհրաժեշտ ծառայությունները, նույնիսկ եթե այդ ծառայությունները ապահովագրված են մեկ այլ ծրագրով, այլ ոչ թե Blue Shield Promise-ով:



Ձանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ blueshieldca.com/promise/medi-cal:

Medi-Cal նպաստները, որոնք ապահովագրված են Blue Shield Promise-ի կողմից

Զգիշերող հիվանդի (ամբուլատոր) ծառայություններ

Չափահասի անընկալացումներ

Չափահասի անընկալացումներ (սրսկումներ) կարող եք ստանալ ցանցի մատակարարից առանց նախավավերացման (նախօրոք լիազորում): Blue Shield Promise-ն ապահովագրում է սրսկումները, որոնք հանձնարարվել են Հիվանդությունների կառավարման և կանխարգելման կենտրոնների (Centers for Disease Control and Prevention, CDC) Անընկալացման կիրառության խորհրդատու հանձնաժողովի (Advisory Committee on Immunization Practices, ACIP) կողմից, ներառյալ այն սրսկումները, որոնք անհրաժեշտ են ճանապարհորդելիս:

Դուք կարող եք նաև Չափահասի անընկալացումների (սրսկումներ) ծառայություններ ստանալ դեղատանը Medi-Cal Rx-ի միջոցով: Medi-Cal Rx ծրագրի մասին ավելին իմանալու համար կարդացեք այս գլխի «Medi-Cal-ի ուրիշ ծրագրեր և ծառայություններ» բաժինը:

Ալերգիայի խնամք

Blue Shield Promise-ն ապահովագրում է ալերգիայի ստուգումը և բուժումը, ներառյալ՝ ալերգիայի ապագգայացումը, գերզգայացումը կամ իմունոթերապիան:

Զգայազրկողի ծառայություններ

Blue Shield Promise-ն ապահովագրում է զգայազրկման ծառայությունները, որոնք բժշկականորեն անհրաժեշտ են ամբուլատոր խնամք ստանալիս: Մա կարող եք ներառել անզգայացումը ատամնաբուժական բուժօրոժողությունների համար, որոնք կարող են նախավավերացում (նախօրոք լիազորում) պահանջել, երբ մատուցվում են զգայազրկման մասնագետի կողմից:



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսագանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ blueshieldca.com/promise/medi-cal:

Ոսկրահարդարման ծառայություններ

Blue Shield Promise-ն ապահովագրում է ոսկրահարդարման ծառայությունները, այն սահմանափակելով ձեռքով ուղղելու միջոցով ողնաշարի բուժմամբ:

Ոսկրահարդարման ծառայությունները սահմանափակվում են ամսական երկու ծառայություններով (սահմանափակումները չեն տարածվում մինչև 21 տարեկան երեխաների վրա): Blue Shield Promise-ը կարող է նախավավերացնել ուրիշ ծառայություններ որպես բժշկականորեն անհրաժեշտ:

Հետևյալ անդամներն իրավասու են ոսկրահարդարման ծառայությունների՝

- Մինչև 21 տարեկան երեխաներ
- Հղի անձինք՝ մինչև հղիության ավարտին հաջորդող 60 օր ընդգրկող ամսվա վերջը
- Հմուտ բուժքույրական հաստատության, միջանկյալ խնամքի հաստատության կամ ենթասուր խնամքի հաստատության բնակիչները
- Բոլոր անդամները, երբ ծառայություններ են մատուցվում վարչաշրջանային հիվանդանոցների ամբուլատոր բաժանմունքներում, ամբուլատոր կլինիկաներում, FQHC-ներում կամ RHC-ներում, որոնք գտնվում են Blue Shield Promise-ի ցանցի ներսում: Ոչ բոլոր FQHC-ները, RHC-ները կամ վարչաշրջանային հիվանդանոցներն են առաջարկում ամբուլատոր ոսկրահարդարման ծառայություններ:

Ճանաչողական առողջության գնահատումներ

Blue Shield Promise-ն ապահովագրում է Ճանաչողական առողջության տարեկան համառոտ գնահատումն այն անդամների համար, ովքեր 65 տարեկան կամ ավելի տարեց են, և այլ կերպ իրավասու չեն նմանատիպ գնահատման՝ որպես իրենց տարեկան առողջության այցի մաս Medicare ծրագրի ներքո: Ճանաչողական առողջության գնահատում կարող է հայտնաբերել Ալցհեյմերի հիվանդության կամ մտաթուլության (դեմենցիա) նշաններ:



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսագանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ blueshieldca.com/promise/medi-cal:

Համայնքային առողջապահության աշխատողների ծառայություններ

Blue Shield Promise-ն ապահովագրում է Համայնքային առողջապահության աշխատողների (Community Health Worker, CHW) ծառայությունները անհատների համար, երբ հանձնարարվում են բժշկի կամ այլ արտոնագրված մասնավոր գործառույթամբ զբաղվող բժշկի կողմից՝ կանխելու հիվանդությունները, հաշմանդամությունը և այլ առողջական վիճակներ կամ նրանց առաջընթացը. երկարացնելու կյանքը. և խթանելու ֆիզիկական և հոգեկան առողջությունն ու արդյունավետությունը: Ծառայությունները կարող են ներառել՝

- Առողջապահական կրթություն և պատրաստություն, ներառյալ՝ քրոնիկ կամ վարակիչ հիվանդությունների վերահսկումը կամ կանխումը. վարքագծային, մերձձննդյան և բերանի առողջական վիճակները. և վնասվածքների կանխումը
- Առողջության խթանում և մարզում, ներառյալ՝ նպատակակետի սահմանումն ու գործողության ծրագրերի ստեղծումը, հիվանդությունների կանխման և կառավարման միջոցներ ձեռք առնելու համար

Ղիալիզի և արյան ղիալիզի ծառայություններ

Blue Shield Promise-ն ապահովագրում է ղիալիզի բուժումները: Blue Shield Promise-ը նաև ապահովագրում է արյան ղիալիզի (քրոնիկ ղիալիզ) ծառայությունը, եթե Ձեր բժիշկը խնդրանք է ներկայացնում, և Blue Shield Promise-ը վավերացնում են այն:

Medi-Cal-ի ապահովագրությունը չի ներառում հետևյալը՝

- Հանգստի, հարմարության կամ պերճանքի սարքեր, պաշարներ և առանձնահատկություններ
- Ոչ-բժշկական առարկաներ, ինչպես՝ ճանապարհորդության համար տնային ղիալիզի սարքի գեներատորները կամ պիտույքները

Doula (երկունքի աջակցության) ծառայություններ

Blue Shield Promise-ն ապահովագրում է երկունքի աջակցության ծառայությունները, ներառելով անձնական աջակցությունը հղի անհատներին և ընտանիքներին՝ հղիության, երկունքի և հետ-ծննդաբերության ժամանակամիջոցի ընթացքում:



Ձանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝

blueshieldca.com/promise/medi-cal:

Զույգ (մոր և նորածնի) խնամքի ծառայություններ

Blue Shield Promise-ն ապահովագրում է բժշկականորեն անհրաժեշտ զույգ խնամքի ծառայությունները անդամների և նրանց խնամողների համար:

Ընտանեկան թերապիա

Blue Shield Promise-ն ապահովագրում է ընտանեկան թերապիան, երբ բժշկականորեն անհրաժեշտ է և բաղկանում է առնվազն ընտանիքի երկու անդամից:

Ընտանեկան թերապիայի օրինակները ներառում են, առանց դրանցով սահմանափակվելու՝

- Երեխայի-ծնողի հոգեբուժություն (0-ից 5 տարեկան)
- Երեխայի-ծնողի փոխներգործոն թերապիա (2-ից 12 տարեկան)
- Զույգի ճանաչողական-վարքագծային թերապիա (չափահասներ)

Ամբուլատոր վիրահատություն

Blue Shield Promise-ն ապահովագրում է ամբուլատոր վիրահատական բուժգործողությունները: Այնպիսիք, ինչպիսիք անհրաժեշտ են ախտորոշիչ նպատակներով, ընտրովի համարվող բուժգործողությունները և հատկորոշված ամբուլատոր բժշկական կամ ատամնաբուժական բուժգործողությունները պետք է ունենան նախավավերացում (նախօրոք լիազորում):

Բժշկի ծառայություններ

Blue Shield Promise-ն ապահովագրում է բժշկի՝ բժշկականորեն անհրաժեշտ ծառայությունները:

Ոտնաբուժական (ոտքի) ծառայություններ

Blue Shield Promise-ն ապահովագրում է ոտնաբուժական ծառայությունները՝ մարդու ոտքի ախտորոշման և բժշկական, վիրաբուժական, մեխանիկական, ձեռքի շարժումներով բուժման և էլեկտրական բուժման համար: Սա ներառում է ոտնաթաթը մտնող կոճը և ջլերը և ոտքի մկանների և ջլերի ոչ վիրաբուժական բուժումները, որոնք հսկում են ոտնաթաթի գործառույթը:



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ blueshieldca.com/promise/medi-cal:

Բուժական թերապիաներ

Blue Shield Promise-ն ապահովագրում է տարբեր բուժական թերապիաներ, ներառյալ՝

- Քիմիաբուժումը
- Ճառագայթաբուժումը

Մայրության և նորածնի խնամք

Blue Shield Promise-ն ապահովագրում է մայրության և նորածնի խնամքի հետևյալ ծառայությունները՝

- Կրծքով սնուցման կրթություն և օգնություն
- Ծննդաբերության և հետ-ծննդաբերության խնամք
- Կրծքի կթիչներ և պաշարներ
- Նախածնական խնամք
- Ծննդաբերական կենտրոնի ծառայություններ
- Վկայագրված բուժքույր-մանկաբարձ (Certified Nurse Midwife, CNM)
- Արտոնագրված մանկաբարձ (Licensed Midwife, LM)
- Պտղի ժառանգաբանական (գենետիկական) խանգարումների ախտորոշում և խորհրդատվություն
- Նորածինների խնամքի ծառայություններ

Հեռավար առողջապահության ծառայություններ

Հեռավար առողջապահության ծառայություններ ստանալու միջոց է՝ առանց Ձեր մատակարարի հետ նույն տեղում գտնվելու: Հեռավար առողջապահությունը կարող է ներառել իրական ժամանակում գրույց Ձեր մատակարարի հետ: Կամ հեռավար առողջապահությունը կարող է ներառել Ձեր մատակարարի հետ տեղեկությունների փոխանակում առանց իրական ժամանակում գրույցի: Դուք կարող եք շատ ծառայություններ ստանալ հեռավար առողջապահության միջոցով: Այնուամենայնիվ, հեռավար առողջապահությունը կարող է հասանելի չլինել բոլոր ապահովագրված ծառայությունների համար: Կարող եք կապ հաստատել Ձեր մատակարարի հետ՝ տեղեկանալու, թե ինչ տեսակի ծառայություններ կարող են մատչելի լինել հեռավար առողջապահության միջոցով: Կարևոր է, որ և՛ Դուք, և՛ Ձեր մատակարարը



Չանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսագանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝

blueshieldca.com/promise/medi-cal:

համաձայնեք, որ որոշակի առողջության համար հեռավար առողջապահության օգտագործումը Ձեզ համար հարմար է: Դուք իրավունք ունեք անձամբ օգտվելու ծառայություններից և Ձեզանից չեն պահանջելու օգտվել հեռավար առողջապահությունից, նույնիսկ եթե Ձեր մատակարարը համաձայնում է, որ այն համապատասխանում է Ձեզ:

Հոգեկան առողջության ծառայություններ

Հոգեկան առողջության ամբուլատոր ծառայություններ

Blue Shield Promise-ն ապահովագրում է անդամի հոգեկան առողջության սկզբնական գնահատումը առանց նախավճարի (նախօրոք լիազորում) անհրաժեշտության: Հոգեկան առողջության գնահատումը կարող էք Blue Shield Promise-ի ցանցում արտոնագրված հոգեկան առողջության մատակարարից ստանալ որևէ ժամանակ առանց ուղեգրի:

Ձեր PCP-ն կամ հոգեկան առողջության մատակարարը կարող է ուղեգիր տալ Blue Shield Promise-ի ցանցում մասնագետի մոտ հոգեկան առողջության հավելյալ գնման համար՝ Ձեր խանգարման մակարդակը որոշելու համար: Եթե Ձեր հոգեկան առողջության գնման արդյունքները վճռեն, որ ունեք մեղմ կամ չափավոր նեղություն կամ ունեք մտային, հուզական կամ վարքագծային գործառույթի խանգարում, Blue Shield Promise-ը կարող է հոգեկան առողջության ծառայություններ մատուցել Ձեզ: Blue Shield Promise-ն ապահովագրում է հոգեկան առողջության հետևյալ ծառայությունները՝

- Անհատական և խմբային հոգեկան առողջության գնահատում և բուժում (հոգեբուժություն)
- Հոգեբանական ստուգում՝ հոգեկան առողջության վիճակի գնահատման համար, երբ կլինիկականորեն ախտորոշվել է
- Ճանաչողական հմտությունների զարգացում՝ ուշադրության, հիշողության և խնդիրների լուծման բարելավման համար
- Ամբուլատոր ծառայություններ, որոնք նպատակ ունեն դեղաբուժումը հսկել



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսագանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝

blueshieldca.com/promise/medi-cal:

- Ամբուլատոր լաբորատորիա, դեղեր, որոնք արդեն չեն ապահովագրվում Medi-Cal Rx պայմանագրային դեղերի ցանկի ներքո (<https://medi-calrx.dhcs.ca.gov/home/>), պաշարներ և լրացուցիչներ
- Հոգեբուժական խորհրդատվություն
- Ընտանեկան թերապիա

Blue Shield Promise-ի կողմից մատուցվող հոգեկան առողջության ծառայությունների մասին ավելին իմանալու համար զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով:

Եթե Ձեր PCP-ն կամ հոգեկան առողջության մատակարարը չի կարող Ձեզ հոգեկան առողջության խանգարման համար բուժում մատուցել Blue Shield Promise-ի ցանցում և վերը «Խնամքի մատչելիությունը ժամանակին» բաժնում նշված ժամանակային սահմաններում, Blue Shield Promise-ը կապահովագրի և կօգնի, որ դասավորեք արտացանցային ծառայություններ:

Եթե Ձեր հոգեկան առողջության գնման արդյունքները որոշեն, որ ունեք ավելի բարձր մակարդակի խանգարում և կարիք ունեք մասնագիտացված հոգեկան առողջության ծառայությունների (Specialized Mental Health Services, SMHS), Ձեր PCP-ն կամ հոգեկան առողջության մատակարարը Ձեր կուղղորդի վարչաշրջանի հոգեկան առողջության ծրագրին՝ գնահատում ստանալու և գործընթացի հաջորդ աստիճանի հետ կապվելու համար:

Ավելին իմանալու համար կարդացեք «Medi-Cal-ի ուրիշ ծրագրեր և ծառայությունները» 76-րդ էջի «Մասնագիտացված հոգեկան առողջության ծառայությունների» ներքո:

Արտակարգ իրավիճակի ծառայությունները

Ստացիոնար և ամբուլատոր ծառայություններ, որոնք անհրաժեշտ են բժշկական արտակարգ իրավիճակի բուժման համար

Blue Shield Promise-ն ապահովագրում է բոլոր ծառայությունները, որոնք անհրաժեշտ են ԱՄՆ-ում պատահող բժշկական արտակարգ իրավիճակի (ներառյալ



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսագանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ blueshieldca.com/promise/medi-cal:

այնպիսի տարածքներ, ինչպիսիք են Պուերտո Ռիկոն, ԱՄՆ Վիրջինյան կղզիները և այլն) համար: Blue Shield Promise-ը նաև ապահովագրում է Կանադայում կամ Մեքսիկայում հիվանդանոցային բուժում պահանջող շտապ օգնությունը: Բժշկական արտակարգ իրավիճակը սաստիկ ցավով և լուրջ վնասվածքով հատկանշվող առողջական վիճակ է: Վիճակը այնքան լուրջ է, որ եթե դրան անմիջապես բժշկական միջամտություն չցուցաբերվի, առողջապահական և խոհեմ ոչ մասնագետ անձը կարող է ենթադրել, որ այն կհանգեցնի՝

- Առողջությանը սպառնացող լուրջ վտանգի *կամ*
- Մարմնի գործառույթի լուրջ վնասի *կամ*
- Մարմնի որևէ օրգանի կամ մասի գործունեության լուրջ խանգարման *կամ*
- Հղի անձի դեպքում ակտիվ ծննդաբերության, որը նշանակում է ծննդաբերություն այն ժամանակ, երբ տեղի կունենա ստորև նշվածներից որևէ մեկը՝
 - Մինչև ծննդաբերությունը բավարար ժամանակ չկա, որպեսզի Ձեզ անվտանգ տեղափոխեն մեկ այլ հիվանդանոց:
 - Փոխադրումը կարող է Ձեր կամ Ձեր չծնված երեխայի առողջության կամ անվտանգության համար սպառնալիք ներկայացնել:

Եթե հիվանդանոցի շտապ օգնության կայանը Ձեզ տրամադրի մինչև 72 ժամ ամբուլատոր դեղատոմսային դեղի պաշար՝ որպես Ձեր բուժման մաս, դեղատոմսային դեղը կփոխհատուցվի որպես Ձեր ապահովագրված արտակարգ իրավիճակի ծառայությունների մաս: Եթե հիվանդանոցի շտապ օգնության կայանի մատակարարը Ձեզ դեղատոմս տա, որը Դուք պետք է տանեք ամբուլատոր դեղատոմս՝ լրացնելու համար, Medi-Cal Rx-ը պատասխանատու կլինի այդ դեղատոմսի ապահովագրման համար:



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսագանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ blueshieldca.com/promise/medi-cal:

Եթե ամբուլատոր դեղատան դեղագործը Ձեզ արտակարգ իրավիճակի դեղի պաշար է տալիս, այդ արտակարգ իրավիճակի պաշարը կփոխհատուցվի Medi-Cal Rx-ով, այլ ոչ թե Blue Shield Promise-ով: Խնդրեք դեղատանը զանգահարել Medi-Cal Rx 800-977-2273 համարով, եթե նրանք օգնության կարիք ունեն Ձեզ արտակարգ իրավիճակի դեղերի պաշարի հարցում:

Արտակարգ իրավիճակի փոխադրական ծառայություններ

Blue Shield Promise-ն ապահովագրում է հիվանդակառքի ծառայությունները, որպեսզի օգնի, որ արտակարգ իրավիճակի դեպքերում հասնեք մոտակա խնամքի վայրը: Մա նշանակում է, որ Ձեր վիճակը այնքան լուրջ է, որ խնամքի վայր հասնելու այլ միջոցները կարող են վտանգի ենթարկել Ձեր առողջությունը կամ կյանքը: Ոչ մի ծառայություն չի ապահովագրվում ԱՄՆ-ից դուրս, բացի արտակարգ իրավիճակի ծառայություններից, որոնք պահանջում են հիվանդանոցում Ձեր գտնվելը Կանադայում կամ Մեքսիկայում: Եթե շտապ օգնության ծառայություններ եք ստանում Կանադայում և Մեքսիկայում և հիվանդանոցային բուժում չեք ստացել խնամքի այդ միջադեպի ընթացքում, Ձեր շտապ օգնության ծառայությունները չեն ապահովագրվի Blue Shield Promise-ով:

Մահացու հիվանդի և ցավամոքիչ խնամք

Blue Shield Promise-ն ապահովագրում է երեխաների և չափահասների համար մահացու հիվանդի խնամքը, ինչպես նաև ցավամոքիչ խնամքը, որը օգնում է ֆիզիկական, հուզական, սոցիալական և հոգևոր անհանգստությունների նվազեցման: 21 տարեկան և ավելի տարեց չափահասները կարող են միաժամանակ չստանալ ինչպես մահացու հիվանդի խնամք, այնպես էլ ցավամոքիչ խնամքի ծառայություններ:

Անբուժելի հիվանդների խնամք*

Մահացու հիվանդի խնամքը նպաստ է, որը ծառայում է անբուժելիորեն հիվանդ անդամների: Մահացու հիվանդի խնամքը անդամից պահանջում է ունենալ վեց ամիս կամ նվազ ապրելու ակնկալություն Դա միջամտություն է, որը հիմնականում կենտրոնանում է դարմանի կամ երկարակեցության փոխարեն ցավի և ախտանշանի կառավարման վրա:



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսագանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝

blueshieldca.com/promise/medi-cal:

Մահացու հիվանդի խնամքն ընդգրկում է՝

- Բուժքույրական ծառայություններ
- Ֆիզիկական, աշխատանքային կամ խոսքի ծառայություններ
- Բժշկական սոցիալական ծառայություններ
- Տնային առողջապահության օգնականի և տնային տնտեսի ծառայություններ
- Բժշկական պաշարներ և սարքեր
- Որոշ դեղեր և կենսաբանական ծառայություններ (ումանք կարող են հասանելի լինել FFS Medi-Cal Rx-ի միջոցով)
- Խորհրդատվական ծառայություններ
- 24-Ժամյա դրությամբ անընդմեջ բուժքույրական ծառայություններ ճգնաժամային պահերի ընթացքում և ինչպես անհրաժեշտ են անբուժելի հիվանդին տանը պահելու համար
- Ստացիոնար հանգստի խնամք մինչև հինգ շաբաթանական օր յուրաքանչյուր անգամ՝ հիվանդանոցում, հմուտ բուժքույրական հաստատություններ կամ մահացու հիվանդի հաստատությունում
- Կարճատև ստացիոնար խնամք ցավի կառավարման կամ ախտանշանի դեկավարման համար՝ հիվանդանոցում, հմուտ բուժքույրական հաստատությունում կամ մահացու հիվանդի հաստատությունում

Ցավամոքիչ խնամք

Ցավամոքիչ խնամքը հիվանդի և ընտանիքի վրա կենտրոնացված խնամք է, որ բարելավում է կյանքի որակը՝ նախատեսելով, կանխարգելելով և դարմանելով տառապանքը: Ցավամոքիչ խնամքը անդամից չի պահանջում ունենալ վեց ամիս կամ նվազ ապրելու ակնկալություն Ցավամոքիչ խնամքը հնարավոր է մատուցել բուժիչ խնամքի հետ միաժամանակ:

Ցավամոքիչ խնամքն ընդգրկում է՝

- Խնամքի նախնական ծրագրում
- Ցավամոքիչ խնամքի գնահատում և խորհրդատվություն



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսագանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ blueshieldca.com/promise/medi-cal:

- Խնամքի ծրագրումը ներառում է բոլոր լիազորված ցավամոքիչ և բուժական խնամքները
- Խնամքի ծրագրի խումբ, ներառյալ՝ առանց դրանցով սահմանափակվելու՝
 - Բժշկության դոկտոր կամ ոսկրախտաբանություն
 - Օգնական բժիշկ
 - Գրանցված բուժքույր
 - Արտոնագրված մասնագիտական բուժքույր կամ առաջնային խնամք տրամադրող բուժքույր
 - Սոցիալական աշխատող
 - Քահանա
- Խնամքի համակարգում
- Ցավի և ախտանիշների կառավարում
- Հոգեկան առողջության և բժշկական սոցիալական ծառայություններ

21 տարեկան և ավելի տարեց չափահասները չեն կարող միաժամանակ ստանալ ինչպես ցավամոքիչ, այնպես էլ անբուժելի հիվանդների խնամք: Եթե Դուք ստանում եք ցավամոքիչ խնամք և համապատասխանում եք անբուժելի հիվանդների խնամք ստանալու չափանիշներին, կարող եք ցանկացած պահի խնդրել անցնել անբուժելի հիվանդների խնամքի:

Հիվանդանոցային բուժում

Զգայազրկողի ծառայություններ

Blue Shield Promise-ն ապահովագրում է զգայազրկող մասնագետի ծառայությունները հիվանդանոցային կեցության ընթացքում: Զգայազրկության մասնագետը մատակարար է, ով մասնագիտացել է հիվանդներին զգայազրկիչ տալու մարզում: Զգայազրկումը բժշկության մի տեսակ է, որն օգտագործվում է մի շարք բժշկական կամ ատամնաբուժական բուժգործողությունների ընթացքում:



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ blueshieldca.com/promise/medi-cal:

Ստացիոնար հիվանդանոցային ծառայություններ

Blue Shield Promise-ն ապահովագրում է ստացիոնար հիվանդանոցային խնամքը, երբ Ձեզ հիվանդանոց են ընդունում:

Ամբողջ գենոմի արագ հաջորդականացում

Ամբողջ գենոմի արագ հաջորդականացումը (Rapid whole genome sequencing, rWGS) ապահովագրված նպաստ է որևէ Medi-Cal-ի անդամի համար, ով չի բուժվել մեկ տարիքը և ստանում է ստացիոնար հիվանդանոցային ծառայություններ լարված խնամքի ենթաբաժնում (Intensive Care Unit, ICU): Այն ընդգրկում է անհատական հաջորդականացում, եռյակային հաջորդականացում ծնողի կամ ծնողների և նրանց մանկան համար, ինչպես նաև գերարագ հաջորդականացում: rWGS-ը նոր եղանակ է ժամանակին վիճակները ակտորոշելու համար, որպեսզի ազդի մեկ տարիքը չբուժված երեխաների ICU-ի խնամքին: Եթե Ձեր երեխան իրավասու է Կալիֆորնիայի Երեխաների Ծառայություններին (California Children's Services, CCS), CCS-ը կարող է ապահովագրել հիվանդանոցի կեցությունն ու rWGS-ը:

Վիրաբուժական ծառայություններ

Blue Shield Promise-ն ապահովագրում է հիվանդանոցում իրականացված բժշկականորեն անհրաժեշտ ծառայությունները:

Հետ-ծննդաբերական խնամքի երկարացման ծրագիր

Հետ-ծննդաբերական խնամքի երկարացման ծրագիրը Medi-Cal-ի անդամներին ապահովում է երկարացված ծածկույթ ինչպես հղիության ընթացքում, այնպես էլ հղիությունից հետո:

Հետ-ծննդաբերական խնամքի երկարացման ծրագիրը երկարացնում է Blue Shield Promise-ի ապահովագրումը հղիության ավարտից մինչև 12 ամիս՝ անկախ եկամուտից, քաղաքացիությունից կամ ներգաղթի կարգավիճակից՝ առանց որևէ այլ գործողություն պահանջելու:



Ձանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ blueshieldca.com/promise/medi-cal:

Վերականգնողական (թերապիա) ծառայություններ և սարքեր

Այս նպաստը ներառում է ծառայություններ և սարքեր, որոնք կօգնեն վնասվածքներ, հաշմանդամություն կամ քրոնիկ հիվանդություններ ունեցող մարդկանց մտավոր և ֆիզիկական հմտություններ ձեռք բերել կամ վերականգնվել:

Մենք ապահովագրում են վերականգնողական ծառայությունները, որոնք նկարագրվում են այս բաժնում, եթե բավարարվում են բոլոր հետևյալ պայմանները՝

- Ծառայությունները բժշկականորեն անհրաժեշտ են
- Ծառայությունները նպատակադրում են առողջական վիճակի լուծումը
- Ծառայությունները նպատակադրում են օգնել, որ պահեք, սովորեք կամ բարելավեք ունակություններ և գործունեություններ առօրյա կյանքի համար:
- Դուք ծառայություններն ստանում եք ներքանցային հաստատությունում, բացի եթե ներքանցային բժիշկը որոշում է, որ Ձեզ համար բժշկականորեն անհրաժեշտ է ծառայություններն ստանալ տարբեր վայրում, կամ եթե չկա Ձեր առողջական վիճակի բուժման համար ներքանցային հաստատություն:

Ծրագիրն ապահովագրում է՝

Ասեղնաբուժություն

Blue Shield Promise-ն ապահովագրում է ասեղնաբուժական ծառայությունները՝ կանխարգելելու, բարեփոխելու կամ մեղմացնելու սաստիկ, համառ քրոնիկ ցավի զգացողությունը, որն առաջանում է ընդհանրապես ճանաչված բժշկական վիճակից: Ամբուլատոր ասեղնաբուժական ծառայությունները (ասեղների էլեկտրական խթանմամբ կամ առանց դրա) սահմանափակվում են ամսական երկու ծառայություններով, երբ դրանք մատուցվում են բժշկի, ատամնաբույժի, ոտնաբույժի կամ ասեղնաբույժի կողմից (սահմանափակումները չեն տարածվում մինչև 21 տարեկան երեխաների վրա): Blue Shield Promise-ը կարող է նախավավերացնել (նախօրոք լիազորել) հավելյալ ծառայություններ որպես բժշկականորեն անհրաժեշտ:



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝

blueshieldca.com/promise/medi-cal:

Հստակություն (լսողություն)

Blue Shield Promise-ն ապահովագրում է լսաբանական ծառայությունները: Ամբուլատոր լսաբանությունը սահմանափակվում է ամսական երկու ծառայություններով (սահմանափակումները չեն տարածվում մինչև 21 տարեկան երեխաների վրա): Blue Shield Promise-ը կարող է նախավերացնել (նախօրոք լիազորել) հավելյալ ծառայություններ որպես բժշկականորեն անհրաժեշտ:

Վարքագծային առողջության բուժումներ

Blue Shield Promise-ն ապահովագրում է վարքագծային առողջության բուժման (Behavioral Health Treatment, BHT) ծառայությունները մինչև 21 տարեկան անդամների համար՝ վաղ և պարբերաբար զննման, ախտորոշման և բուժման (EPSDT) նպաստի միջոցով: BHT-ն ներառում է ծառայությունների և բուժումների ծրագրեր, ինչպես՝ կիրառական վարքագծի վերլուծումը և ապացույցի հիմքով վարքագծին միջամտելու ծրագրերը, որոնք զարգացնում կամ վերականգնում են, հնարավոր առավելագույն տարողությամբ, անհատի գործունեությունը մինչև 21 տարեկան:

BHT ծառայությունները սովորեցնում են ունակություններ վարքագծային դիտարկումների և համալրումների միջոցով, կամ նպատակային վարքագծի յուրաքանչյուր քայլ դրդելով սովորեցնելու միջոցով: BHT ծառայությունները հիմնվում են վստահելի ապացույցի վրա և չունեն փորձառական բնույթ:

BHT ծառայությունների օրինակներից են վարքագծային միջամտությունները, ճանաչողական վարքագծային միջամտական փաթեթները, համապարփակ վարքագծային բուժումը և կիրառական վարքագծային վերլուծումը:

BHT ծառայությունները պետք է լինեն բժշկականորեն անհրաժեշտ, նշանակված՝ արտոնագրված բժշկի կամ հոգեբանի կողմից, վավերացված՝ ծրագրի կողմից, և մատուցված այնպիսի եղանակով, որը հետևում է վավերացված ծրագրին:

Սրտի վերականգնում

Blue Shield Promise-ն ապահովագրում է սրտի վերականգնման ստացիոնար և ամբուլատոր ծառայությունները:



Ձանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսագանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագրի 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ blueshieldca.com/promise/medi-cal:

Տևական օգտագործման բժշկական սարքեր (DME)

Blue Shield Promise-ն ապահովագրում է գնումը կամ վարձումը Տևական օգտագործման բժշկական սարքերի (Durable Medical Equipment, DME) պաշարների, սարքերի և ուրիշ ծառայությունների՝ բժշկի, բժշկի օգնականների, առաջնային խնամք տրամադրող բուժքույրերի և կլինիկական բուժքրոջ մասնագետների դեղատոմսով: Դեղատոմսով նշանակված DME իրերը կարող են ապահովագրվել որպես բժշկականորեն անհրաժեշտ՝ պահպանելու մարմնի գործառնությունները, որոնք կենսական են առօրյա գործունեությունների համար կամ ֆիզիկական գլխավոր հաշմանդամության կանխարգելման նպատակով:

Ընդհանուր առմամբ, Blue Shield Promise-ը չի ապահովագրում հետևյալը՝

- Հարմարավետ, հարմար կամ շքեղ սարքավորումներ, առանձնահատկություններ և պաշարներ, բացառությամբ մանրածախ կրծքի կթիչների, որոնք նկարագրված են «Կրծքի կթիչներ և պաշարներ» բաժնում «Մայրության և նորածինների խնամքը» վերնագրի տակ այս գլխում:
- Առօրյա կյանքի բնականոն գործունեության պահպանման համար չնախատեսված իրեր, ինչպիսիք են մարգասարքերը (ներառյալ սարքերը, որոնք նախատեսված են հանգստի կամ մարզական գործունեության հավելյալ աջակցություն տրամադրելու համար)
- Հիգիենայի սարքավորումներ, բացառությամբ այն դեպքերի, երբ բժշկականորեն անհրաժեշտ է մինչև 21 տարեկան անդամի համար
- Ոչ բժշկական առարկաներ, ինչպիսիք են սաունայի լոգարանները կամ վերելակները
- Փոփոխություններ 2եր տան կամ մեքենայի մեջ
- Արյան կամ մարմնի այլ նյութերի ստուգման սարքեր (սակայն շաքարախտի արյան գլյուկոզայի ցուցասարքերը, գլյուկոզայի անընդհատ ցուցասարքերը, ստուգման ժապավենները և նշտարները ապահովագրված են Medi-Cal Rx-ով)
- Սրտի կամ թոքերի էլեկտրոնային ցուցասարքեր, բացառությամբ մանկական շնչականգի ցուցասարքերի



Ձանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսագանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝

blueshieldca.com/promise/medi-cal:

- Սարքավորումների վերանորոգում կամ փոխարինում կորստի, գողության կամ չարաշահման հետևանքով, բացառությամբ այն դեպքերի, երբ բժշկականորեն անհրաժեշտ է մինչև 21 տարեկան անդամի համար
- Այլ իրեր, որոնք հիմնականում չեն օգտագործվում առողջական խնամքի համար

Այնուամենայնիվ, որոշ դեպքերում այս առարկաները կարող են վավերացվել Ձեր բժշկի կողմից ներկայացված նախօրոք լիազորմամբ (նախավավերացում):

Աղիքային և արտաղիքային սնուցում

Մարմնին սնունդ տալու այս մեթոդներն օգտագործվում են երբ բժշկական մի վիճակ արգելում է սննդի բնականոն ընդունումը: Աղիքային սնուցման ֆորմուլաներ և արտաղիքային սնուցման արտադրանքներ կարող են ապահովագրվել է Medi-Cal RX-ի միջոցով, երբ բժշկականորեն անհրաժեշտ են: Blue Shield Promise-ը կարող է ապահովագրել աղիքային և արտաղիքային պոմպերն ու խողովակները, երբ բժշկականորեն անհրաժեշտ են:

Լսողական սարքեր

Blue Shield Promise-ն ապահովագրում է լսողական օժանդակ սարքերը, եթե ստուգման եք ենթարկվել լսողական կորստի համար, լսողական սարքերը բժշկականորեն անհրաժեշտ են և դեղատոմս եք ստացել Ձեր բժշկից: Ապահովագրությունը սահմանափակվում է Ձեր բժշկական կարիքները բավարարող ամենացածր գնով: Blue Shield Promise-ը կապահովագրի մեկ լսողական սարք, եթե յուրաքանչյուր ականջի համար անհրաժեշտ չէ սարք՝ զգալիորեն ավելի լավ արդյունքների հասնելու համար, քան Դուք կարող եք ստանալ մեկ լսողական սարքով:

Լսողական սարքեր մինչև 21 տարեկան անդամների համար

Նահանգի օրենքը պահանջում է, որ երեխաները, ովքեր լսողական սարքի կարիք ունեն, պետք է ուղղորդվեն Կալիֆորնիայի Երեխաների Ծառայությունների (CCS) ծրագրին՝ որոշելու, թե արդյոք երեխան իրավասու է CCS-ի համար: Եթե երեխան իրավասու է CCS-ի համար, CCS-ը կհոգա բժշկականորեն անհրաժեշտ լսողական սարքերի ծախսերը: Եթե երեխան իրավասու չէ CCS-ի համար, մենք



Ձանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսագանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝

blueshieldca.com/promise/medi-cal:

կփոխհատուցենք բժշկական համար անհրաժեշտ լսողական սարքերը որպես Medi-Cal-ի ապահովագրության մաս:

Լսողական սարքեր 21 և ավելի բարձր տարիքի անդամների համար

Medi-Cal-ի ներքո մենք ապահովագրում ենք հետևյալը յուրաքանչյուր ապահովագրված լսողական սարքի համար՝

- Ականջի կաղապարներ, որոնք անհրաժեշտ են տեղադրման համար
- Մեկ ստանդարտ մարտկոցի փաթեթ
- Այցեր՝ համոզվելու, որ սարքը ճիշտ է աշխատում
- Այցեր՝ Ձեր լսողական սարքը մաքրելու և տեղադրելու համար
- Ձեր լսողական սարքի վերանորոգում

Medi-Cal-ի շրջանակներում մենք կփոխհատուցենք փոխարինող լսողական սարքը, եթե՝

- Ձեր լսողության կորուստն այնպիսին է, որ Ձեր ներկայիս լսողական սարքը չի կարող շտկել այն
- Ձեր լսողական սարքը կորել է, գողացել են կամ կոտրվել է և հնարավոր չէ այն շտկել, և դա Ձեր մեղքը չի եղել: Դուք պետք է մեզ գրավոր տեղեկացնեք, թե ինչպես է դա տեղի ունեցել:

21 տարեկան և ավելի տարեց չափահասների համար Medi-Cal-ը չի ներառում՝

- Լսողական սարքի մարտկոցների փոխարինում

Տանը մատուցվող առողջական ծառայություններ

Blue Shield Promise-ն ապահովագրում է առողջական ծառայությունները, որոնք մատուցվում են Ձեր տանը, երբ նշանակվել են բժշկի կողմից և ճանաչվում են որպես բժշկականորեն անհրաժեշտ:

Տանը մատուցվող առողջական ծառայություններ սահմանափակվում են միայն այն ծառայություններով, որոնք Medi-Cal-ն ներառում է, ինչպիսիք են՝



Չանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսագանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝

blueshieldca.com/promise/medi-cal:

- Կես դրույքով հմուտ բուժքույրական խնամք
- Կես դրույքով տնային առողջության օգնական
- Հմուտ ֆիզիկական, աշխատանքային և խոսքի թերապիա
- Բժշկական սոցիալական ծառայություններ
- Բժշկական պաշարներ

Բժշկական պաշարներ, սարքեր և գործիքներ

Blue Shield Promise-ն ապահովագրում է բժշկական պաշարները, որոնք նշանակվում են բժշկի, բժիշկ օգնականի, Առաջնային խնամք տրամադրող բուժքույր և կլինիկական բուժքույրերի մասնագետների կողմից: Որոշ բժշկական պաշարներ ապահովագրված են FFS Medi-Cal Rx-ի, այլ ոչ թե Blue Shield Promise-ի միջոցով:

Medi-Cal-ի ապահովագրությունը չի ներառում հետևյալը՝

- Ընդհանուր կենցաղային իրեր, ներառյալ, բայց չսահմանափակվելով հետևյալը՝
 - Կաշուն ժապավեն (բոլոր տեսակի)
 - Բժշկական սպիրտ
 - Գեղարարական միջոցներ
 - Բամբակյա գնդիկներ և վիրախճուծներ
 - Ցանափոշի
 - Կտորի անձեռոցիկներ
 - Համամենու պնտուկենի
- Ընդհանուր կենցաղային միջոցները ընդգրկում են, առանց դրանցով սահմանափակվելու՝
 - Սպիտակ վազելին
 - Չոր մաշկի յուղեր և լոսյոններ
 - Տալկի և տալկի համակցված արտադրանք
 - Օքսիդացնող նյութեր, ինչպիսիք են ջրածնի պերօքսիդը
 - Կարբամիդի պերօքսիդ և նատրիումի պերօքսատ
- Առանց դեղատոմսի շամպուններ



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսագանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝

blueshieldca.com/promise/medi-cal:

- Տեղական պատրաստուկներ, որոնք պարունակում են բենզոյան և սալիցիլաթթու քսուք, սալիցիլաթթվի կրեմ, քսուք կամ հեղուկ և ցինկի օքսիդի մածուկ
- Այլ ապրանքներ, որոնք հիմնականում չեն օգտագործվում առողջական խնամքի համար, և որոնք կանոնավոր և հիմնականում օգտագործվում են այն անձանց կողմից, ովքեր չունեն դրանց հատուկ բժշկական կարիք:

Աշխատանքային թերապիա

Blue Shield Promise-ն ապահովագրում է աշխատանքային թերապիայի ծառայությունները, ներառյալ՝ աշխատանքային թերապիայի գնահատումը, բուժման ծրագրումը, բուժումը, ուսուցման և խորհրդատվության ծառայությունները:

Աշխատանքային թերապիայի ծառայությունները սահմանափակվում են ամսական երկու ծառայություններով (սահմանափակումները չեն տարածվում մինչև 21 տարեկան երեխաների վրա): Blue Shield Promise-ը կարող է նախավավերացնել (նախօրոք լիազորել) հավելյալ ծառայություններ որպես բժշկականորեն անհրաժեշտ:

Օրթեզ/պրոթեզ

Blue Shield Promise-ն ապահովագրում է օրթեզի և պրոթեզի սարքերը և ծառայությունները, որոնք բժշկականորեն անհրաժեշտ են և նշանակվել են Ձեր բժշկի, ոտնաբույժի, ատամնաբույժի, կամ ոչ-բժիշկ բժշկական մատակարարի կողմից: Սա ներառում է փոխպատվաստված լսողական սարքերը, կրծքի պրոթեզները/ստինքահատման կրծկալները, այրվածքի սեղմիչ հանդերձանքը և մարմնի գործառույթը կամ մարմնի անդամը վերականգնող կամ մարմնի տկարացած կամ ձևազեղված անդամին աջակցող պրոթեզները:

Օստոմիա և միզական պաշարներ

Blue Shield Promise-ն ապահովագրում է օստոմիայի տոպրակները, միզական խորասուզակները, ցամաքուրդային տոպրակները, ռոռզման պաշարները և կաշուն նյութերը: Սա չի ներառում հանգստի, հարմարավետության կամ պերճանքի սարքեր, հատուկ գովազդված իրեր և պաշարներ:



Ձանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսագանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ blueshieldca.com/promise/medi-cal:

Ֆիզիկական թերապիա

Blue Shield Promise-ն ապահովագրում է բժշկականորեն անհրաժեշտ ֆիզիկական թերապիայի ծառայությունները, ներառյալ՝ ֆիզիկական թերապիայի գնահատումը, բուժման ծրագրումը, բուժումը, ուսուցումը, խորհրդատվության ծառայությունները, և տեղային դեղերի կիրառումը:

Թոքի վերականգնում

Blue Shield Promise-ն ապահովագրում է թոքի վերականգնումը, որը բժշկականորեն անհրաժեշտ է և նշանակվել է Ձեր բժշկի կողմից:

Հմուտ բուժքույրական հաստատության ծառայություններ

Blue Shield Promise-ն ապահովագրում է հմուտ բուժքույրական հաստատության ծառայությունները, որոնք բժշկականորեն անհրաժեշտ, եթե Դուք հաշմանդամ եք և կարիք ունեք բարձր մակարդակի խնամքի: Այս ծառայություններն ընդգրկում են սենյակը և գիշերումը արտոնագրված հաստատությունում՝ օրական 24 ժամ հմուտ բուժքույրական խնամքի հիմքով:

Խոսքի թերապիա

Blue Shield Promise-ն ապահովագրում է բժշկականորեն անհրաժեշտ խոսքի թերապիան: Խոսքի թերապիայի ծառայությունները սահմանափակվում են ամսական երկու ծառայություններով (սահմանափակումները չեն տարածվում մինչև 21 տարեկան երեխաների վրա): Blue Shield Promise-ը կարող է նախավավերացնել (նախօրոք լիազորել) հավելյալ ծառայություններ որպես բժշկականորեն անհրաժեշտ:

Սեռափոխության ծառայություններ

Blue Shield Promise-ն ապահովագրում է սեռափոխության ծառայությունները (սեռի հաստատման ծառայություններ) որպես նպաստ, երբ բժշկականորեն անհրաժեշտ են կամ երբ ծառայությունը բավարարում է վերականգնողական վիրահատության չափանիշները:



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝

blueshieldca.com/promise/medi-cal:

Կլինիկական փորձարկումներ

Blue Shield Promise-ն ապահովագրում է հիվանդների խնամքի սովորական ծախսերը I փուլի, II փուլի, III փուլի կամ IV փուլի կլինիկական փորձարկումներին մասնակցող հիվանդների համար, եթե այն կապ ունի քաղցկեղի կամ կյանքին սպառնացող ուրիշ վիճակների կանխարգելման, հայտնաբերման կամ բուժման հետ և եթե ուսումնասիրությունը բավարարում է բոլոր պահանջմունքները Առողջապահության և անվտանգության օրենքի (Health and Safety Code) 1370.6(d)(1) կետի ներքո: Medi-Cal Rx, Medi-Cal FFS ծրագիրը, ընդգրկում է ամբուլատոր դեղատոմսային դեղերի մեծ մասը: Հավելյալ տեղեկությունների համար կարդացեք այս գլխի «Ամբուլատոր դեղատոմսային դեղեր» բաժինը:

Լաբորատորային և ռադիոլոգիական ծառայություններ

Blue Shield Promise-ն ապահովագրում է ամբուլատոր և ստացիոնար լաբորատորային և ռենտգեն պատկերումի ծառայությունները, երբ բժշկականորեն անհրաժեշտ են: Պատկերավորման տարբեր առաջադեմ բուժօրոժություններ, ինչպես՝ CT գնումներ, MRI և PET գնումները, ապահովագրվում են՝ հիմնվելով բժշկական անհրաժեշտության վրա:

Կանխարգելիչ և քաջառողջական ծառայություններ և քրոնիկ հիվանդության կառավարում

Ծրագիրն ապահովագրում է՝

- Անընկալացման կիրառության խորհրդատու հանձնաժողովի (Advisory Committee for Immunization Practices) կողմից հանձնարարված պատվաստումներ
- Ընտանիքի ծրագրման ծառայությունները
- Մանկաբուժության ամերիկյան ակադեմիայի «Փայլուն ապագաների» հանձնարարությունները (https://downloads.aap.org/AAP/PDF/periodicity_schedule.pdf)
- Հեղձուկի (ասթմա) կանխարգելման ծառայությունները



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսագանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ blueshieldca.com/promise/medi-cal:

- Կանանց համար կանխարգելիչ ծառայություններ մանկաբարձ-գինեկոլոգների ամերիկյան քոլեջի կողմից
- Օգնություն ծխելը թարգելու հարցում, որը կոչվում է նաև ծխելը դադարեցնելու ծառայություններ
- Միացյալ Նահանգների կանխարգելիչ ծառայությունների աշխատանքային խմբի (United States Preventive Services Task Force) Ա և Բ մակարդակների համար խորհուրդ տրվող կանխարգելիչ ծառայությունները

Ընտանիքի ծրագրման ծառայությունները մատուցվում են մանկածնության տարիքի անդամներին, որպեսզի կարողանան որոշել երեխաների քանակը և նրանց ծննդյան ամսաթվերի հեռավորությունը: Այս ծառայությունները ներառում են Սննդի և դեղորայքի վարչության (Food and Drug Administration, FDA) կողմից վավերացված բոլոր հակաբեղմնավորիչ միջոցները: Blue Shield Promise-ի PCP-ն և մանկաբարձության/գինեկոլոգիայի մասնագետները հասանելի են ընտանիքի ծրագրման ծառայությունների համար:

Ընտանիքի ծրագրման ծառայությունների համար առանց Blue Shield Promise-ից նախավավերացում (նախօրոք լիազորում) ստանալու կարող եք նաև ընտրել Medi-Cal-ի մի բժշկի կամ կլինիկա, որը կապ չունի Blue Shield Promise-ի հետ: Ընտանիքի ծրագրման հետ կապված արտացանցային մատակարարի ծառայությունները չեն կարող ապահովագրվել: Ավելին իմանալու համար զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով:

Կարդացեք 5-րդ Գլուխը՝ Երեխաների և երիտասարդների խնամքը 20 տարեկան և ավելի բարձր երիտասարդների կանխարգելիչ խնամքի համար:

Շաքարախտի կանխարգելման ծրագիր

Շաքարախտի կանխարգելման ծրագիրը (Diabetes Prevention Program, DPP) ապացույցի վրա հիմնված ապրելակերպի փոփոխության ծրագիր է: Այս 12-ամսյա ծրագիրը կենտրոնանում է ապրելակերպի փոփոխությունների վրա և մշակվել է կանխարգելելու կամ ուշացնելու սկզբնավորումը 2 տեսակի շաքարախտի՝ նախաշաքարախտով ախտորոշված անհատների շրջանակում: Չափանիշերին



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝

blueshieldca.com/promise/medi-cal:

համապատասխանող անդամները կարող են որակավորվել երկրորդ տարվա համար: Ծրագիրը մատուցում է կրթություն և խմբական աջակցություն: Արդյունավետ եղանակներն ընդգրկում են, առանց դրանցով սահմանափակվելու՝

- Տրամադրումը հավասարակից մարզիչի
- Ուսուցումը ինքնահսկողության և խնդիրների լուծման
- Մատուցումը քաջալերանքի և հետադարձ նկատողությունների
- Մատուցումը տեղեկատվական նյութերի՝ նպատակակետերին աջակցելու համար
- Հետևումը սովորական միջամտությունների՝ նպատակակետերի իրականացման համար

DPP-ին միանալու համար անդամները պարտավոր են բավարարել ծրագրի իրավասության պահանջմունքները: Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով՝ ավելին իմանալու համար ծրագրի և իրավասության մասին:

Վերականգնողական ծառայություններ

Blue Shield Promise-ն ապահովագրում է վիրահատությունը՝ ուղղելու կամ վերանորոգելու մարմնի անբնականոն կառուցվածքներ, որպեսզի բարելավվի կամ ստեղծի հնարավորինս բնականոն տեսք: Մարմնի անբնականոն կառուցվածքները նրանք են, որոնք առաջանում են բնածին թերություններից, զարգացական անբնականոնություններից, տրավմայից, վարակից, նորագոյացություններից, հիվանդությունից կամ ստինքահատումից հետո կրծքագեղձի վերականգնման արդյունքում: Կարող են կիրառվել որոշ սահմանափակումներ և բացառություններ:

Թմրանյութի օգտագործման խանգարման ստուգման ծառայություններ

Ծրագիրն ապահովագրում է՝

- Ալկոհոլային խմիչքների չարաշահման ստուգումներ և թմրամիջոցների ապօրինի օգտագործումներ



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝

blueshieldca.com/promise/medi-cal:

Վարչաշրջանի միջոցով բուժման ապահովագրության համար գնացեք «Թմրանյութի օգտագործման խանգարման բուժման ծառայություններ» բաժին ավելի ուշ այս գլխում:

Տեսողության նպաստներ

Ծրագիրն ապահովագրում է՝

- Աչքի սովորական հետազոտություն 24 ամիսը մեկ անգամ: Աչքի լրացուցիչ կամ ավելի հաճախակի հետազոտությունները ապահովագրվում են, եթե դա բժշկականորեն անհրաժեշտ է անդամների համար, օրինակ շաքարախտով հիվանդների համար:
- Ակնոցներ (շրջանակներ և ոսպնյակներ) 24 ամիսը մեկ անգամ, եթե Դուք վավեր դեղատոմս ունեք:
- Ակնոցների փոխարինում 24 ամսվա ընթացքում, եթե դեղատոմսի փոփոխություն ունեք կամ Ձեր ակնոցները կորել են, գողացվել կամ կոտրվել են (և չեն կարող շտկվել), և դա Ձեր մեղքը չէ: Դուք պետք է մեզ գրավոր տեղեկացնեք, թե ինչպես են Ձեր ակնոցները կորել, գողացվել կամ կոտրվել:
- Տեսողության խանգարում ունեցողների համար նախատեսված սարքեր, որոնք չեն շտկվում ստանդարտ ակնոցների, հպովի ոսպնյակների, դեղամիջոցների կամ վիրահատությունների միջոցով, որոնք խանգարում են մարդու առօրյա գործունեությանը (այսինքն՝ տարիքի հետ կապված բժային հետաճ):
- Բժշկականորեն անհրաժեշտ հպովի ոսպնյակներ
Հպովի ոսպնյակների փորձարկումը և հպովի ոսպնյակները կարող են ապահովագրվել, եթե ակնոցների օգտագործումը հնարավոր չէ աչքի հիվանդության կամ վիճակի պատճառով (այսինքն՝ ականջի



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսագանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ blueshieldca.com/promise/medi-cal:

բացակայությունը): Բժշկական վիճակները, որոնք համապատասխանում են հատուկ հպովի ուսանյակների օգտագործմանը, ներառում են, բայց չեն սահմանափակվում հետևյալով՝ անիրիդիա, աֆակիա և կերատոկոնուս:

Փոխադրման նպաստներ այն իրավիճակների համար, որոնք արտակարգ իրավիճակներ չեն

Դուք բժշկական փոխադրման իրավունք ունեք, եթե ունեք բժշկական կարիքներ, որոնք թույլ չեն տալիս Ձեր այցերի համար օգտագործել մեքենա, ավտոբուս կամ տաքսի: Բժշկական փոխադրում կարող է մատուցվել ապահովագրված ծառայությունների և Medi-Cal-ով ապահովագրված դեղատան ժամադրությունների համար: Եթե կարիք ունեք բժշկական փոխադրման, կարող եք այն խնդրել խոսելով Ձեր բժշկի, ատամնաբույժի, ոտնաբույժի, կամ հոգեկան առողջության կամ թմրանյութերի օգտագործման խանգարման մատակարարի հետ: Ձեր մատակարարը կորոշի փոխադրման ճիշտ տեսակը՝ Ձեր կարիքները բավարարելու համար: Եթե նա գտնի, որ Ձեզ անհրաժեշտ է բժշկական փոխադրում, կնշանակի այն՝ լրացնելով ձևաթուղթը և կներկայացնի Blue Shield Promise-ին: Վավերացնելուց հետո թույլտվությունը ուժի մեջ է 12 ամիս՝ կախված բժշկական կարիքից: Բացի այդ, սահմանափակումներ չկան, թե քանի ուղևորություն կարող եք ստանալ: Ձեր բժիշկը պետք է վերազնահատի բժշկական փոխադրման Ձեր բժշկական կարիքը և վերահաստատի յուրաքանչյուր 12 ամիսը մեկ:

Բժշկական փոխադրումը շտապ օգնության մեքենա է, զուգարանով օժտված միկրոավտոբուս, անվաթոռի համար նախատեսված միկրոավտոբուս կամ օդային փոխադրում է: Blue Shield Promise-ը թույլատրում է ամենից էժան բժշկական փոխադրումը Ձեր բժշկական կարիքների համար, երբ Ձեզ փոխադրություն է հարկավոր Ձեր ժամադրության համար: Սա նշանակում է, օրինակ, որ եթե ֆիզիկապես կամ բժշկականորեն կարող եք անվաթոռի համար նախատեսված միկրոավտոբուսով փոխադրվել, Blue Shield Promise-ը չի վճարի հիվանդակառքի համար: Դուք օդային փոխադրման իրավունք ունեք միայն այն դեպքում, եթե Ձեր բժշկական վիճակը անհնար է դարձնում որևէ տեսակի ցամաքային փոխադրում:

Բժշկական փոխադրումը պետք է օգտագործվի, երբ՝



Չանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսագանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝

blueshieldca.com/promise/medi-cal:

- Այն անհրաժեշտ է ֆիզիկապես կամ բժշկականորեն, ինչպես դա որոշվում է բժշկի կամ այլ մատակարարի գրավոր լիազորումով, Դուք ֆիզիկապես կամ բժշկականորեն չեք կարող օգտվել ավտոբուսից, տաքսիից, մարդատար մեքենայից կամ միկրոավտոբուսից՝ Ձեր ժամադրության գնալու համար:
- Ձեզ անհրաժեշտ է օգնությունը վարորդի՝ դեպի Ձեր տուն, մեքենա կամ բուժման վայր գնալու և վերադառնալու համար ֆիզիկական կամ հոգեկան հաշմանդամության պատճառով:

Բժշկական փոխադրում խնդրելու համար, որը Ձեր բժիշկը նշանակել է ոչ հրատապ (սովորական) այցերի համար, խնդրում ենք զանգահարել Blue Shield Promise 1-800-605-2556 (TTY 711) համարով առնվազն 1 աշխատանքային օր (երկուշաբթիից ուրբաթ) Ձեր ժամադրության առաջ: Հրատապ ժամադրությունների համար խնդրում ենք զանգահարել հնարավորինս շուտ: Խնդրում ենք Ձեր անդամի ճանաչողական քարտը պատրաստի ունենալ զանգահարելիս:

Բժշկական փոխադրման սահմանափակումները. Blue Shield Promise-ը

տրամադրում է ամենից էժան բժշկական փոխադրումը, որը բավարարում է Ձեր բժշկական կարիքները մոտակա մատակարարին, որտեղ հնարավոր է ժամադրություն, Ձեր տնից այցելելու: Բժշկական փոխադրումը չի տրամադրվի, եթե ծառայությունը ապահովագրված չէ Medi-Cal-ի կողմից: Եթե ժամադրության տեսակը ապահովագրված է Medi-Cal-ով, բայց ոչ առողջապահական ծրագրի միջոցով, Blue Shield Promise-ը կօգնի Ձեզ ծրագրել Ձեր փոխադրումը: Ապահովագրված ծառայությունների ցանկը ներկայացված է այս Անդամների տեղեկագրքում: Փոխադրումը չի ապահովագրվում ցանցից կամ սպասարկման տարածքից դուրս, եթե նախավավերացում չի տրվում Blue Shield Promise-ի կողմից: Լրացուցիչ տեղեկությունների կամ բժշկական փոխադրում խնդրելու համար զանգահարեք Blue Shield Promise-ին 1-800-605-2556 (TTY 711) համարով:

Ծախքը անդամի համար՝ Ոչ մի ծախք չկա, եթե փոխադրումը կազմակերպվում է Blue Shield Promise-ի կողմից:



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսագանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝

blueshieldca.com/promise/medi-cal:

Ինչպես ստանալ ոչ-բժշկական փոխադրում

Ձեր նպաստները ներառում են ժամադրության ճանապարհորդություն, եթե ժամադրությունը Medi-Cal-ի ապահովագրված ծառայությունների համար է և Ձեզ հասանելի չէ որևէ փոխադրում: Կարող եք անվճար ուղևորություն ձեռք բերել, երբ փորձել եք փոխադրում ձեռք բերելու բոլոր մյուս միջոցները և՝

- Medi-Cal-ի ապահովագրված ծառայության համար Ձեր մատակարարի լիազորումով նշանակված ժամադրության եք գնում և այնտեղից վերադառնում կամ
- Վերցնում եք դեղատոմսային դեղեր և բժշկական պաշարներ

Blue Shield Promise-ը Ձեզ թույլ է տալիս օգտվել մարդատար մեքենայից, տաքսիից, ավտոբուսից կամ ուրիշ հանրային/մասնավոր միջոցներից՝ Ձեր բժշկական ժամադրություններին գնալու նպատակով Medi-Cal-ի կողմից ապահովագրված ծառայությունների համար: Blue Shield Promise-ը կապահովագրի ոչ-բժշկական փոխադրման ամենից էժան տարբերակը, որը համապատասխանում է Ձեր կարիքներին: Երբեմն Blue Shield Promise-ը կարող է փոխհատուցել Ձեր կողմից պատվիրված մասնավոր մեքենայով երթևեկելու համար: Սա պետք է հաստատվի Blue Shield Promise-ի կողմից նախքան փոխադրում ստանալը, և Դուք պետք է մեզ տեղեկացնեք, թե ինչու չեք կարող երթևեկել այլ տարբերակով, օրինակ՝ ավտոբուսով: Դուք կարող եք տեղեկացնել՝ մեզ զանգահարելով, էլ. փոստ ուղարկելով, կամ անձամբ: Դուք չեք կարող ինքներդ մեքենա վարել և փոխհատուցում ստանալ դրա համար:

Ուղևորության արժեքը փոխհատուցելու համար պահանջվում են բոլորը հետևյալներից՝

- Վարորդի վարորդական իրավունքը
- Վարորդի փոխադրամիջոցի գրանցումը
- Վարորդի համար մեքենայի ապահովագրության վկայագիր



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝

blueshieldca.com/promise/medi-cal:

Լիազորված ծառայությունների համար ուղևորություն խնդրելու համար զանգահարեք Blue Shield Promise 1-800-605-2556 (TTY 711) համարով առնվազն 1 աշխատանքային օր (երկուշաբթիից ուրբաթ) Ձեր ժամադրությունից առաջ կամ զանգահարեք որքան հնարավոր է շուտ, երբ հրատապ ժամադրություն ունեք: Խնդրում ենք Ձեր անդամի ճանաչողական քարտը պատրաստի ունենալ զանգահարելիս:

Նշում՝ Ամերիկացի հնդկացիները կարող են կապ հաստատել իրենց տեղական Հնդկացիների առողջապահական կլինիկայի հետ՝ խնդրելու ոչ-բժշկական փոխադրում:

Ոչ-բժշկական փոխադրման սահմանափակումները. Blue Shield Promise-ը տրամադրում է ամենից էժան ոչ-բժշկական փոխադրումը, որը բավարարում է Ձեր կարիքները մոտակա մատակարարին, որտեղ հնարավոր է ժամադրություն, Ձեր տանից այցելելու: Անդամները չեն կարող իրենք վարել մեքենան կամ ուղղակիորեն փոխհատուցվել: Հավելյալ տեղեկությունների համար խնդրում ենք զանգահարել Blue Shield Promise 1-800-605-2556 (TTY 711) համարով:

Ոչ բժշկական փոխադրումը չի կիրառվում, եթե՝

- Հիվանդակառք, զուգարանով միկրոավտոբուս, անվաթոռով միկրոավտոբուս կամ բժշկական փոխադրման ուրիշ տեսակ բժշկականորեն անհրաժեշտ է Medi-Cal-ի ապահովագրված ծառայության գնալու համար:
- Ձեզ անհրաժեշտ է օգնությունը վարորդի՝ դեպի տուն, մեքենա կամ բուժման վայր գնալու և վերադառնալու համար ֆիզիկական կամ հոգեկան վիճակի պատճառով:
- Դուք օգտագործում եք անվաթոռ և ի վիճակի չեք տեղափոխվել և դուրս գալ մեքենայից՝ առանց վարորդի օգնության:
- Ծառայությունը չի ապահովագրվում Medi-Cal-ի կողմից

Ծախքը անդամի համար՝ Ոչ մի ծախք չկա, եթե ոչ-բժշկական փոխադրումը կազմակերպվում է Blue Shield Promise-ի կողմից:



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ blueshieldca.com/promise/medi-cal:

Ուղևորական ծախսեր՝ Որոշակի դեպքերում, Blue Shield Promise-ը կարող է ապահովագրել ուղևորական ծախսերը, ինչպես՝ ճաշերը, հյուրանոցում կեցությունը և այլ հարակից ծախսեր, եթե պարտավոր եք ուղևորվել Ձեր տան մոտ անհասանելի բժշկի ժամադրությունների համար: Սա կարող է նաև ապահովագրվել ուղեկցող անձի և գլխավոր օրգանի փոխապատվաստման նվիրատուի համար, ըստ կիրառելիության: Այս ծառայությունների համար պարտավոր եք նախավավերացում (նախօրոք լիազորում) խնդրել դիմելով Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով:

Ատամնաբուժական ծառայություններ

Medi-Cal Dental Կառավարվող խնամքի ծրագիրն օգտագործում է կառավարվող խնամքի ծրագրեր՝ Ձեր ատամնաբուժական ծառայությունները մատուցելու համար: Ավելին իմանալու համար գնացեք Առողջական խնամքի ընտրանքներ (Health Care Options) <http://dhcs.ca.gov/mymedi-cal> կայքով: Կարող եք մնալ Վճարովի ծառայությամբ ատամնաբուժական ծրագրում կամ ընտրել Կառավարվող խնամքի ատամնաբուժական ծրագիր: Ձեր ատամնաբուժական ծրագիրն ընտրելու կամ փոխելու համար զանգահարեք Առողջական խնամքի ընտրանքներ 1-800-430-4263 համարով:

Ձեր Medi-Cal-ի ատամնաբուժական ծառայությունները մատուցվում են Medi-Cal Dental կառավարվող խնամքի ծրագրի կողմից: Ատամնաբույժի գտնելու նպատակով օգնության կամ ատամնաբուժական ծառայություններ ստանալու օգնության համար կարող եք զանգահարել Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով:

Medi-Cal Dental-ը ապահովագրում է մի շարք ատամնաբուժական ծառայություններ, ներառյալ՝

- Ախտորոշիչ և կանխարգելիչ ատամնաբուժական հիգիենա (օրինակ՝ քննություններ, ռենտգեն պատկերումներ և ատամների մաքրում)
- Ցավի կառավարման համար արտակարգ իրավիճակի ծառայություններ
- Ատամնահանումներ
- Լցոններ



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսագանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ blueshieldca.com/promise/medi-cal:

- Ատամնարմատի խողովակի բուժումներ (առաջամասի/հետին)
- Ատամնաշապիկներ (նախօրոք պատրաստված/լաբորատորային)
- Ատամնաքարի և լնդատակի մաքրում
- Ամբողջական և մասնակի ատամնաշարեր
- Որակավորվող երեխաների համար ձևախախտված ատամների ուղղում
- Տեղային ֆտորիդ

Եթե հարցեր ունեք կամ ցանկանում եք ավելին իմանալ ատամնաբուժական ծառայությունների վերաբերյալ, զանգահարեք Medi-Cal ատամնաբուժական ծրագրին 1-800-322-6384 (TTY 1-800-735-2922 կամ 711) համարով: Կարող եք նաև այցելել Medi-Cal-ի ատամնաբուժական ծրագրի կայքը՝ <https://www.dental.dhcs.ca.gov> կամ <https://smilecalifornia.org/>:

Եթե ունեք հարցեր կամ ցանկանում եք ավելին իմանալ ատամնաբուժական ծառայությունների մասին, և եթե անդամագրվել եք Ատամնաբուժական կառավարվող խնամքի ծրագրի, զանգահարեք Ձեզ համար նշանակված Ատամնաբուժական կառավարվող խնամքի ծրագիր:

Blue Shield Promise-ի այլ ապահովագրված նպաստներ և ծրագրեր

Երկարաժամկետ խնամքի ծառայություններ և աջակցություններ

Blue Shield Promise-ը ապահովագրում է այս երկարաժամկետ խնամքի ծառայություններ և աջակցությունների նպաստները անդամների համար, ովքեր որակավորվում են՝

- Երկարաժամկետ խնամքի հաստատության ծառայություններ, ինչպես վավերացվել են Blue Shield Promise-ի կողմից



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ blueshieldca.com/promise/medi-cal/:

- Հմուտ բուժքույրական հաստատության ծառայություններ, ինչպես վավերացվել են Blue Shield Promise-ի կողմից

Տանը և համայնքում մատուցվող ծառայություններ, ինչպես վավերացվել են Blue Shield Promise-ի կողմից

- Համայնքային հիմքով չափահասի ծառայություններ (Community-Based Adult Services, CBAS)
- Տանը մատուցվող աջակից ծառայություններ (In-home Supportive Services, IHSS)
- Միջանկյալ խնամքի հաստատություններ, ինչպես վավերացվել են Blue Shield Promise-ի կողմից

Եթե որակավորվում եք երկարաժամկետ խնամքի ծառայությունների համար, Blue Shield Promise-ը կերաշխավորի Ձեր ընդունումը մի առողջական խնամքի հաստատություն, որը մատուցում է Ձեր բժշկական կարիքներին ամենից հարմարը խնամքի մակարդակը:

Երկարաժամկետ խնամքի ծառայությունների վերաբերյալ հարցեր ունենալու դեպքում զանգահարեք 1-800-605-2556 (TTY 711) համարով:

Տարրական խնամքի կառավարում

Blue Shield Promise-ը անվճար կօգնի համակարգել և կառավարել Ձեր առողջական խնամքի կարիքներն ու ծառայությունները: Blue Shield Promise-ը կհամակարգի Ձեր առողջական խնամքի ծառայությունները՝ ապահովելու, որ Դուք ստանաք բոլոր բժշկականորեն անհրաժեշտ ծառայությունները, ներառյալ՝ դեղատոմսային դեղերն ու վարքագծային առողջական խնամքի ծառայությունները, նույնիսկ եթե այդ ծառայությունները ապահովագրված են մեկ այլ ծրագրով, այլ ոչ թե Blue Shield Promise-ով: Սա ներառում է խնամքի համակարգումը բոլոր դրվածքներում, ինչպես՝ եթե կարիք ունեք հիվանդանոցային բուժման և Ձեզ ուղարկել են Ձեր բնակարանը կամ հմուտ բուժքույրական հաստատություն:

Եթե Ձեր կամ Ձեր երեխայի առողջության վերաբերյալ ունեք հարցեր կամ մտահոգություններ, զանգահարեք 1-800-605-2556 (TTY 711) համարով:



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսագանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝

blueshieldca.com/promise/medi-cal:

Խնամքի ընդլայնված կառավարում

Blue Shield Promise-ը ապահովագրում է Խնամքի ընդլայնված կառավարման (Enhanced Care Management, ECM) ծառայությունները խիստ բարդ կարիքներ ունեցող անդամների համար: ECM-ն նպաստ է, որը մատուցում է լրացուցիչ ծառայություններ՝ օգնելու Ձեզ ստանալ այն խնամքը, որն անհրաժեշտ է առողջ մնալու համար: Այն համակարգում է այն խնամքը, որը Դուք ստանում եք տարբեր բժիշկներից: ECM-ն օգնում է համակարգել առաջնային խնամքը, սուր խնամքը, վարքագծային առողջությունը, զարգացման, բերանի խոռոչի առողջությունը, համայնքի վրա հիմնված երկարաժամկետ ծառայություններն ու աջակցությունը (long-term services and supports, LTSS) և ուղեգրերը համայնքի հասանելի աղբյուրներին:

Եթե Դուք իրավասու եք, Ձեզ հետ կարող են կապ հաստատել ECM ծառայությունների կապակցությամբ: Կարող եք նաև զանգահարել Blue Shield Promise-ին՝ պարզելու, թե արդյոք կարող եք ստանալ ECM և երբ: Կամ խոսեք Ձեր առողջական խնամքի մատակարարի հետ, ով կարող է պարզել՝ արդյոք Դուք որակավորվում եք ECM-ի համար, և երբ և ինչպես կարող եք ստանալ այն:

Ապահովագրված ECM ծառայություններ

Եթե որակավորվում եք ECM-ի համար, Դուք կունենաք Ձեր խնամքի խումբը, ներառյալ Խնամքի գլխավոր կառավարիչ: Այս անձը կխոսի Ձեզ և Ձեր բժիշկների, մասնագետների, դեղագործների, դեպքերի կառավարիչների, սոցիալական ծառայություններ մատակարարների և այլոց հետ՝ համոզվելու, որ բոլորը միասին կաշխատեն՝ Ձեզ մատուցելու անհրաժեշտ խնամքը: Խնամքի գլխավոր կառավարիչը կարող է նաև Ձեզ օգնել գտնել և դիմել Ձեր համայնքի այլ ծառայությունների համար: ECM-ը ներառում է՝

- Տեղեկությունների տրամադրում և ներգրավվածություն
- Համապարփակ գնահատում և խնամքի կառավարում
- Խնամքի ընդլայնված համակարգում
- Առողջության խթանում



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսագանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝

blueshieldca.com/promise/medi-cal:

- Համապարփակ անցումային խնամք
- Անդամների և ընտանեկան աջակցության ծառայություններ
- Համակարգում և ուղեգրեր համայնքային և սոցիալական աջակցությունների համար

Պարզելու համար, թե արդյոք ECM-ը կարող է ճիշտ լինել Ձեզ համար, խոսեք Ձեր Blue Shield Promise-ի ներկայացուցչի կամ առողջական խնամքի մատակարարի հետ:

Ծախքը անդամի համար

Անդամը ոչինչ չի վճարի ECM ծառայությունների համար:

Համայնքային աջակցություններ

Համայնքային աջակցությունները կարող են հասանելի լինել Ձեր Անհատականացված խնամքի ծրագրի ներքո: Համայնքային աջակցությունները բժշկականորեն համապատասխան և ծախսարդյունավետ այլընտրանքային ծառայություններ կամ դրվածքներ են, որոնք նախատեսված են Medi-Cal State Plan-ի ներքո: Անդամների համար այս ծառայությունները պարտադիր չեն: Եթե Դուք որակավորվում եք, այս ծառայությունները կարող են օգնել Ձեզ ավելի անկախ ապրել: Դրանք չեն փոխարինում այն նպաստներին, որոնք Դուք արդեն ստանում եք Medi-Cal-ի շրջանակներում: Համայնքային աջակցությունները կարող են ներառել օգնություն՝ բնակարան գտնելու կամ պահելու, բժշկական հարմարեցված սնունդ կամ այլ օգնություն Ձեզ կամ Ձեզ խնամողին:

Blue Shield Promise-ի առաջարկված Համայնքային աջակցությունները՝

- | | |
|---|---|
| ▪ Բնակարանային անցումային կողմնորոշման ծառայություններ | ▪ Ապաքինման խնամք (Բժշկական հանգիստ) |
| ▪ Բնակարանային ավանդներ | ▪ Հանգստի ծառայություններ |
| ▪ Բնակարանների վարձակալության և պահպանման ծառայություններ | ▪ Ցերեկային վերականգնողական ծրագրեր |
| ▪ Հիվանդանոցային բուժումից հետո կարճաժամկետ բնակարան | ▪ Բուժքույրական հաստատությունից անցում/Շեղում դեպի օժանդակ բնակության հաստատություններ, |



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսազանգ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝

blueshieldca.com/promise/medi-cal:

- ինչպես՝ Տարեցների և չափահասների բնակելի խնամքի հաստատությունները (Residential Care Facilities for Elderly & Adult, RCFE) և Չափահասների բնակելի հաստատություններ (Adult Residential Facilities, ARF)
- Համայնքային անցումային ծառայություններ/Բուժքույրական հաստատություններից անցում դեպի տուն
 - Անձնական խնամք (տանը մատուցվող ծառայություններից և աջակցություններից դուրս) և Տնային տնտեսության ծառայություններ
 - Միջավայրի մատչելիության հարմարեցումներ (տնային փոփոխություններ)
 - Ճաշեր/Բժշկականորեն հարմարեցված ճաշեր
 - Սթափեցման կենտրոններ
 - Հեղձուկի (ասթմա) դարմանում

Եթե օգնության կարիք ունեք կամ ցանկանում եք պարզել, թե ինչ Համայնքային աջակցություններ կարող են հասանելի լինել Ձեզ, զանգահարեք 1-800-605-2556 (TTY 711) համարով կամ զանգահարեք Ձեր առողջական խնամքի մատակարարին:

Գլխավոր օրգանների փոխապատվաստում

Փոխապատվաստումներ մինչև 21 տարեկան երեխաների համար

Նահանգի օրենքը պահանջում է, որ երեխաները, ովքեր փոխապատվաստումների կարիք ունեն, ուղղորդվեն Կալիֆորնիայի Երեխաների Ծառայությունների (CCS) ծրագրին՝ որոշելու, թե արդյոք երեխան իրավասու է CCS-ի համար: Եթե երեխան իրավասու է CCS-ի համար, CCS-ը կհոգա փոխապատվաստման և դրա հետ կապված ծառայությունների ծախսերը: Եթե երեխան իրավասու չէ CCS-ի համար, ապա Blue Shield Promise-ը երեխային կուղարկի որակավորված փոխապատվաստման կենտրոն՝ գնահատման համար: Եթե փոխապատվաստման կենտրոնը հաստատի, որ փոխապատվաստումն անհրաժեշտ է և անվտանգ, Blue Shield Promise-ը կփոխհատուցի փոխապատվաստումը և դրա հետ կապված ծառայությունները:

Փոխապատվաստումներ 21 տարեկան և տարեց չափահասների համար



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսագանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝

blueshieldca.com/promise/medi-cal:

Եթե Ձեր բժիշկը որոշի, որ Ձեզ կարող է անհրաժեշտ լինել հիմնական օրգանի փոխպատվաստում, Blue Shield Promise-ը Ձեզ կուղարկի որակավորված փոխպատվաստման կենտրոն՝ գնահատման համար: Եթե փոխպատվաստման կենտրոնը հաստատի, որ փոխպատվաստումն անհրաժեշտ է և անվտանգ Ձեր առողջական վիճակի համար, Blue Shield Promise-ը կապահովագրի փոխպատվաստումը և դրա հետ կապված այլ ծառայությունները:

Հետևյալ գլխավոր օրգանների փոխպատվաստումները, որոնք ապահովագրված են Blue Shield Promise-ի կողմից, ներառում են, բայց չեն սահմանափակվում հետևյալով՝

- Ոսկրածուծ
- Սիրտ
- Սիրտ/թոքեր
- Երիկամ
- Երիկամ/Ենթաստամոքսային գեղձ
- Լյարդ
- Լյարդ/բարակ աղիք
- Թոքեր
- Ենթաստամոքսային գեղձ
- Բարակ աղիք

Medi-Cal-ի ուրիշ ծրագրեր և ծառայություններ

Ուրիշ ծառայություններ, որոնք կարող եք ստանալ Վճարովի

ծառայությամբ (FFS) Medi-Cal-ի կամ այլ Medi-Cal-ի ծրագրերի միջոցով

Երբեմն Blue Shield Promise-ը չի ապահովագրում ծառայությունները, բայց այնուամենայնիվ կարող եք դրանք ստանալ FFS Medi-Cal-ի կամ ուրիշ Medi-Cal-ի ծրագրերի միջոցով: Blue Shield Promise-ը կհամակարգի այլ ծրագրերի հետ՝ ապահովելու, որ Դուք ստանաք բոլոր բժշկականորեն անհրաժեշտ ծառայությունները, նույնիսկ եթե այդ ծառայությունները ապահովագրված են մեկ այլ ծրագրով, այլ ոչ թե Blue Shield Promise-ով: Այս բաժնում թվարկված են այս ծառայություններից մի քանիսը: Ավելին իմանալու համար զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով:



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝

blueshieldca.com/promise/medi-cal:

Ամբուլատոր դեղատոմսային դեղեր

Դեղատոմսային դեղեր, որոնք ապահովագրված են Medi-Cal Rx-ի կողմից

Դեղատան կողմից տրվող դեղատոմսային դեղերը ապահովագրված են Medi-Cal Rx-ի կողմից՝ Medi-Cal FFS ծրագրի: Գրասենյակում կամ կլինիկայում մատակարարի կողմից տրված որոշ դեղեր կարող են ապահովագրվել Blue Shield Promise-ի կողմից: Ձեր մատակարարը կարող է Ձեզ դեղեր նշանակել, որոնք Medi-Cal Rx-ի պայմանագրային դեղերի ցանկում են:

Երբեմն դեղը անհրաժեշտ է, և այն չկա պայմանագրային դեղերի ցանկում: Այս դեղերը պետք է վավերացվեն, նախքան դրանք դեղատոմսից լցնելը: Medi-Cal Rx-ը այսպիսի խնդրանքները կվերանայի և կորոշի 24 ժամվա ընթացքում:

- Ձեր ամբուլատոր դեղատան դեղագործը կարող է Ձեզ 72-ժամյա արտակարգ իրավիճակի պաշար տալ, եթե գտնի, որ այն անհրաժեշտ է Ձեզ: Medi-Cal Rx-ը կվճարի ամբուլատոր դեղատան կողմից տրվող շտապ դեղերի պաշարի համար:
- Medi-Cal Rx-ը կարող է «ոչ» ասել ոչ շտապ օգնության խնդրանքին: Եթե նրանք «ոչ» ասեն, Ձեզ նամակ կուղարկեն՝ տեղեկացնելու, թե ինչու: Նրանք կբացատրեն Ձեզ, թե որոնք են Ձեր ընտրությունները: Հավելյալ տեղեկությունների համար գնացեք 6-րդ՝ «Խնդիրների հաղորդում և լուծում» Գլխի «Բողոքներ» բաժինը:

Պարզելու համար, թե արդյոք դեղը գտնվում է Պայմանագրային դեղերի ցանկում կամ Պայմանագրային դեղերի ցանկի պատճենը ստանալու համար, զանգահարեք Medi-Cal Rx 800-977-2273 (TTY 800-977-2273 և սեղմեք 7 կամ 711), այցելեք Medi-Cal Rx կայք՝ <https://medi-calrx.dhcs.ca.gov/home/>:

Դեղատոմսներ

Եթե լցնում կամ վերալցնում եք մի դեղատոմս, պարտավոր եք Ձեր դեղատոմսային դեղերն ստանալ Medi-Cal Rx-ի հետ գործող դեղատոմսից: Medi-Cal Rx Դեղատոմսերի հասցեագրքում կարող եք գտնել Medi-Cal Rx-ի հետ աշխատող դեղատոմսերի ցանկը



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսագանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ blueshieldca.com/promise/medi-cal/:

հետևյալ հասցեով՝ <https://medi-calrx.dhcs.ca.gov/home/>: Դուք կարող եք նաև գտնել Ձեր մոտակայքում գտնվող դեղատոն կամ դեղատոն, որը կարող է փոստով ուղարկել Ձեր դեղատոմսը Ձեզ՝ զանգահարելով Medi-Cal Rx 800-977-2273 (TTY 800-977-2273 և սեղմեք 7 կամ 711):

Դեղատոնն ընտրելուց հետո, Ձեր դեղատոմսը տարեք դեղատոն: Ձեր մատակարարը կարող է դեղատոն ուղարկել այն Ձեզ համար: Դեղատանը տվեք Ձեր դեղատոմսը Ձեր Medi-Cal Նպաստների ճանաչողական քարտի (BIC) հետ միասին: Ստուգեք, որ դեղատոնն անպայման իմանա Ձեր ստացած բոլոր դեղերի և որևէ ալերգիայի մասին: Եթե Ձեր դեղատոմսի մասին ունեք որևէ հարց, անպայման հարցրեք դեղագործին:

Անդամները կարող են նաև փոխադրման ծառայություններ ստանալ Blue Shield Promise-ից՝ դեղատոններ հասնելու համար: Փոխադրման ծառայությունների մասին ավելին իմանալու համար կարդացեք «Փոխադրման նպաստներ իրավիճակների համար, որոնք արտակարգ իրավիճակներ չեն» բաժինը այս տեղեկագրքում:

Մասնագիտացված հոգեկան առողջության ծառայություններ

Հոգեկան առողջության որոշ ծառայություններ մատուցվում են վարչաշրջանի հոգեկան առողջության ծրագրերով՝ Blue Shield Promise: Դրանք ներառում են մասնագիտացված հոգեկան առողջության ծառայություններ (SMHS) և մատուցվում են Medi-Cal-ի անդամներին, ովքեր բավարարում են SMHS-ի չափանիշները: SMHS-ը կարող է ընդգրկել հետևյալ ստացիոնար և ամբուլատոր ծառայությունները՝

Ամբուլատոր ծառայություններ՝

- Հոգեկան առողջության ծառայություններ
- Դեղամիջոցների աջակցության ծառայություններ
- Ցերեկային բուժման լարված ծառայություններ
- Ցերեկային վերականգնողական ծառայություններ
- Ճգնաժամի միջամտության ծառայություններ
- Ճգնաժամի կայունացման



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ blueshieldca.com/promise/medi-cal/:

ծառայություններ

- Նպատակային գործի կառավարման ծառայություններ
- Թերապևտիկ վարքագծային ծառայություններ (ապահովագրված են մինչև 21 տարեկան անդամների համար)
- Լարված խնամքի համակարգում (Intensive Care Coordination, ICC) (ապահովագրված են մինչև 21 տարեկան անդամների

համար)

- Լարված տնային ծառայություններ (Intensive Home-Based Services, IHBS) (ապահովագրված են մինչև 21 տարեկան անդամների համար)
- Խնամատուի թերապևտական խնամք (Therapeutic Foster Care, TFC) (ապահովագրված են մինչև 21 տարեկան անդամների համար)

Բնակության վայրում ծառայություններ՝

- Բնակության վայրում չափահասների բուժման ծառայություններ

- Բնակության վայրում ճգնաժամային բուժման ծառայություններ

Ստացիոնար ծառայություններ՝

- Սուր հոգեբուժական ստացիոնար հիվանդանոցային ծառայություններ

- Հոգեբուժական ստացիոնար հիվանդանոցային մասնագիտական ծառայություններ
- Հոգեբուժական առողջապահական հաստատության ծառայություններ

Մասնագիտացված հոգեկան առողջության ծառայությունների մասին ավելին իմանալու համար, որը տրամադրում է վարչաշրջանի հոգեկան առողջության ծրագիրը, կարող եք



Ձանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսագանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝

blueshieldca.com/promise/medi-cal:

զանգահարել Ձեր վարչաշրջանի հոգեկան առողջության ծրագրին: Բոլոր վարչաշրջանների անվճար հեռախոսահամարները առցանց գտնելու համար այցելեք հետևյալ կայքը՝ dhcs.ca.gov/individuals/Pages/MHPContaktList.aspx: Եթե Blue Shield Promise որոշում է, որ Դուք կարիքն ունեք վարչաշրջանի հոգեկան առողջության ծրագրի ծառայություններին, Blue Shield Promise-ը կօգնի, որ շփվեք վարչաշրջանի հոգեկան առողջության ծրագրի ծառայությունների հետ:

Թմրանյութի օգտագործման խանգարման բուժման ծառայություններ

Վարչաշրջանը մատուցում է թմրանյութի օգտագործման խանգարման ծառայություններ Medi-Cal-ի անդամներին, ովքեր բավարարում են չափանիշներն այս ծառայությունների համար: Անդամները, որոնք ենթակա են թմրանյութերի օգտագործման խանգարման բուժման ծառայությունների համար, ուղարկվում են իրենց վարչաշրջանի բաժին՝ բուժման նպատակով: Բոլոր վարչաշրջանների հեռախոսահամարները առցանց գտնելու համար այցելեք հետևյալ կայքը՝ https://dhcs.ca.gov/individuals/Pages/SUD_County_Access_Lines.aspx:

Կալիֆորնիայի Երեխաների ծառայություններ (CCS)

CCS-ը Medi-Cal-ի ծրագիր է, որը բուժում է մինչև 21 տարեկան և որոշակի առողջական վիճակներ, հիվանդություններ կամ քրոնիկ առողջական խնդիրներ ունեցող երեխաների, ովքեր լրացնում են CCS ծրագրի կանոններ: Եթե Blue Shield Promise-ը կամ Ձեր PCP-ն համոզված է, որ Ձեր երեխան ունի CCS-ի իրավասու վիճակ, նրան կուղղորդեն վարչաշրջանի CCS-ի ծրագիր, իրավասության համար գնահատելու նպատակով:

Վարչաշրջանի CCS ծրագրի անձնակազմը կորոշի, որ արդյո՞ք Ձեր երեխան որակավորվում է CCS ծառայությունների համար: Blue Shield Promise-ը չի որոշում CCS-ի իրավասությունը: Եթե Ձեր երեխան որակավորվում է այս տեսակի խնամք ստանալու համար, CCS-ի մատակարարները նրան կբուժեն CCS-ին իրավասու վիճակի համար: Blue Shield Promise-ը կշարունակի ապահովագրել ծառայության այնպիսի տեսակներ, որոնք կապ չունեն CCS-ի վիճակի հետ, ինչպես՝ ֆիզիկական քննությունները, պատվաստումները և քաջառողջ երեխայի ստուգումները:



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսագանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ blueshieldca.com/promise/medi-cal:

Blue Shield Promise-ը չի ապահովագրում CCS ծրագրի կողմից մատուցվող ծառայությունները: Որպեսզի CCS-ն ապահովագրի այս ծառայությունները, CCS-ը պետք է վավերացնի մատակարարը, ծառայությունները և սարքերը:

CCS-ը չի ապահովագրում բոլոր առողջական վիճակները: CCS-ն ապահովագրում է հիմնականում առողջական վիճակներ, որոնք ֆիզիկապես անկարող են դարձնում կամ որոնք անհրաժեշտ է բուժել դեղերով, վիրահատությամբ կամ վերականգնումով (վերականգնողական կենտրոն): CCS-ն ապահովագրում է երեխաների, որոնք ունեն հետևյալի նման առողջական վիճակներ՝

- Բնածին սրտի հիվանդություն
- Քաղցկեղներ
- Նորագոյացություններ
- Արյունահոսականություն
- Մանգաղանման բջջային սակավարյունություն
- Վահանագեղձի խնդիրներ
- Շաքարախտ
- Լուրջ քրոնիկ երիկամային խնդիրներ
- Լյարդի հիվանդություն
- Աղիքային հիվանդություն
- Շրթնաճոռթուկ/քիմք
- Ողնաշարի ճեղքվածք
- Լսողության կորուստ
- Կատարակտներ
- Ուղեղի կաթված
- Նոպա որոշակի պարագաների ներքո
- Ռևմատիզմանման հոդաբորբ
- Մկանային սննդախանգար
- ՁԻԱՀ
- Գլխի, ուղեղի կամ ողնաշարի սաստիկ վնասվածք
- Սաստիկ այրվածքներ
- Խիստ ծուռ ատամներ

Medi-Cal-ն է վճարում CCS ծառայությունների համար: Եթե Ձեր երեխան իրավասու չէ CCS ծրագրի ծառայություններին, նա կշարունակի բժշկականորեն անհրաժեշտ խնամք ստանալ Blue Shield Promise-ից:



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսագանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝

blueshieldca.com/promise/medi-cal:

CCS-ի մասին ավելին իմանալու համար կարող եք այցելել CCS-ի համացանցային կայք՝ <https://www.dhcs.ca.gov/services/ccs>: Կամ զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով:

Ծառայություններ, որոնք չեք կարող ստանալ Blue Shield Promise-ի կամ Medi-Cal-ի միջոցով

Կան մի շարք ծառայություններ, որոնք ո՛չ Blue Shield Promise-ը, ո՛չ էլ Medi-Cal-ը կապահովագրեն, ներառյալ՝ առանց դրանցով չսահմանափակվելու, հետևյալը՝

- Փորձանոթային պտղավորում (In Vitro Fertilization, IVF), ներառյալ՝ առանց դրանցով սահմանափակվելու, անբերրիության ուսումնասիրություններն ու բուժօգործողությունները՝ անբերրիությունն ախտորոշելու կամ բուժելու համար:
- Պտղաբերության պահպանում
- Փորձարարական ծառայություններ
- Տնային փոփոխություններ
- Փոխադրական միջոցների փոփոխություններ
- Գեղարարական վիրահատություն

Blue Shield Promise-ը կարող է ապահովագրել այն ծառայությունը, որը նպաստ չէ, եթե հաստատվի բժշկական անհրաժեշտություն: Ձեր մատակարարը պետք է Նախօրոք լիազորում ներկայացնի Blue Shield Promise-ին՝ պատճառաբանելով, թե ինչու այն ծառայությունը, որը նպաստ չէ, բժշկականորեն անհրաժեշտ է:

Ավելին իմանալու համար զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով:



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսագանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ blueshieldca.com/promise/medi-cal:

Նոր և առկա տեխնոլոգիաների գնահատում

Blue Shield Promise-ը հետևում է առողջական խնամքի բնագավառում զարգացումներին և առաջընթացին՝ ուսումնասիրելով նոր բուժումները, դեղերը, բուժգործողություններն ու սարքերը: Սա նաև կոչվում է «նոր տեխնոլոգիա»:

Blue Shield Promise-ը հետևում է նոր տեխնոլոգիայի, որպեսզի անդամների համար երաշխավորի ապահով և արդյունավետ խնամքի մատչելիությունը: Blue Shield Promise-ը նոր տեխնոլոգիան վերանայում է բժշկական և հոգեկան առողջության բուժգործողությունների, դեղագիտական զարգացումների և սարքերի համար: Նոր տեխնոլոգիայի վերանայման խնդրանքները կարող են գալ անդամից, գործնական մասնագետից, կազմակերպությունից, Blue Shield Promise-ի վերանայող բժիշկներից կամ անձնակազմի այլ անդամներից:



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝

blueshieldca.com/promise/medi-cal:

5. Երեխաների և երիտասարդների լավ խնամք

Մինչև 21 տարեկան երեխաներն ու երիտասարդները կարող են ստանալ հատուկ առողջապահական ծառայություններ՝ անդամագրվելուն պես: Մա ապահովում է, որ նրանք ստանում են ճիշտ կանխարգելիչ, ատամնաբուժական, հոգեկան առողջության և զարգացման և մասնագիտացված ծառայություններ: Այս գլուխը բացատրում է այս ծառայությունները:

Մանկաբուժական ծառայություններ (մինչև 21 տարեկան երեխաների համար)

Մինչև 21 տարեկան անդամները ապահովագրված են անհրաժեշտ խնամքի համար: Հետևյալ ցանկը ներառում է բժշկականորեն անհրաժեշտ ծառայություններ թերությունները բուժելու կամ բարելավելու համար, ինչպես նաև ֆիզիկական կամ հոգեկան ախտորոշում: Ապահովագրված ծառայությունները ներառում են բայց չեն սահմանափակվում ստորև ներկայացվող ցանկով՝

- Երեխաների այցեր և դեռահասների ստուգումներ (կարևոր այցեր, որոնք անհրաժեշտ են երեխաներին)
- Անընկալացումներ (սրսկումներ)
- Վարքագծային առողջության գնահատում և բուժում
- Հոգեկան առողջության գնահատում և բուժում, ներառյալ՝ անհատական, խմբական և ընտանիքի հոգեբուժություն (մասնագիտացված հոգեկան առողջության ծառայություններն ապահովագրվում են վարչաշրջանի կողմից)



Ձանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝

blueshieldca.com/promise/medi-cal:

- Լաբորատոր ստուգումներ, ներառյալ արյան մեջ կապարով թունավորման զննում
- Առողջապահական և կանխարգելիչ կրթություն
- Տեսողական ծառայություններ
- Ատամնաբուժական ծառայություններ (ապահովագրվում է Medi-Cal Dental-ի ներքո)
- Լսողության ծառայություններ (ապահովագրված է CCS-ի կողմից որակավորված երեխաների համար): Blue Shield Promise-ը կապահովագրի ծառայություններ այն երեխաների համար, ովքեր չեն որակավորվում CCS-ի համար:

Այս ծառայությունները կոչվում են վաղ և պարբերաբար զննման, ախտորոշման և բուժման (EPSDT) ծառայություններ: EPSDT ծառայություններ, որոնք խորհուրդ են տրվում մանկաբույժների կողմից Փայլուն ապագաների ուղեցույցներում (https://downloads.aap.org/AAP/PDF/periodicity_schedule.pdf) օգնելու Ձեզ կամ Ձեր երեխային առողջ մնալ, ապահովագրվում են Ձեզ համար անվճար:

Քաջառողջ երեխայի ստուգումները և կանխարգելիչ խնամքը

Կանխարգելիչ խնամքը ներառում է կանոնավոր առողջական ստուգումներ, զննումներ, որոնք կօգնեն Ձեր բժշկին ժամանակին հայտնաբերել խնդիրները, և խորհրդատվական ծառայություններ՝ հայտնաբերելու վատառողջություն, հիվանդություններ կամ բժշկական վիճակներ, նախքան դրանք խնդիրներ առաջացնելը: Պարբերաբար ստուգումները օգնում են Ձեզ կամ Ձեր երեխայի բժշկին ցանկացած խնդիր գտնել: Խնդիրները կարող են ներառել բժշկական, ատամնաբուժական, տեսողության, լսողության, հոգեկան առողջության և ցանկացած թմրանյութի օգտագործման (թմրամիջոցների) խանգարումներ: Blue Shield Promise-ն ապահովագրում է ստուգումներ՝ խնդիրներ հայտնաբերելու համար (ներառյալ՝ արյան մեջ կապարի մակարդակի գնահատումը), երբ էլ որ դա անհրաժեշտ լինի, նույնիսկ եթե դա չի կատարվում Ձեր կամ Ձեր երեխայի սովորական ստուգման պահին:



Չանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսագանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ blueshieldca.com/promise/medi-cal:

Կանխարգելիչ խնամքը ներառում է նաև Ձեզ կամ Ձեր երեխային անհրաժեշտ սրսկումներ: Blue Shield Promise-ը բոլոր անդամագրված երեխաների համար պետք է երաշխավորի առողջական խնամքի այցի պահին անհրաժեշտ սրսկումների ստացումը: Կանխարգելիչ խնամքի ծառայություններ և զննումներ մատչելի են անվճար և առանց նախավճարային (նախօրոք լիազորում):

Ձեր երեխան պետք է ստուգումներ անցնի հետևյալ տարիքում՝

- | | |
|------------------------|---------------------------------------|
| ▪ Ծնվելուց 2-4 օր հետո | ▪ 12 ամսական |
| ▪ 1 ամսական | ▪ 15 ամսական |
| ▪ 2 ամսական | ▪ 18 ամսական |
| ▪ 4 ամսական | ▪ 24 ամսական |
| ▪ 6 ամսական | ▪ 30 ամսական |
| ▪ 9 ամսական | ▪ Տարին մեկ անգամ՝ 3-ից 20 տարեկանում |

Քաջառողջ երեխայի ստուգումները ներառում են՝

- Ամբողջական պատմություն և ոտքից գլուխ ֆիզիկական հետազոտություն
- Տարիքին համապատասխան սրսկումներ (Կալիֆորնիան հետևում է մանկաբուժության ամերիկյան ակադեմիայի Պայծառ ապագաների պարբերականության ժամանակացույցին https://downloads.aap.org/AAP/PDF/periodicity_schedule.pdf)
- Լաբորատոր ստուգումներ, ներառյալ արյան մեջ կապարով թունավորման զննում
- Առողջապահական կրթություն
- Տեսողության և լսողության ստուգում
- Բերանի խոռոչի առողջության ստուգում
- Վարքագծային առողջության գնահատում

Երբ ֆիզիկական խնդիր կամ հոգեկան հարց է հայտնաբերվում ստուգման կամ զննման պահին, հնարավոր է, որ գտնվի մի այնպիսի խնամք, որը ուղղի խնդիրը կամ օգնի դրան: Եթե խնամքը բժշկականորեն անհրաժեշտ է, և Blue Shield Promise-ը պատասխանատու է խնամքի վճարման համար, ապա Blue Shield Promise-ը խնամքն ապահովագրում է անվճար: Այս ծառայություններն ընդգրկում են՝



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսագանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ blueshieldca.com/promise/medi-cal:

- Բժիշկ, առաջնային խնամք տրամադրող բուժքույր և հիվանդանոցային խնամք
- Սրկուումներ՝ Ձեզ առողջ պահելու համար
- Ֆիզիկական խոսքի/լեզվի և աշխատանքային թերապիաներ
- Տնային առողջապահության ծառայություններ, որոնք կարող են լինել բժշկական սարքեր, պաշարներ և գործիքներ
- Տեսողության խնդիրների բուժում, ներառյալ ակնոցները
- Լսողության խնդիրների բուժում, ներառյալ լսողական սարքերը, երբ դրանք ապահովագրված չեն CCS-ով
- Վարքագծային առողջության բուժում աուտիզմի բազմաշերտ խանգարման և ուրիշ զարգացական հաշմանդամությունների համար
- Դեպքի կառավարում և առողջապահական կրթություն
- Վերականգնողական վիրահատություն, որը վիրահատություն է ուղղելու կամ վերանորոգելու մարմնի անբնականոն կառուցվածքները, որոնք առաջանում են բնածին թերություններից, զարգացական անբնականոնություններից, տրավմայից, վարակից, նորագոյացություններից կամ հիվանդություններից, բարելավելու գործառնությունը կամ ստեղծելու բնականոն տեսք:

Արյան մեջ կապարով թունավորման զննում

Blue Shield Promise -ում անդամագրված բոլոր երեխաները պետք է արյան մեջ կապարով թունավորման զննում անցնեն 12 և 24 ամսականում կամ 36-ից 72 ամսականում, եթե նրանք ավելի վաղ զննում չեն անցել:

Օգնություն երեխաների և երիտասարդների լավ խնամքի ծառայություններ ստանալու վերաբերյալ

Blue Shield Promise-ը կօգնի մինչև 21 տարեկան անդամներին և նրանց ընտանիքներին ստանալ իրենց անհրաժեշտ ծառայությունները: Blue Shield Promise-ի խնամքի համակարգողը կարող է՝



Ձանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսագանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ blueshieldca.com/promise/medi-cal:

- Ծանոթացնել Ձեզ հասանելի ծառայությունների մասին
- Անհրաժեշտության դեպքում օգնել գտնել ցանցային կամ արտացանցային մատակարարներ
- Օգնել նշանակումներ կատարել
- Կազմակերպել բժշկական փոխադրում, որպեսզի երեխաները կարողանան հասնել իրենց ժամադրություններին
- Օգնել համակարգել խնամքը FFS Medi-Cal-ի միջոցով հասանելի ծառայությունների համար, ինչպիսիք են՝
 - Բուժում և վերականգնողական ծառայություններ հոգեկան առողջության և թմրանյութի օգտագործման խանգարումների համար
 - Բուժում ատամնաբուժական խնդիրների համար, ներառյալ ձևախախտված ատամների ուղղում

Ուրիշ ծառայություններ, որոնք կարող եք ստանալ Վճարովի ծառայությամբ (FFS) Medi-Cal-ի կամ ուրիշ ծրագրերի միջոցով

Ատամնաբուժական ստուգումներ

Ձեր երեխայի լնդերը մաքուր պահեք՝ ամեն օր նրբորեն սրբելով լնդերը ատամները լվացող լաթով։ Մոտավորապես չորսից վեց ամսականում «ատամների սորումը» կսկսվի, երբ կաթնատամները սկսում են հայտնվել։ Դուք պետք է նշանակեք Ձեր երեխայի առաջին ատամնաբուժական այցը հենց որ նրա առաջին ատամը դուրս գա կամ առաջին ծննդյան օրը՝ կախված նրանից, թե որը կլինի առաջինը։

Հետևյալ Medi-Cal ատամնաբուժական ծառայություններն անվճար կամ էժան ծառայություններ են՝



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք
1-800-605-2556 (TTY 711) համարով։ Blue Shield Promise-ը այստեղ է
երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00։ Հեռախոսազանգն անվճար է։
Կամ զանգահարեք Կալիֆոռնիայի փոխանցման հեռախոսագիծ 711
համարով։ Այցելեք առցանց այս հասցեով՝
blueshieldca.com/promise/medi-cal:

1-ից 4 տարեկան մանուկների համար

- Մանուկների առաջին ատամնաբուժական այցը
- Մանուկների առաջին ատամնաբուժական հետազոտությունը
- Ատամնաբուժական հետազոտություններ (6 ամիսը մեկ, ծննդից մինչև 3 տարեկանը 3 ամիսը մեկ)
- Ռենտգեն պատկերումները
- Ատամների մաքրում (6 ամիսը մեկ)
- Ֆտորիդային լաք (6 ամիսը մեկ)
- Արտակարգ իրավիճակի ծառայությունները
- Ամբուլատոր ծառայություններ
- *Հանգստացում (եթե բժշկականորեն անհրաժեշտ է)

5-ից 12 տարեկան երեխաներ

- Ատամնաբուժական հետազոտություններ (6 ամիսը մեկ)
- Ռենտգեն պատկերումները
- Ֆտորիդային լաք (6 ամիսը մեկ)
- Ատամների մաքրում (6 ամիսը մեկ)
- Աղորիքների լցոններ
- Լցոններ
- Ատամնաբուժական խողովակներ
- Արտակարգ իրավիճակի ծառայությունները
- Ամբուլատոր ծառայություններ
- *Հանգստացում (եթե բժշկականորեն անհրաժեշտ է)

13-ից 20 տարեկան երեխաներ

- Ատամնաբուժական հետազոտություններ (6 ամիսը մեկ)
- Ռենտգեն պատկերումները
- Ֆտորիդային լաք (6 ամիսը մեկ)
- Ատամների մաքրում (6 ամիսը մեկ)
- Ձևախախտված ատամների ուղղում (ամրակներ)
- Որակավորում ունեցող անձանց համար
- Լցոններ
- Ատամի պսակներ
- Ատամնաբուժական խողովակներ



Չանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագլի՝ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝

blueshieldca.com/promise/medi-cal:

- Ատամի հեռացում
- Արտակարգ իրավիճակի ծառայությունները
- Ամբուլատոր ծառայություններ
- Հանգստացում (եթե բժշկականորեն անհրաժեշտ է)

*Հանգստացումը և ընդհանուր անզգայացումը պետք է հաշվի առնել, երբ փաստագրված է, թե ինչու տեղային անզգայացումը հարմար չէ կամ հակացուցված չէ, և ատամնաբուժական բուժումը նախավավերացված է կամ նախավավերացման (նախօրոք լիազորում) կարիք չկա:

Հակացուցումները ներառում են, առանց դրանցով սահմանափակվելու՝

- Ֆիզիկական, վարքագծային, զարգացման կամ հուզական վիճակ, որն արգելում է հիվանդին արձագանքել մատակարարի կողմից բուժում իրականացնելու փորձերին
- Ընդարձակ վերականգնողական կամ վիրաբուժական միջամտություններ
- Չհամագործակցող երեխա
- Սուր վարակ ներարկման վայրում
- Ցավը վերահսկելու տեղային անզգայացնող միջոցի ձախողում

Եթե հարցեր ունեք կամ ցանկանում եք ավելին իմանալ ատամնաբուժական ծառայությունների վերաբերյալ, զանգահարեք Medi-Cal ատամնաբուժական ծրագրին 1-800-322-6384 (TTY 1-800-735-2922 կամ 711) համարով: Կարող եք նաև այցելել Medi-Cal-ի ատամնաբուժական ծրագրի կայքը՝ <https://smilecalifornia.org/>:

Կանխարգելիչ կրթության համար լրացուցիչ օգնության ծառայություններ

Եթե անհանգստանում եք, որ Ձեր երեխան դժվարանում է դպրոցի կյանքում մասնակցել և սովորել, խոսեք երեխայի առաջնային խնամքի բժշկի, ուսուցիչների կամ դպրոցի վարիչների հետ: Ի լրումն Blue Shield Promise-ով ապահովագրվող Ձեր բժշկական նպաստների, կան ծառայություններ, որոնք դպրոցը պետք է տրամադրի, որպեսզի օգնի Ձեր երեխային սովորել և հետ չմնա:



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ blueshieldca.com/promise/medi-cal/:

Ծառայությունների օրինակները, որոնք կարող են մատուցվել Ձեր երեխային սովորելու համար, ներառում են՝

- Խոսքի և լեզվի ծառայություններ
- Հոգեբանական ծառայություններ
- Ֆիզիկական թերապիա
- Աշխատանքային թերապիա
- Օժանդակ տեխնոլոգիա
- Սոցիալական աշխատանքի ծառայություններ
- Խորհրդատվական ծառայություններ
- Դպրոցական բուժքրոջ ծառայություններ
- Փոխադրում դեպի դպրոց և դպրոցից

Այս ծառայությունները տրամադրվում և վճարվում են Կալիֆորնիայի կրթության բաժնի կողմից: Ձեր երեխայի բժիշկների և ուսուցիչների հետ միասին Դուք կարող եք կազմել անհատական ծրագիր, որը լավագույնս կօգնի Ձեր երեխային:



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ blueshieldca.com/promise/medi-cal:

6. Խնդիրների հաղորդում և լուծում

Խնդիրների հաղորդման և լուծման երկու եղանակ կա՝

- **Գանգատը** (կամ **բողոքը**) այն է, երբ խնդիր ունեք Blue Shield Promise-ի կամ մատակարարի հետ, կամ մատակարարից ստացած Ձեր առողջական խնամքի կամ բուժման հետ
- **Բողոքարկումը** այն է, երբ համաձայն չեք Ձեր ծառայությունները չապահովագրելու կամ փոխելու Blue Shield Promise-ի որոշման

Դուք իրավունք ունեք բողոքներ և բողոքարկումներ ներկայացնել Blue Shield Promise-ին, որպեսզի մեզ հայտնեք Ձեր խնդրի մասին: Մա Ձեզանից չի խլի Ձեր օրինական իրավունքներից կամ դարմաններից որևէ մեկը: Մենք խտրականություն չենք բանեցնի կամ փոխվեժի չի դիմի Ձեր դեմ՝ մեզ գանգատվելու պատճառով: Ձեր խնդրի մասին մեզ տեղյակ պահելը կօգնի, որ բարելավենք խնամքը բոլոր անդամների համար:

Պարտավոր եք միշտ նախ Blue Shield Promise-ի հետ կապ հաստատել՝ մեզ իմացնելու Ձեր խնդիրը: Զանգահարեք մեզ երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00-ը Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով կամ այցելեք՝ blueshieldca.com/promise/medi-cal կայքը: Հայտնեք մեզ Ձեր հարցի մասին:

Եթե Ձեր բողոքը կամ բողոքարկումը դեռևս չի լուծվել 30 օր հետո, կամ եթե դժգոհ եք արդյունքից, կարող եք զանգահարել Կալիֆորնիայի Կառավարվող առողջական խնամքի բաժին (California Department of Managed Health Care, DMHC) և խնդրել նրանց վերանայել Ձեր բողոքարկումը կամ Անկախ բժշկական վերանայում կատարել: Կարող եք զանգահարել DMHC 1-888-466-2219 (TTY 1-877-688-9891 կամ 711) համարով կամ այցելել DMHC-ի կայք՝ լրացուցիչ տեղեկությունների համար՝ <https://www.dmhc.ca.gov>:



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսագանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ blueshieldca.com/promise/medi-cal:

Կալիֆորնիայի Առողջական խնամքի սպասարկման բաժնի (Department of Health Care Services, DHCS) Medi-Cal-ի Կառավարվող խնամքի Իրավապաշտպանը ևս կարող է օգնել: Նրանք կարող են օգնել, եթե դժվարություն ունեք միանալու, փոխելու կամ հեռանալու առողջապահական ծրագրից: Նրանք նաև կարող են օգնել, եթե հեռացել եք և դժվարություն ունեք Ձեր Medi-Cal-ը Ձեր նոր վարչաշրջան փոխանցելու կապակցությամբ: Իրավապաշտպանին կարող եք զանգահարել երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 17:00-ը, 1-888-452-8609 համարով:

Կարող եք նաև Ձեր վարչաշրջանի իրավասության գրասենյակին բողոք ներկայացնել Ձեր Medi-Cal-ի իրավասության վերաբերյալ: Եթե վստահ չեք, թե ում կարող եք ներկայացնել Ձեր բողոքը, զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով:

Ձեր հավելյալ առողջապահական ծրագրին վերաբերող սխալ տեղեկության մասին հաղորդելու համար զանգահարեք Medi-Cal երկուշաբթիից ուրբաթ 8:00-ից 17:00-ը 1-800-541-5555 համարով:

Գանգատներ

Գանգատը (կամ բողոքը) այն է, երբ Դուք ունեք մի խնդիր կամ դժգոհ եք Blue Shield Promise-ից կամ մատակարարից Ձեր ստացած ծառայություններից: Գանգատ ներկայացնելու համար չկա ժամանակային սահմանափակում: Կարող եք գանգատ ներկայացնել Blue Shield Promise-ին որևէ ժամանակ հեռախոսով, գրավոր կամ առցանց:

- **Հեռախոսով՝** Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00-ը: Տվեք Ձեր Առողջապահական ծրագրի ճանաչողական համարը, Ձեր անունը և Ձեր գանգատի դրդապատճառը:
- **Փոստով՝** Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով և խնդրեք, որ ձևաթուղթը փոստով



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսագանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝

blueshieldca.com/promise/medi-cal:

ուղարկեն Ձեզ: Ձևաթուղթն ստանալուց հետո, լրացրեք այն: Անպայման ընդգրկեք Ձեր անունը, առողջապահական ծրագրի ճանաչողական համարը և Ձեր գանգատի դրդապատճառը: Մեզ հայտնեք, թե ինչ է պատահել և ինչպես կարող ենք օգնել Ձեզ:

Ձևաթուղթը փոստով առաքեք այստեղ՝

Blue Shield Promise Health Plan
Appeals and Grievance Department
601 Potrero Grande Dr.
Monterey Park, CA 91755

Ձեր բժշկի գրասենյակը իր տրամադրության ներքո կունենա գանգատի ձևաթղթեր:

- **Առցանց՝** Այցելեք Blue Shield Promise-ի կայքը: Գնացեք blueshieldca.com/promise/medi-cal կայքը:

Եթե գանգատի լրացման համար օգնության կարիք ունեք, մենք կարող ենք օգնել Ձեզ: Մենք կարող ենք անվճար լեզվական ծառայություններ մատուցել Ձեզ: Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով:

Ձեր գանգատն ստանալուց հետո 5 օրվա ընթացքում Blue Shield Promise-ը նամակ կուղարկի Ձեզ՝ տեղեկացնելով, որ ստացել ենք այն: 30 օրվա ընթացքում, մենք Ձեզ կուղարկենք մի ուրիշ նամակ, որը կհայտնի, թե ինչպես ենք լուծել Ձեր խնդիրը:

Եթե Blue Shield Promise զանգահարեք մի բողոքի մասին, որը չի վերաբերում առողջական խնամքի ապահովագրության, բժշկական անհրաժեշտության, փորձառական կամ հետազոտական բնույթ ունեցող բուժման, և Ձեր բողոքը լուծվում է մինչև հաջորդ աշխատանքային օրվա ավարտը, հնարավոր է, որ նամակ չստանաք:

Եթե ունեք մի հրատապ հարց, որը վերաբերում է լուրջ առողջական մտահոգության, մենք կսկսենք արագացված (արագ) վերանայում և Ձեզ որոշում կտանք 72 ժամվա ընթացքում: Արագացված վերանայում խնդրելու համար մեզ զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Ձեր գանգատը ստանալուց հետո 72 ժամվա ընթացքում մենք որոշում կկայացնենք այն մասին, թե ինչպես ենք վերանայելու Ձեր գանգատը և արդյոք արագացնելու ենք դրա



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսագանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ blueshieldca.com/promise/medi-cal:

գործընթացը: Եթե մենք որոշենք, որ չենք արագացնելու Ձեր գանգատի գործընթացը, մենք Ձեզ տեղյակ կպահենք, որ Ձեր գանգատը կլուծենք 30 օրվա ընթացքում: Կարող եք ուղղակի շփվել DMHC-ի հետ որևէ պատճառով, ներառյալ՝ եթե համոզված եք, որ Ձեր մտահոգությունը որակավորվում է արագացված վերանայման համար, կամ Blue Shield Promise-ը չի պատասխանում Ձեզ 72 ժամվա ընթացքում:

Medi-Cal Rx դեղատան նպաստների հետ կապված գանգատները ենթակա չեն Blue Shield Promise-ի բողոքարկման գործընթացին կամ իրավասու չեն Անկախ բժշկական վերանայման համար: Անդամները կարող են գանգատներ ներկայացնել Medi-Cal Rx դեղատան նպաստների վերաբերյալ՝ զանգահարելով 800-977-2273 (TTY 800-977-2273 և սեղմեք 7 կամ 711) կամ այցելելով <https://medi-calrx.dhcs.ca.gov/home/> կայքը: Այնուամենայնիվ, դեղատնային նպաստների հետ կապված գանգատները, որոնք ենթակա չեն Medi-Cal Rx-ի, կարող են իրավասու լինել Անկախ բժշկական վերանայման համար: DMHC-ի անվճար հեռախոսահամարն է՝ 1-888-466-2219 և TTY հեռախոսագիծը՝ 1-877-688-9891: Անկախ բժշկական վերանայման/Գանգատի ձևաթուղթը և հրահանգները կարող եք գտնել առցանց DMHC-ի կայքում՝ <https://www.dmhc.ca.gov/>:

Բողոքարկումներ

Բողոքարկումը տարբեր է գանգատից: Բողոքարկումը խնդրանք է, որ մենք վերանայենք և փոխենք Ձեր ծառայության (ծառայությունների) վերաբերյալ մեր կայացրած որոշումը: Եթե Ձեզ ուղարկել ենք Գործողության ծանուցագրի (NOA) նամակ, Ձեզ հայտնելով, որ մերժում, ուշացնում, փոխում կամ դադարեցնում ենք մի ծառայություն(ներ)ը, և Դուք համաձայն չգտնվեք մեր որոշման, կարող եք խնդրել մեզ այն բողոքարկել: Ձեր PCP-ն կամ ուրիշ մատակարարը ևս կարող են խնդրել մեզ բողոքարկել Ձեր անունից՝ Ձեր գրավոր արտոնությամբ:

Դուք պետք խնդրեք բողոքարկումը մեր կողմից NOA-ի ստացման ամսաթվին հաջորդող 60 օրացուցային օրերի ընթացքում: Եթե մենք որոշել ենք նվազեցնել,



Չանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ blueshieldca.com/promise/medi-cal/:

կասեցնել կամ դադարեցնել ծառայություն(ներ)ը, որոնք Դուք այժմ ստանում եք, Դուք կարող եք շարունակել ստանալ այդ ծառայություն(ներ)ը, քանի դեռ սպասում եք Ձեր բողոքարկման որոշմանը: Սա կոչվում է Առկախված օգնության վճարում (Aid Paid Pending): Սպասվող վճարված օգնություն ստանալու համար Դուք պետք է բողոքարկում խնդրեք մեզանից 10 օրվա ընթացքում՝ սկսած NOA-ի ամսաթվից կամ մինչև այն ամսաթիվը, երբ մենք տեղեկացրել ենք, որ Ձեր ծառայություն(ներ)ը կդադարեցվի, կախված նրանից, թե որն է ավելի ուշ: Երբ այս հանգամանքներում բողոքարկում եք խնդրում, ծառայություն(ներ)ը կշարունակվի (կշարունակվեն):

Բողոքարկումը կարող եք ներկայացնել հեռախոսով, գրավոր, կամ առցանց՝

- **Հեռախոսով՝** Չանգահարեք Blue Shield Promise 1-800-605-2556 (TTY 711) համարով երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00-ը: Նշեք Ձեր անունը, առողջապահական ծրագրի համարը և Ձեր բողոքարկած ծառայությունը:
- **Փոստով՝** Չանգահարեք Blue Shield Promise 1-800-605-2556 (TTY 711) համարով և խնդրեք, որ ձևաթուղթը փոստով ուղարկեն Ձեզ: Ձևաթուղթն ստանալուց հետո, լրացրեք այն: Անպայման ընդգրկեք Ձեր անունը, առողջապահական ծրագրի համարը և Ձեր բողոքարկած ծառայությունը:

Ձևաթուղթը փոստով առաքեք այստեղ՝

Blue Shield Promise Health Plan
Appeals and Grievance Department
601 Potrero Grande Dr.
Monterey Park, CA 91755

Ձեր բժշկի գրասենյակը իր տրամադրության ներքո կունենա բողոքարկման ձևաթղթեր:

- **Առցանց՝** Այցելեք Blue Shield Promise-ի կայքը: Գնացեք blueshieldca.com/promise/medi-cal կայքը:

Եթե օգնության կարիք ունեք բողոքարկման կամ սպասվող վճարված օգնության, մենք կարող ենք օգնել Ձեզ: Մենք կարող ենք անվճար լեզվական ծառայություններ մատուցել Ձեզ: Չանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք



Չանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսագանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ blueshieldca.com/promise/medi-cal:

1-800-605-2556 (TTY 711) համարով:

Ձեր բողոքարկումն ստանալուց հետո 5 օրվա ընթացքում Blue Shield Promise-ը նամակ կուղարկի Ձեզ՝ տեղեկացնելով, որ ստացել ենք այն: 30 օրվա ընթացքում մենք Ձեզ կտեղեկացնենք մեր բողոքարկման որոշման մասին և կուղարկենք բողոքարկման մասին ծանուցման (NAR) նամակ: Եթե մենք 30 օրվա ընթացքում Ձեզ չենք հայտնում մեր բողոքարկման որոշումը, կարող եք պահանջել Նահանգային լսում և Անկախ բժշկական վերանայում (Independent Medical Review, IMR) DMHC-ի մոտ: Սակայն եթե նախ Նահանգային լսում խնդրեք և լսումը արդեն իսկ անցկացված լինի, Դուք չեք կարող IMR խնդրել: Այս դեպքում վերջնական խոսքը պատկանում է Նահանգային լսումին:

Եթե Դուք կամ Ձեր բժիշկը ցանկանում եք, որ մենք կայացնենք արագ որոշում, քանի որ Ձեր բողոքարկման լուծման համար պահանջված ժամանակը Ձեր կյանքը, առողջությունը կամ գործելու կարողությունը վտանգի կենթարկի, կարող եք արագացված (արագ) վերանայում խնդրել: Արագ վերանայում խնդրելու համար զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Մենք որոշում կկայացնենք Ձեր բողոքարկումն ստանալուց հետո 72 ժամից:

Ինչ անել բողոքարկման որոշման համաձայն չլինելու դեպքում

Եթե բողոքարկում եք խնդրել և ստացել եք NAR նամակ, որը Ձեզ հայտնում է, որ մենք չենք փոխել մեր որոշումը, կամ երբեք չեք ստացել NAR նամակ և անցել է 30 օր, կարող եք՝

- **Նահանգային լսում** խնդրել Կալիֆորնիայի Սոցիալական ծառայությունների բաժնից (Department of Social Services, CDSS) և մի դատավոր կվերանայի Ձեր գործը:
- Ներկայացնել Անկախ բժշկական վերանայման/Գանգատի ձևաթուղթ Կառավարվող առողջական խնամքի բաժնին (DMHC)՝ Blue Shield Promise-ի որոշումը վերանայելու կամ DMHC-ից **Անկախ բժշկական վերանայում (IMR)**



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսագանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝

blueshieldca.com/promise/medi-cal:

Խնդրելու համար: DMHC-ի IMR-ի ընթացքում Ձեր գործը կվերանայի երրորդ կողմի բժիշկը, ով Blue Shield Promise-ի անդամ չէ: DMHC-ի անվճար հեռախոսահամարն է՝ 1-888-466-2219 և TTY հեռախոսագիծը՝ 1-877-688-9891: Անկախ բժշկական վերանայման/Գանգատի ձևաթուղթը և հրահանգները կարող եք գտնել առցանց DMHC-ի կայքում՝ <https://www.dmhca.ca.gov>:

Դուք ոչ մի վճարում չեք կատարի Նահանգային լսումի կամ IMR-ի համար:

Կարող եք միաժամանակ և՛ Նահանգային լսում, և՛ IMR խնդրել: Սակայն եթե նախ Նահանգային լսում խնդրեք և լսումը արդեն իսկ անցկացված լինի, Դուք չեք կարող IMR խնդրել: Այս դեպքում վերջնական խոսքը պատկանում է Նահանգային լսումին:

Ներքևի բաժինները Ձեզ հավելյալ տեղեկություն կտան Նահանգային լսում և IMR խնդրելու կերպի մասին:

Medi-Cal Rx դեղատան նպաստների հետ կապված գանգատներ և բողոքարկումները չեն քննարկվում Blue Shield Promise-ի կողմից: Դուք կարող եմ գանգատներ և բողոքարկումներ ներկայացնել Medi-Cal Rx դեղատան նպաստների վերաբերյալ՝ գանգահարելով 800-977-2273 (TTY 800-977-2273 և սեղմեք 7 կամ 711):

Այնուամենայնիվ, դեղատնային նպաստների հետ կապված գանգատները և բողոքարկումները, որոնք ենթակա չեն Medi-Cal Rx-ի, կարող են իրավասու լինել Անկախ բժշկական վերանայման համար:

Եթե Դուք համաձայն չեք Ձեր Medi-Cal Rx դեղատան նպաստի հետ կապված որոշման հետ, կարող եք նահանգային լսում խնդրել: **Medi-Cal Rx դեղատան նպաստների որոշումները ենթակա չեն DMHC-ի մոտ IMR գործընթացին:**

Գանգատներ և Անկախ բժշկական վերանայումներ (IMR) կառավարվող առողջական խնամքի բաժնի մոտ

IMR-ը տեղի է ունենում երբ առողջապահական ծրագրի հետ կապ չունեցող մի արտաքին բժիշկ վերանայում է Ձեր գործը: IMR ցանկանալու դեպքում, նախ բողոքարկում պետք է ներկայացնեք Blue Shield Promise-ին: Ձեր առողջապահական ծրագրից 30 օրացուցային օրվա ընթացքում չլսելու դեպքում, կամ եթե դժգոհ եք Ձեր



Չանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսագանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ blueshieldca.com/promise/medi-cal:

առողջապահական ծրագրի որոշումից, կարող եք IMR խնդրել: IMR-ը պարտավոր եք խնդրել բողոքարկման որոշումը Ձեզ ծանուցող նամակի ամսաթվին հաջորդող 6 ամսում, բայց Դուք ունեք ընդամենը 120 օր՝ Նահանգային լսում խնդրելու համար. ուստի, եթե ցանկանում եք IMR և Նահանգային լսում, Ձեր բողոքը ներկայացնեք որքան հնարավոր է շուտ: Հիշեք, եթե նախ Նահանգային լսում խնդրեք և լսումը արդեն իսկ անցկացված լինի, Դուք չեք կարող IMR խնդրել: Այս դեպքում վերջնական խոսքը պատկանում է Նահանգային լսումին:

Թերևս կարողանաք IMR ստանալ անմիջապես՝ առանց նախ բողոքարկում ներկայացնելու: Սա այն դեպքում, որտեղ Ձեր առողջական մտահոգությունը հրատապ է, ինչպես՝ այնպիսիք, որոնք լուրջ վտանգ են Ձեր առողջության համար:

Եթե Ձեր բողոքը DMHC-ին չի որակավորում Ձեզ IMR-ի համար, DMHC-ը դեռ կվերանայի Ձեր բողոքը՝ համոզվելու, որ Blue Shield Promise-ը ճիշտ որոշում է կայացրել, երբ բողոքարկում եք դրա մերժումը: Blue Shield Promise-ը պետք է համապատասխանի DMHC-ի IMR-ին և վերանայի որոշումները:

Հետևյալը ներկայացնում է IMR խնդրելու կերպը:

Կալիֆորնիայի Կառավարվող առողջական խնամքի բաժինը (Department of Managed Health Care) պատասխանատու է առողջական խնամքի սպասարկման ծրագրերի կարգավորման համար: Եթե Ձեր առողջապահական ծրագրի դեմ բողոք ունեք, ապա, նախքան բաժին դիմելը, պետք է զանգահարեք Ձեր առողջապահական ծրագրի **Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711)** համարով և օգտագործեք Ձեր առողջապահական ծրագրի բողոքի գործընթացը: Բողոքի այս գործընթացից օգտվելը չի արգելի որևէ հնարավոր օրինական իրավունք կամ դարման, որը կարող է հասանելի լինել Ձեզ: Շտապ օգնության հետ կապված բողոքի, Ձեր առողջապահական ծրագրի կողմից անբավարար լուծում ստացած բողոքի կամ 30 օրվա ժամկետում չլուծված բողոքի կապակցությամբ օգնության համար կարող եք զանգահարել բաժին: Կարող եք նաև Անկախ բժշկական վերանայման (IMR) իրավասու լինել: Եթե IMR-ի իրավասու եք, ապա IMR-ի գործընթացը Ձեզ կընձեռի առողջապահական ծրագրի կողմից կայացված բժշկական որոշումների անաչառ վերանայման հնարավորություն՝ կապված առաջարկված ծառայության կամ բուժման



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսագանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝

blueshieldca.com/promise/medi-cal:

բժշկական անհրաժեշտության, փորձնական կամ հետազոտական բնույթի բուժումն ապահովագրելու որոշումների, ինչպես նաև արտակարգ իրավիճակի կամ հրատապ բժշկական ծառայությունները փոխհատուցելու վեճերի հետ: Բաժինը նաև ունի անվճար հեռախոսահամար՝ **(1-888-466-2219)** և TDD հեռախոսագիծ **(1-877-688-9891)** լսողության կամ խոսքի խանգարում ունեցող անձանց համար: Բաժնի համացանցային կայքը՝ <https://www.dmh.ca.gov/>, ունի առցանց գանգատի ձևաթղթեր, IMR-ի դիմումի ձևաթղթեր և հրահանգներ:

Նահանգային լսումներ

Նահանգային լսումը հանդիպում է Կալիֆորնիայի Սոցիալական ծառայությունների բաժնից (CDSS) անձանց հետ: Դատավորը կօգնի լուծել Ձեր խնդիրը կամ ասելու է, որ մենք ճիշտ որոշում ենք կայացրել: Նահանգային լսում իրավունք ունեք խնդրել այն բանից հետո, երբ բողոքարկում եք ներկայացրել մեզ և այնուամենայնիվ դժգոհ եք մնացել մեր որոշումից, կամ Ձեր բողոքարկման որոշումը չեք ստացել 30 օր անցնելուց հետո:

Դուք պետք է նահանգային լսում խնդրեք մեր NAR նամակի ամսաթվին հաջորդող 120 օրում: Այնուամենայնիվ, եթե մենք Ձեր բողոքարկման ընթացքում տվել ենք Ձեզ սպասվող վճարված օգնությունը, և Դուք ցանկանում եք, որ այն շարունակվի մինչև Ձեր նահանգային լսումների վերաբերյալ որոշում կայացվի, Դուք պետք է խնդրեք նահանգային լսում անցկացնել մեր NAR նամակը ստանալուց հետո 10 օրվա ընթացքում կամ մինչև մեր կողմից նշված ամսաթիվը Ձեր ծառայություն(ներ)ը կդադարեցվի (կդադարեցվեն), կախված նրանից, թե որն է ավելի ուշ: Եթե օգնության կարիք ունեք՝ համոզվելու համար, որ սպասվող վճարված օգնությունը կշարունակվի այնքան ժամանակ, մինչև Ձեր Նահանգային լսումի վերաբերյալ վերջնական որոշում կայացվի, դիմեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00՝ զանգահարելով 1-800-605-2556 (TTY 711) համարով: Եթե չեք կարող լավ լսել ու խոսել, խնդրվում է զանգահարել 711 համարով: Ձեր PCP-ն կարող է Ձեր անունից խնդրել նահանգային լսում՝ Ձեր գրավոր արտոնությամբ:



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսագանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ blueshieldca.com/promise/medi-cal:

Երբեմն Դուք կարող եք խնդրել Նահանգային լսում՝ առանց մեր բողոքարկման գործընթացը ավարտելու:

Օրինակ, Դուք կարող եք խնդրել նահանգային լսում՝ առանց մեր բողոքարկման գործընթացն ավարտելու, եթե մենք Ձեզ ճիշտ կամ ժամանակին չենք տեղեկացրել Ձեր ծառայության(ների) մասին: Մա կոչվում Հարմար սպառում (Deemed Exhaustion): Ահա Հարմար սպառման որոշ օրինակներ՝

- Մենք NOA նամակը հասանելի չենք դարձրել Ձեր նախընտրած լեզվով:
- Մենք սխալ ենք թույլ տվել, որը ազդեցություն ունի Ձեր որևէ իրավունքի վրա:
- Մենք Ձեզ NOA նամակ չենք տվել:
- Մենք սխալ ենք թույլ տվել մեր NAR նամակում:
- Մենք որոշում չենք կայացրել Ձեր բողոքարկման վերաբերյալ 30 օրվա ընթացքում: Մենք որոշեցինք, որ Ձեր գործը հրատապ է, բայց չպատասխանեցինք Ձեր բողոքարկման 72 ժամվա ընթացքում:

Նահանգային լսումը կարող եք խնդրել հեռախոսով կամ փոստով:

- **Հեռախոսով՝** Զանգահարեք CDSS-ի Հանրային պատասխանի ենթաբաժին 1-800-952-5253 համարով (TTY 1-800-952-8349 կամ 711):
- **Փոստով՝** Լրացրեք ձևաթուղթը, որը մատուցվել է Ձեր բողոքարկման լուծման ծանուցագրի հետ: Այն ուղարկեք հետևյալ հասցեով՝

California Department of Social Services
State Hearings Division
P.O. Box 944243, MS 09-17-37
Sacramento, CA 94244-2430

Եթե Նահանգային լսում խնդրելու համար օգնության կարիք ունեք, մենք կարող ենք օգնել Ձեզ: Մենք կարող ենք անվճար լեզվական ծառայություններ մատուցել Ձեզ: Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով:

Լսումի պահին, Դուք կներկայացնեք Ձեր կողմը: Մենք կներկայացնենք մեր կողմը: Ձեր գործի որոշման համար դատավորից կարող է մինչև 90 օր պահանջվել:



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝

blueshieldca.com/promise/medi-cal:

Blue Shield Promise-ը պարտավոր է հետևել դատավորի որոշման:

Եթե ցանկանում եք, որ CDSS-ը կայացնի արագ որոշում, քանի որ Նահանգային լսում ունենալու համար պահանջված ժամանակը Ձեր կյանքը, առողջությունը կամ լրիվ գործելու կարողությունը վտանգի կենթարկի, Դուք կամ Ձեր PCP-ն կարող եք CDSS-ին դիմելով արագացված (արագ) Նահանգային լսում խնդրել: CDSS-ը պարտավոր է որոշումը կայացնել 3 աշխատանքային օրից ոչ ուշ՝ Ձեր ամբողջական գործի թղթածրարը Blue Shield Promise-ից ստանալուց հետո:

Խարդախություն, վատնում և չարաշահում

Եթե կասկածում եք, որ մատակարարը կամ Medi-Cal ստացող անձը կատարել է խարդախություն, վատնում կամ չարաշահում, Ձեր իրավունքն է այդ մասին հաղորդել՝ զանգահարելով գաղտնի անվճար 1-800-822-6222 համարին կամ զանգատ ներկայացնելով առցանց <https://www.dhcs.ca.gov/>:

Մատակարարի խարդախությունը, վատնումը և չարաշահումը ներառում է՝

- Բժշկական արձանագրությունների կեղծումը
- Բժշկական անհրաժեշտությունից ավելի մեծ քանակով դեղերի նշանակումը
- Բժշկական անհրաժեշտությունից ավելի մեծ ծավալի առողջական խնամքի ծառայությունների տալը
- Չմատուցված ծառայությունների համար հաշիվ ուղարկելը
- Մասնագիտական ծառայությունների համար հաշիվ ուղարկելը, երբ մասնագետը չի մատուցել ծառայությունը
- Անվճար կամ գեղչված ապրանքներ և ծառայություններ առաջարկել անդամներին՝ փորձելով ազդել մատակարարի ընտրության վրա անդամի կողմից:
- Փոխել անդամի առաջնային խնամքի բժշկին՝ առանց անդամի իմացության

Խարդախությունը, վատնումը և չարաշահումը նպաստներ ստացող անձի կողմից ներառում է բայց չի սահմանափակվում հետևյալով՝



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսագանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ blueshieldca.com/promise/medi-cal/:

- Առողջապահական ծրագրի ճանաչողական քարտը կամ Medi-Cal-ի Նպաստների ճանաչողական քարտը (BIC) փոխ տալը, վաճառելը կամ տալը ուրիշ անձի
- Նման կամ նույն բուժումներն ու դեղերը ստանալը մեկից ավելի մատակարարից
- Շտապ օգնության կայան գնալը, երբ վիճակն արտակարգ չէ
- Ուրիշի Սոցիալական ապահովության համարի կամ առողջապահական ծրագրի ճանաչողական համարի օգտագործումը
- Բժշկական և ոչ-բժշկական փոխադրումներ կատարելը ոչ առողջապահական ծառայությունների համար, Medi-Cal-ի կողմից չապահովագրված ծառայությունների համար, կամ երբ Դուք չունեք բժշկական ժամադրություն կամ դեղատոմս՝ վերցնելու համար:

Խարդախություն, վատնում և չարաշահում տեղեկագրելու համար գրառեք անունը, հասցեն և ճանաչողական համարը անձի, որը գործել է խարդախությունը, վատնումը և չարաշահումը: Տվեք ինչքան հնարավոր է շատ տեղեկություն անձի մասին, ինչպես՝ հեռախոսահամարը կամ մասնագիտությունը, եթե մատակարար է նա:

Տվեք միջադեպերի ամսաթվերը և ամփոփումը, թե ինչ է պատահել իսկապես:

Ձեր տեղեկագիրը ուղարկեք հետևյալ հասցեով՝

Blue Shield Promise Health Plan
Special Investigations Unit
601 Potrero Grande Dr.
Monterey Park, CA 91755

Կարող եք նաև զանգահարել Համապատասխանության օգնության հեռախոսագիծ 1-833-384-1194 համարով, երկուշաբթիից ուրբաթ, 9:00-ից 17:00, տեղեկությունն էլ փոստով ուղարկել հետևյալին՝ stopfraud@blueshieldca.com, կամ տեղեկությունը հաղորդել առցանց <https://bscspecialinvestigations.alertline.com/gcs/welcome> կայքով:

Բոլոր գեկույցները կարող են կատարվել անանուն:



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսագանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ blueshieldca.com/promise/medi-cal:

7. Իրավունքներ և պարտավորություններ

Որպես Blue Shield Promise-ի անդամ, Դուք ունեք որոշակի իրավունքներ և պարտավորություններ: Այս գլուխը կբացատրի այդ իրավունքները և պարտավորությունները: Այս գլուխը նաև ներառում է օրինական ծանուցումներ, որոնց իրավունքն ունեք որպես Blue Shield Promise-ի անդամ:

Ձեր իրավունքները

Սրանք են Ձեր իրավունքները և պարտավորությունները որպես Blue Shield Promise-ի անդամ:

- Արժանանալ հարգալիր և արժանապատիվ վերաբերումի, պատշաճ ուշադրություն դարձնելով Ձեր գաղտնիության իրավունքին և Ձեր բժշկական տեղեկության գաղտնիությունը պահպանելու անհրաժեշտության՝
- Տեղեկություններ ստանալ ծրագրի և իր ծառայությունների վերաբերյալ, ներառյալ՝ ապահովագրված ծառայությունները, բժիշկները և անդամի իրավունքներն ու պարտավորությունները:
- Ձեր նախընտրած լեզվով անդամների համար ամբողջությամբ թարգմանված գրավոր տեղեկությունները, ներառյալ՝ բոլոր բողոքների և բողոքարկումների ծանուցագրերը ստանալու համար:



Ձանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսագանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝

blueshieldca.com/promise/medi-cal:

- Թելադրություններ կատարել Blue Shield Promise-ի անդամի իրավունքների և պարտավորությունների քաղաքականության վերաբերյալ:
- Կարողանալ առաջնային խնամքի մատակարար ընտրել Blue Shield Promise-ի ցանցում:
- Ժամանակին մատչել ցանցի մատակարարներին:
- Մատակարարների հետ մասնակցել որոշումների կայացման, ինչ վերաբերում է Ձեր սեփական առողջական խնամքին, ներառյալ՝ բուժումը մերժելու իրավունքը:
- Բողոքներ հայտնել բանավոր կամ գրավոր եղանակով, կազմակերպության կամ ստացված խնամքի մասին:
- Իմանալ Blue Shield Promise-ի բժշկական խնամքի համար խնդրանքը մերժելու, ուշացնելու, դադարեցնելու կամ փոփոխելու որոշման բժշկական պատճառները:
- Ստանալ խնամքի համակարգում:
- Խնդրել բողոքարկումը ծառայությունների կամ նպաստների մերժման, հետաձգման կամ սահմանափակման:
- Ստանալ անվճար բանավոր թարգմանչական ծառայություններ Ձեր լեզվի համար:
- Ստանալ անվճար օրինական օգնություն Ձեր տեղական օրինական օգնության գրասենյակից կամ ուրիշ խմբերից:
- Բանաձևել նախօրոք հրահանգներ:
- Նահանգային լսում խնդրելու համար, եթե ծառայությունը կամ նպաստը մերժվել է, և Դուք արդեն բողոք եք ներկայացրել Blue Shield Promise-ին և դեռ գոհ չեք որոշումից, կամ եթե 30 օր հետո որոշում չեք ստացել Ձեր բողոքարկման վերաբերյալ, ներառյալ տեղեկությունները այն հանգամանքների վերաբերյալ, որոնց դեպքում հնարավոր է արագացված լսում:
- Հրաժարվել Blue Shield Promise-ի անդամագրությունից և խնդրանքով անդամագրվել վարչաշրջանի այլ առողջապահական ծրագրին:



Ձանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսագանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ blueshieldca.com/promise/medi-cal:

- Մատչելի գտնել Դեռահասների համաձայնությամբ ծառայությունները:
- Անդամների իրազեկման անվճար գրավոր նյութերն ստանալ ուրիշ ձևաչափերով (ներառյալ՝ բրայլյան այբուբենը, խոշոր տառատեսակը, ձայնագրված մատչելի էլեկտրոնային ձևաչափեր) խնդրելու դեպքում և խնդրված ձևաչափին հարմար ժամանակի ընթացքում՝ համաձայն Վելֆերի և հիմնարկների օրենսգրքի 14182 (b)(12) բաժնի:
- Ազատ մնալ որևէ տեսակի կաշկանդումից կամ մեկուսացումից, որը օգտագործվում է որպես հարկադրման, կարգապահության, հարմարության կամ փոխվրեժի միջոց:
- Ճշմարտորեն քննարկել տեղեկությունը հասանելի բուժման ընտրանքների և այլընտրանքների մասին, ներկայացված՝ Ձեր վիճակին և այն հասկանալու Ձեր կարողությանը հարմար եղանակով՝ անկախ ծախսերից և ապահովագրությունից:
- Մատչելի գտնել և ստանալ պատճենը Ձեր բժշկական արձանագրությունների, ե խնդրել, որ դրանք փոփոխվեն կամ ուղղվեն, ինչպես հատկորոշվել է Դաշնային կանոնակարգերի 45-րդ Օրենսգրքի §164.524 և 164.526 բաժիններում:
- Այս իրավունքները կիրառելու ազատություն՝ առանց բացասապես ազդելու Blue Shield Promise-ի, Ձեր մատակարարների կամ Նահանգի կողմից Ձեր նկատմամբ ցուցաբերված վերաբերումին:
- Մատչելի գտնել ընտանիքի ծրագրման ծառայությունները, Անկախ ծննդաբերության կենտրոնները, Դաշնային որակավորումով առողջապահական կենտրոնները, Հնդկացիների առողջապահական կլինիկաները, մանկաբարձի ծառայությունները, Գյուղական առողջապահական կենտրոնները, սեռական ճանապարհով փոխանցվող վարակների ծառայությունները և Արտակարգ իրավիճակի ծառայությունները Blue Shield Promise-ի ցանցից դուրս՝ դաշնային օրենքների համաձայն:
- Ազատ մնալ ամեն տեսակի հետևանքներից՝ Ձեր խնամքին վերաբերող որոշումներ կայացնելիս:



Ձանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ blueshieldca.com/promise/medi-cal:

- Blue Shield Promise-ի սովորական աշխատանքային ժամերին 10 րոպեից ավելի չսպասել՝ հաճախորդի սպասարկման ներկայացուցչի հետ խոսելու համար:
- Թելադրություններ կատարել կազմակերպության անդամի իրավունքների և պարտավորությունների քաղաքականության վերաբերյալ:
- Մասնակցել որոշումների կայացման, ինչ վերաբերում է Ձեր սեփական առողջական խնամքին, ներառյալ՝ բուժումը մերժելու իրավունքը և/կամ ստանալու երկրորդ կարծիք:
- Որոշել ինչպես եք ցանկանում խնամվել Ձեր կյանքին վտանգ սպառնացող հիվանդություն կամ վնասվածք ստանալու դեպքում:
- Անկեղծորեն քննարկել Ձեր վիճակների համար պատշաճ և բժշկականորեն անհրաժեշտ բուժման ընտրանքները՝ անկախ ծախքից կամ նպաստի ապահովագրությունից:
- Խնդրել բողոքարկումը ծառայությունների կամ նպաստների մերժման, հետաձգման կամ սահմանափակման:
- Ստանալ անվճար բանավոր թարգմանչական ծառայություններ Ձեր լեզվի համար:
- Ստանալ ծրագրի անվճար գրավոր նյութերը Ձեր նախընտրած լեզվով կամ այլընտրանքային ձևաչափով (օրինակ՝ ձայնագրված, բրայլյան կամ խոշոր տպագիր):

Ձեր պարտավորությունները

Blue Shield Promise -ի անդամներն ունեն հետևյալ պարտավորությունները՝

- Քաղաքավարի և հարգալիք վերաբերմունք ցուցաբերել Ձեր բժշկի, բոլոր մատակարարների և անձնակազմի նկատմամբ Պարտավոր եք ժամանակին ներկայանալ Ձեր այցին կամ այցից առնվազն 24 ժամ առաջ զանգահարել բժշկի գրասենյակ՝ այցը չեղյալ հայտարարելու կամ այն վերադասավորելու նպատակով
- Ճշգրիտ տեղեկություն տալ և տալ հնարավորինս շատ տեղեկություն Ձեր բոլոր մատակարարներին և Blue Shield Promise-ին



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ blueshieldca.com/promise/medi-cal:

- Ենթարկվել կանոնավոր բժշկական ստուգումների և տեղեկացնել Ձեր բժշկին Ձեր առողջական խնդիրների մասին՝ նախքան դրանց լրջանալը
- Ձեր բժշկի հետ քննարկել Ձեզ առողջական խնամքի կարիքները, մշակել և համաձայնվել թիրախների շուրջ, անել հնարավոր ամեն բան՝ հասկանալու Ձեր առողջական խնդիրները և հետևել բուժման ծրագրերին և հրահանգներին, որոնց շուրջ համաձայնվել էք երկուսդ
- Տրամադրել տեղեկություններ (հնարավորության սահմաններում), որը կազմակերպությանը և նրա բժիշկներին և մատակարարներին անհրաժեշտ է՝ խնամք տրամադրելու համար
- Հետևել խնամքի ծրագրերին և հրահանգներին, որոնք նրանք համաձայնեցրել են իրենց բժիշկների հետ
- Հասկանալ նրանց առողջական խնդիրները և հնարավորինս մասնակցել բուժման փոխադարձ համաձայնեցված նպատակների մշակմանը
- Առողջական խնամքի խարդախությունը կամ իրավախախտումները տեղեկագրել Blue Shield Promise-ին: Դուք սա կարող եք անել առանց Ձեր անունը տալու՝ զանգահարելով Blue Shield Promise-ի Համապատասխանության թեժ հեռախոսագծի անվճար **1-800-221-2367** համարով, այցելելով <https://bscspecialinvestigations.alertline.com/gcs/welcome> կայքը, կամ զանգահարելով Կալիֆորնիայի Առողջական խնամքի սպասարկման բաժին (DHCS)՝ Medi-Cal-ի Խարդախությունների և չարաշահումների թեժ հեռախոսագծի հետևյալ անվճար համարով՝ **1-800-822-6222**:

Ոչ խտրականության ծանուցագիր

Խտրականությունը դեմ է օրենքին: Blue Shield Promise-ը հետևում է Նահանգային և Դաշնային քաղաքացիական իրավունքների մասին օրենքներին: Blue Shield Promise-ը անօրինական կերպով խտրականություն չի դնում, չի բացառում մարդկանց կամ նրանց այլ կերպ չի վերաբերվում սեռի, ցեղի, գույնի, դավանանքի, նախնիների, ազգային ծագման, էթնիկական խմբի նույնականացման, տարիքի, մտավոր հաշմանդամության, ֆիզիկական հաշմանդամության, բժշկական վիճակի, ժառանգաբանական (գենետիկական) տեղեկությունների, ընտանեկան կարգավիճակի, գենդերի, սեռական ինքնության կամ սեռական կողմնորոշման պատճառով:



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսագանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ blueshieldca.com/promise/medi-cal:

Blue Shield Promise-ը մատուցում է՝

- Անվճար օգնություններ և ծառայություններ հաշմանդամներին, որպեսզի ավելի լավ հաղորդակցեն մեզ հետ, ինչպես՝
 - Խուլուհամրների որակյալ թարգմանիչներ
 - Տարբեր ձևաչափերով գրավոր տեղեկություն (խոշոր տառատեսակ, ձայնագրություն, մատչելի էլեկտրոնային ձևաչափեր և ուրիշ ձևաչափեր)
- Անվճար լեզվական ծառայություններ անձանց, որոնց առաջնային լեզուն անգլերենը չէ, ինչպես՝
 - Որակյալ բանավոր թարգմանիչներ
 - Ուրիշ լեզուներով գրված տեղեկություն

Եթե Ձեզ անհրաժեշտ են այս ծառայությունները, դիմեք Blue Shield Promise երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00՝ զանգահարելով 1-800-605-2556 (TTY 711) համարով: Կամ, եթե չեք կարող լավ լսել ու խոսել, խնդրում ենք զանգահարել Կալիֆորնիայի փոխանցման ծառայություն 711 համարով:

Ինչպես ներկայացնել բողոքը

Եթե համոզված եք, որ Blue Shield Promise-ը չի կարողացել մատուցել այդ ծառայությունները կամ անօրինական կերպով խտրականություն է դրել մեկ այլ ձևով՝ սեռի, ցեղի, գույնի, կրոնի, նախնիների, ազգային ծագման, էթնիկական խմբի նույնականացման, տարիքի, մտավոր հաշմանդամության, ֆիզիկական հաշմանդամության, բժշկական վիճակի, ժառանգաբանական (գենետիկական) տեղեկության, ընտանեկան կարգավիճակի, գենդերի, սեռական ինքնության կամ սեռական կողմնորոշման հիման վրա, կարող եք բողոք ներկայացնել Blue Shield Promise-ի քաղաքացիական իրավունքների համակարգողին: Բողոքը կարող եք ներկայացնել գրավոր, անձամբ, կամ էլեկտրոնային միջոցով՝

- **Հեռախոսով**՝ Կապ հաստատեք երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00-ը, զանգահարելով Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 համարով Կամ, եթե չեք կարող լավ լսել ու խոսել, խնդրում ենք զանգահարել Կալիֆորնիայի փոխանցման ծառայություն 711 համարով:



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝

blueshieldca.com/promise/medi-cal:

Գրավոր՝ Լրացրեք գանգատի ձևաթուղթը կամ նամակ գրեք և ուղարկեք այս հասցեով՝

Blue Shield Promise Health Plan
Civil Rights Coordinator
601 Potrero Grande Dr.
Monterey Park, CA 91755

- **Անձամբ՝** Այցելեք Ձեր բժշկի գրասենյակը կամ Blue Shield Promise-ը և ասեք, որ ուզում եք բողոք ներկայացնել:
- **Էլեկտրոնային միջոցով՝** Այցելեք Blue Shield Promise-ի կայքը այս հասցեով՝ blueshieldca.com/promise/medi-cal:

Քաղաքացիական իրավունքների գրասենյակ – Կալիֆորնիայի Առողջական խնամքի սպասարկման բաժին

Կարող եք նաև քաղաքացիական իրավունքների գանգատ ներկայացնել Կալիֆորնիայի Առողջական խնամքի սպասարկման բաժին (California Department of Health Care Services)՝ Քաղաքացիական իրավունքների գրասենյակ (Office of Civil Rights)՝ գրավոր կամ էլեկտրոնային միջոցով՝

- **Հեռախոսով՝** Զանգահարեք 916-440-7370: Եթե չեք կարող լավ խոսել կամ լսել, խնդրում ենք զանգահարել 711 համարով (Հեռահաղորդակցման փոխանցման ծառայություն):
- **Գրավոր՝** Լրացրեք գանգատի ձևաթուղթը կամ նամակ ուղարկեք հետևյալ հասցեին՝
Deputy Director, Office of Civil Rights
Department of Health Care Services
Office of Civil Rights
P.O. Box 997413, MS 0009
Sacramento, CA 95899-7413

Գանգատի ձևաթղթերը առկա են այս կայքում՝
https://www.dhcs.ca.gov/Pages/Language_Access.aspx:

- **Էլեկտրոնային միջոցով՝** Նամակ ուղարկեք հետևյալ հասցեով՝
CivilRights@dhcs.ca.gov:



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝
blueshieldca.com/promise/medi-cal:

Քաղաքացիական իրավունքների գրասենյակ – ԱՄՆ Առողջապահության եվ մարդու ծառայությունների նախարարություն

Եթե կարծում եք, որ ենթարկվել եք խտրական վերաբերմունքի ցեղի, գույնի, ազգային ծագման, տարիքի, հաշմանդամության կամ սեռի պատճառով, կարող եք նաև քաղաքացիական իրավունքների գանգատ ներկայացնել ԱՄՆ Առողջապահության և մարդու ծառայությունների նախարարություն (U.S. Department of Health and Human Services)՝ Քաղաքացիական իրավունքների գրասենյակ, հեռախոսով, գրավոր կամ էլեկտրոնային եղանակով՝

- **Հեռախոսով՝** Չանգահարեք 1-800-368-1019 համարով: Եթե չեք կարող լավ խոսել կամ լսել, խնդրում ենք զանգահարել TTY/TDD 1-800-537-7697 կամ 711 համարով՝ Կալիֆորնիայի փոխանցման ծառայությունից օգտվելու համար:
- **Գրավոր՝** Լրացրեք գանգատի ձևաթուղթ կամ նամակ ուղարկեք հետևյալ հասցեին՝
U.S. Department of Health and Human Services
200 Independence Avenue, SW
Room 509F, HHH Building
Washington, D.C. 20201

Գանգատի ձևաթղթերը առկա են այս կայքում՝

<https://www.hhs.gov/ocr/complaints/index.html>:

- **Էլեկտրոնային միջոցով՝** Այցելեք Քաղաքացիական իրավունքների գրասենյակի Գանգատի կայքամուտքը՝ <https://ocrportal.hhs.gov/ocr/cp>:

Որպես անդամ ներգրավվելու եղանակները

Blue Shield Promise-ը ցանկանում է լսել Ձեզանից: Յուրաքանչյուր եռամսյակում, Blue Shield Promise-ը հանդիպումներ է անցկացնում քննարկելու, թե ինչն է արդյունավետ և ինչպես Blue Shield Promise-ը կարող է բարելավվել: Անդամները հրավիրվում են մասնակցելու: Եկե՛ք հանդիպման:



Չանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ blueshieldca.com/promise/medi-cal:

Blue Shield Promise-ի Անդամների խորհրդատու հանձնաժողով

Blue Shield Promise-ն ունի մի խումբ, որը կոչվում է Blue Shield Promise-ի Անդամների խորհրդատու հանձնաժողով: Այս խումբը բաղկանում է Blue Shield Promise-ի անդամներից, Blue Shield Promise-ի աշխատակիցներից, մատակարարներից և առողջական խնամքի պաշտպաններից՝ համայնքի անդամների շարքից: Եթե ցանկանում եք, կարող եք միանալ այս խմբին: Խումբը քննարկում է ինչպես բարելավել Blue Shield Promise-ի քաղաքականությունները և պատասխանատու է հետևյալի համար՝

- Քննարկել անդամի և առողջապահական ծրագրի հարցերը
- Քննարկել անդամների մշակութային և լեզվական կարիքները
- Դաստիարակել և հզորացնել համայնքը առողջական խնամքի հարցերի կապակցությամբ

Եթե ցանկանում եք մաս կազմել այս խմբին, զանգահարեք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Ներգրավվելու հավելյալ կերպերի մասին տեղեկության համար առցանց այցելեք Blue Shield Promise Connect՝

<https://www.blueshieldca.com/promise/members/index.asp?memSec=connect>:

L.A. Care-ի Տարածաշրջանային համայնքային խորհրդատու հանձնաժողովներ

L.A. Care-ն ունի տասնմեկ Տարածաշրջանային համայնքային խորհրդատու հանձնաժողով (Regional Community Advisory Committees, RCAC) Լոս Անջելես վարչաշրջանում (RCAC-ը արտասանվում է «ռաք»): Այս խումբը կազմված է L.A. Care -ի անդամներից, մատակարարներից և առողջական խնամքի պաշտպաններից: Նրանց նպատակն է իրենց համայնքների ձայնը հասցնել L.A. Care-ի Կառավարիչների խորհրդին, որն առաջնորդում է մեր անդամներին սպասարկելու առողջական խնամքի ծրագրերը: Եթե ցանկանում եք, կարող եք միանալ այս խմբին: Խումբը խոսում է այն մասին, թե ինչպես բարելավել L.A. Care-ի քաղաքականությունը և պատասխանատու է հետևյալի համար.

- Օգնել, որ L.A. Care-ը հասկանա Ձեր տարածքում բնակվող անձանց ազդող առողջական խնամքի հարցերը



Չանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսագանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝

blueshieldca.com/promise/medi-cal:

- Գործելով որպես L.A. Care-ի աչքեր ու ականջներ: Լուս Անջելեսի վարչաշրջանի 11 RCAC շրջանում
- Առողջապահական տեղեկություններ մատուցել Ձեր համայնքի անձանց

Եթե ցանկանում եք մաս կազմել այս խմբին, զանգահարեք 1-888-533-2732 համարով: Կարող եք հավելյալ տեղեկություն գտնել առցանց՝ lacare.org կայքում:

L.A. Care-ի Կառավարիչների խորհրդի նիստեր

Կառավարիչների խորհուրդը սահմանում է քաղաքականություններ L.A. ծրագիր է:

Որևէ անձ կարող է մասնակցել նիստերին: Կառավարիչների խորհրդի նիստերն անցկացվում են յուրաքանչյուր ամսվա առաջին հինգշաբթին, 14:00-ին:

Կառավարիչների խորհրդի նիստերի վերաբերյալ հավելյալ տեղեկություն և ժամանակացույցի թարմացումները կարող եք գտնել lacare.org կայքում:

Գաղտնիության գործելակերպերի ծանուցագիր

Բժշկական արձանագրությունների գաղտնիությունը պահպանելու Blue Shield Promise-ի քաղաքականություններն ու ընթացակարգերը նկարագրող հայտարարությունը հասանելի է և Ձեզ կներկայացվի խնդրվելու դեպքում:

Այս ծանուցագիրը նկարագրում է, թե Ձեզ վերաբերող տեղեկություններն ինչպես կարող են օգտագործվել և բացահայտվել, և թե ինչպես կարող եք այս տեղեկությունները ձեռք բերել: **Խնդրում եք ուշադիր ընթերցել այն:**

Մեր գաղտնիության հանձնառությունը

Blue Shield of California Promise Health Plan-ում մենք հասկանում ենք Ձեր անձնական տեղեկությունները գաղտնի պահելու կարևորությունը, և մենք դա անելու մեր պարտավորությանը շատ լուրջ ենք վերաբերում:

Գործարարության բնականոն ընթացքում մենք արձանագրություններ ենք ստեղծում Ձեր, Ձեր բժշկական բուժման և մեր Ձեզ մատուցած ծառայությունների մասին:

Այդ արձանագրություններում գտնվող տեղեկությունը կոչվում է «պաշտպանված առողջական տեղեկություններ» (Protected Health Information, PHI) և ներառում է Ձեր



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ blueshieldca.com/promise/medi-cal:

անհատական ճանաչելի անձնական տվյալները, ինչպես՝ Ձեր անունը, հասցեն, հեռախոսահամարը և սոցիալական ապահովության համարը, ինչպես նաև Ձեր առողջական տվյալները, ինչպես՝ առողջապահական ախտորոշումը կամ պահանջի մասին տեղեկություններ:

Դաշնային և նահանգային օրենքով մեզանից պահանջվում է Ձեզ տրամադրել մեր իրավական պարտականությունների և գաղտնիության գործելակերպերի մասին այս ծանուցագիրը, քանի որ դրանք վերաբերում են Ձեր PHI-ին: Մեզանից պահանջվում է պահպանել Ձեր PHI-ի գաղտնիությունը և ծանուցել Ձեզ այն դեպքում, երբ Ձեզ վրա ազդում է անապահով PHI-ի խախտումը: Երբ մենք օգտագործում կամ հրապարակում ենք («բացահայտում») Ձեր PHI-ն, մենք պարտավորված ենք սույն ծանուցագրի պայմաններով, որոնք տարածվում են Ձեր PHI-ն պարունակող մեր ստեղծած, ձեռք բերած և/կամ պահպանած բոլոր արձանագրությունների վրա:

Ինչպես ենք պաշտպանում Ձեր գաղտնիությունը

Մենք պահպանում ենք ֆիզիկական, տեխնիկական և վարչական նախազգուշական միջոցներ՝ Ձեր PHI-ի գաղտնիությունն ապահովելու համար: Ձեր գաղտնիությունը պաշտպանելու համար, մեր թղթային և էլեկտրոնային արձանագրությունները և ոչ հրապարակային տարածքները, որտեղ պահվում են այս տեղեկությունները, մատչելի ենք դարձնում միայն Blue Shield Promise-ի աշխատուժի անդամներին, ովքեր լիազորված և վերապատրաստված են:

Աշխատուժի անդամները վերապատրաստվում են հետևյալ նյութերի շուրջ՝

- Գաղտնիության և տվյալների պաշտպանության քաղաքականություններ և ընթացակարգեր, ներառյալ այն, թե ինչպես են թղթային և էլեկտրոնային արձանագրությունները պիտակավորվում, մթերվում, ներկայացվում և հասանելի դառնում:
- Գործող ֆիզիկական, տեխնիկական և վարչական նախազգուշական միջոցները՝ Ձեր PHI-ի գաղտնիությունն ու անվտանգությունը պահպանելու համար:



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսագանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ blueshieldca.com/promise/medi-cal:

Մեր կորպորատիվ Գաղտնիության գրասենյակը վերահսկում է, թե ինչպես ենք մենք հետևում մեր գաղտնիության քաղաքականության և ընթացակարգերին և կրթում է մեր կազմակերպությանը այս կարևոր թեմայի շուրջ:

Ինչպես ենք մենք օգտագործում և բացահայտում Ձեր PHI-ն

PHI-ի օգտագործումն առանց Ձեր լիազորման

Մենք կարող ենք բացահայտել Ձեր PHI-ն առանց Ձեր գրավոր լիազորման՝ եթե անհրաժեշտ լինի, Ձեզ առողջապահական նպաստներ և ծառայություններ տրամադրելիս: Մենք կարող ենք Ձեր PHI-ն բացահայտել հետևյալ նպատակների համար՝

Բուժում

- Բուժքույրերի, բժիշկների, դեղագործների, ակնաչափողների, առողջապահական մանկավարժների և առողջապահական այլ մասնագետների հետ կիսվելու համար, որպեսզի նրանք կարողանան որոշել Ձեր խնամքի ծրագիրը:
- Օգնելու, որ ստանաք Ձեզ անհրաժեշտ ծառայություններ և բուժում. օրինակ՝ պատվիրել լաբորատոր ստուգումներ և օգտագործել արդյունքները:
- Համակարգելու Ձեր առողջական խնամքը և հարակից ծառայությունները առողջապահական հաստատության կամ մասնագետի հետ:

Վճարում

- Ձեր ապահովագրության համար ապահովագների վճարում ստանալու համար:
- Ապահովագրության որոշումներ կայացնելու համար. օրինակ՝ խոսել առողջապահական մասնագետի հետ Ձեզ մատուցված ծառայությունների դիմաց վճարման մասին:
- Նպաստները համակարգելու համար Ձեր թերևս ունեցած այլ ապահովագրությունների հետ. օրինակ՝ խոսել մեկ այլ առողջապահական ծրագրի կամ ապահովագրողի հետ՝ որոշելու Ձեր իրավասությունը կամ ապահովագրությունը:



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ blueshieldca.com/promise/medi-cal:

- Վճարում ստանալու համար երրորդ կողմից, ով կարող է պատասխանատու լինել վճարման համար, ինչպես՝ ընտանիքի մի անդամ:
- Այլապես որոշելու և կատարելու Ձեր առողջապահական նպաստները մատուցելու մեր պարտավորությունը. օրինակ՝ պահանջներ տնօրինելու համար:

Առողջական խնամքի գործառնություններ

- Հաճախորդի սպասարկում տրամադրելու համար:
- Աջակցելու համար մեր Ձեզ առաջարկած ծրագրերին կամ ծառայություններին և/կամ բարելավելու համար դրանք:
- Օգնելու համար Ձեր առողջության կառավարման. օրինակ՝ Ձեզ տեղեկություններ տրամադրելու համար բուժման այլընտրանքների մասին, որոնց կարող եք իրավասու լինել, կամ Ձեզ մատուցելու համար առողջապահական ծառայություններ կամ բուժման հիշեցումներ:
- Աջակցելու համար մեկ այլ առողջապահական ծրագրի, ապահովագրողի կամ առողջական խնամքի մասնագետի, ով հարաբերություն ունի Ձեզ հետ, բարելավելու այն ծրագրերը, որոնք նա առաջարկում է Ձեզ. օրինակ՝ գործերի կառավարում կամ աջակցություն հաշվետու խնամքի կազմակերպության (Accountable Care Organization (ACO) կամ հիվանդի վրա կենտրոնացած բժշկական տան աջակցելու կարգադրություն:
- Ապահովագրման, պարտքերի, կամ ապահովագնի վարկանիշի, կամ այլ գործունեությունների համար, որոնք կապ ունեն առողջական ապահովագրության կամ ապահովագրման համար պայմանագրի ստեղծման, նորոգման կամ փոխարինման հետ: Խնդրում ենք նկատի ունենալ, սակայն, որ մենք ապահովագրման նպատակներով չենք օգտագործի կամ բացահայտի Ձեր PHI-ն, որը ժառանգաբանական (գենետիկական) տեղեկություն է. դա արգելված է դաշնային օրենքով:

Մենք կարող ենք նաև բացահայտել Ձեր PHI-ն առանց Ձեր գրավոր լիազորման այլ նպատակների համար, ինչպես դա թույլատրվում կամ պահանջվում է օրենքով: Մա ներառում է՝



Չանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսագանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ blueshieldca.com/promise/medi-cal:

Բացահայտումներ Ձեր առողջական խնամքում ներգրավված այլ անձանց

- Եթե ներկա եք կամ այլ կերպ հասանելի՝ մեզ ուղղորդելու դա անելու համար, մենք կարող ենք Ձեր PHI-ն բացահայտել ուրիշների, ինչպես՝ օրինակ՝ ընտանիքի անդամի, մտերիմ ընկերոջ կամ Ձեզ խնամողին:
- Եթե գտնվում եք արտակարգ իրավիճակում, ներկա չեք, անաշխատունակ եք, կամ եթե մահացել եք, մենք կօգտագործենք մեր մասնագիտական դատողությունը՝ որոշելու, թե արդյոք Ձեր PHI-ն ուրիշների բացահայտելը բխում է Ձեր լավագույն շահերից: Եթե մենք բացահայտենք Ձեր PHI-ն այնպիսի իրավիճակում, երբ Դուք անհասանելի եք, մենք կբացահայտենք միայն այն տեղեկությունները, որոնք ուղղակի կարևոր են Ձեր բուժման մեջ անձի ներգրավվածության կամ Ձեր բուժման հետ կապված վճարման համար: Մենք կարող ենք նաև բացահայտել Ձեր PHI-ն, որպեսզի ծանուցենք (կամ օգնենք ծանուցել) այդպիսի անձանց Ձեր գտնվելու վայրի, Ձեր ընդհանուր առողջական վիճակի, կամ Ձեր մահվան մասին:
- Մենք կարող ենք Ձեր դեռահաս երեխայի PHI-ն բացահայտել երեխայի մյուս ծնողին:

Բացահայտումներ առողջական տեղեկությունների փոխանակման կայանին

Blue Shield Promise-ը կարող է Ձեր PHI-ն բացահայտել Manifest MedEx-ին՝ Առողջական տեղեկությունների փոխանակման կայան (Health Information Exchange, HIE): Manifest MedEx-ի նման HIE-ները Ձեր առողջական խնամքի մատակարարներին և առողջապահական ծրագրերին օգնում են ապահով կերպով վերանայել, վերլուծել և կիսել Ձեզ վերաբերող բժշկական տեղեկությունները:

Ձեր PHI-ի այս վերանայումը, վերլուծությունը և կիսումը Ձեր առողջական խնամքի մատակարարներին և առողջապահական ծրագրերին թույլ է տալիս բարելավել Ձեր խնամքի որակը, կարող է օգնել նվազեցնել բժշկական սխալները և կարող է փող խնայել Ձեզ համար՝ կանխելով անհարկի և կրկնակի բուժումը:

Դուք միշտ հնարավորություն ունեք հրաժարվելու Ձեր PHI-ի օգտագործումից HIE-ի ներսում շփվելով Manifest Medex-ի հետ manifestmedex.org/opt-out/ կապով կամ զանգահարելով **(510) 683-1333** համարով:



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսագանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ blueshieldca.com/promise/medi-cal/:

Բացահայտումներ վաճառողների և հավատարմագրող կազմակերպությունների

Մենք կարող ենք Ձեր PHI-ն բացահայտել՝

- Ընկերությունների, որոնք կատարում են որոշակի ծառայություններ Blue Shield Promise-ի անունից: Օրինակ՝ մենք կարող ենք ներգրավել վաճառողների, որպեսզի օգնեն մեզ տեղեկություն և խորհուրդ տալ քրոնիկ հիվանդություններ ունեցող անդամներին, ինչպես՝ շաքարախտը և հեղձուկը (ասթմա):
- Հավատարմագրման կազմակերպությունների, ինչպես՝ Որակի երաշխավորման ազգային հանձնաժողովը (Committee for Quality Assurance, NCQA), որակի չափման նպատակների համար:

Խնդրում ենք նկատի ունենալ, որ նախքան Ձեր PHI-ն կիսելը, մենք ստանում ենք վաճառողի կամ հավատարմագրման կազմակերպության գրավոր համաձայնությունը՝ Ձեր PHI-ի գաղտնիությունը պաշտպանելու համար:

Հաղորդակցություններ

Մենք կարող ենք Ձեր PHI-ն օգտագործել Ձեզ հետ շփվելու համար՝ Ձեր առողջապահական ծրագրի ծածկույթի, նպաստների, առողջության հետ կապված ծրագրերի և ծառայությունների, բուժման հիշեցումների կամ Ձեզ հասանելի բուժման այլընտրանքների մասին տեղեկությունների կապակցությամբ:

Դրամահավաք

Մենք Ձեր PHI-ն չենք օգտագործում դրամահավաքի նպատակներով:

Առողջություն կամ անվտանգություն

Մենք կարող ենք Ձեր PHI-ն բացահայտել կանխելու կամ նվազեցնելու համար Ձեր առողջությանը կամ անվտանգությանը կամ լայն հասարակության առողջությանը կամ անվտանգությանը սպառնացող լուրջ և անմիջական վտանգը:

Հանրային առողջապահական գործունեություններ

Մենք կարող ենք Ձեր PHI-ն բացահայտել՝

- Առողջական տեղեկությունները հաղորդելու հանրային առողջապահական մարմիններին, որոնք օրենքով լիազորված են ստանալու այդպիսի տեղեկություններ՝ հիվանդությունների, վնասվածքների կամ հաշմանդամության կանխարգելման կամ վերահսկման նպատակով, կամ պատվաստումների մշտադիտարկման համար:



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսագանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ blueshieldca.com/promise/medi-cal:

- Երեխաների նկատմամբ բռնությունը կամ անտեսումը կամ չափահասների նկատմամբ բռնությունը, ներառյալ՝ ընտանեկան բռնությունը, հաղորդելու կառավարական իշխանության, որին օրենքը լիազորել է ստանալ այդպիսի հաղորդումներ:
- Տեղեկություններ հաղորդելու ԱՄՆ Սննդի և դեղորայքի վարչության (FDA) կողմից կարգավորվող արտադրանքի կամ գործունեության մասին մի անձի, ով պատասխանատու է արտադրանքի կամ գործունեության որակի, անվտանգության կամ արդյունավետության համար:
- Զգուշացնելու վարակիչ հիվանդության ենթարկված անձին, եթե օրենքով մեզ թույլատրվում է տալ այդպիսի զգուշացում:

Առողջապահական վերահսկողության գործունեություններ

Մենք կարող ենք Ձեր PHI-ն բացահայտել՝

- Կառավարական գործակալության, որն իրավաբանորեն պատասխանատու է առողջապահական համակարգի վերահսկողության կամ կառավարական նպաստների ծրագրերի կանոններին հետևումը ապահովելու համար, ինչպես՝ Medicare-ը կամ Medicaid-ը:
- Այլ կարգավորող ծրագրերի, որոնց առողջապահական տեղեկությունները անհրաժեշտ են, որպեսզի որոշեն կանոնակարգերին հետևումը:

Հետազոտություն

Մենք Ձեր PHI-ն կարող ենք բացահայտել հետազոտական նպատակներով, բայց միայն համաձայն օրենքի և ինչպես թույլատրվում է օրենքով:

Օրենքներին հետևում

Մենք Ձեր PHI-ն կարող ենք օգտագործել և բացահայտել օրենքներին հետևելու համար:

Դատական և վարչական վարույթ Մենք Ձեր PHI-ն կարող ենք բացահայտել դատական կամ վարչական վարույթում կամ ի պատասխան վավեր իրավական հրամանի:



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝

blueshieldca.com/promise/medi-cal:

Իրավապահ պաշտոնյաներ

Մենք Ձեր PHI-ն կարող ենք բացահայտել ոստիկանությանը կամ այլ իրավապահ մարմինների պաշտոնյաներին, ինչպես պահանջվում է օրենքով կամ դատարանի հրամանի կամ օրենքով լիազորված այլ գործընթացի համաձայն:

Կառավարական գործառնություններ

Մենք Ձեր PHI-ն կարող ենք բացահայտել կառավարության տարբեր գերատեսչություններին, ինչպիսիք են ԱՄՆ զինված ուժերը կամ ԱՄՆ Պետքարտուղարությունը, ինչպես պահանջվում է օրենքով:

Աշխատավորների հատուցում

Մենք կարող ենք Ձեր PHI-ն բացահայտել, երբ անհրաժեշտ է աշխատողների փոխհատուցման մասին օրենքներին հետևելու համար:

PHI-ի օգտագործումներ, որոնք պահանջում են Ձեր լիազորումը

Բացի վերը նկարագրված նպատակներից, մենք պետք է ստանանք Ձեր գրավոր լիազորումը՝ օգտագործելու կամ բացահայտելու Ձեր PHI-ն: Օրինակ՝ մենք չենք օգտագործի Ձեր PHI-ն շուկայադրական նպատակներով՝ առանց Ձեր նախօրոք գրավոր լիազորման, ինչպես նաև չենք տրամադրի Ձեր PHI-ն հավանական գործատուի՝ առանց Ձեր գրավոր լիազորման:

Օգտագործումներն ու բացահայտումները որոշ PHI-ների, որոնք համարվում են «խիստ գաղտնի»

PHI-ի որոշակի տեսակների համար դաշնային և նահանգային օրենքները կարող են պահանջել գաղտնիության ուժեղացված պաշտպանություն: Սա ներառում է PHI, որը՝

- Պահպանվում է հոգեբուժական գրառումներում
- Վերաբերում է ալկոհոլի և թմրանյութերի չարաշահման կանխման, բուժման և ուղղորդման
- Վերաբերում է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի ստուգման, ախտորոշման կամ բուժման
- Վերաբերում է վեներական և/կամ վարակիչ հիվանդության/հիվանդությունների



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսագանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ blueshieldca.com/promise/medi-cal:

- Վերաբերում է ժառանգաբանական (գենետիկական) ստուգման

Մենք այս տեսակի հատուկ պաշտպանված PHI-ին կարող ենք բացահայտել միայն Ձեր նախօրոք գրավոր լիազորումով, բացառությամբ այն դեպքերի, երբ հատկապես արտոնված է կամ պահանջվում է օրենքով:

Լիազորության չեղարկում

Կարող եք որևէ պահի չեղարկել գրավոր լիազորումը, որը նախկինում տվել եք մեզ: Երբ մեզ գրավոր ներկայացվում է, չեղարկումը կտարածվի Ձեր PHI-ի հետագա օգտագործման և բացահայտումների վրա: Այն չի ազդի նախկինում կատարված օգտագործումների կամ բացահայտումների վրա, երբ Ձեր լիազորումն ուժի մեջ էր:

Ձեր անհատական իրավունքները

Դուք ունեք հետևյալ իրավունքները PHI-ի վերաբերյալ, որը Blue Shield Promise-ը ստեղծում, ձեռք է բերում և/կամ պահպանում է Ձեր մասին՝

Չափավորումներ պահանջելու իրավունք

Դուք կարող եք խնդրել, որ չափավորենք բուժման, վճարման և առողջապահական գործառնությունների համար Ձեր PHI-ի օգտագործման և բացահայտման եղանակը, ինչպես բացատրված է այս ծանուցագրում: Մենք պարտավոր չենք համաձայնել Ձեր չափավորման խնդրանքներին, բայց մենք դրանք ուշադիր նկատի կունենանք:

Եթե համաձայնենք չափավորման խնդրանքին, մենք այն կհարգենք այնքան ժամանակ, մինչև Դուք խնդրեք կամ համաձայնեք դադարեցնել չափավորումը: Մենք կարող ենք նաև տեղեկացնել Ձեզ, որ մենք դադարեցնում ենք մեր համաձայնագիրը չափավորման համար: Այդ դեպքում դադարեցումը կտարածվի միայն PHI-ի վրա, որը ստեղծվել կամ ստացվել է այն բանից հետո, երբ մենք Ձեզ տեղեկացրել ենք դադարեցման մասին:

Գաղտնի հաղորդակցություններ ստանալու իրավունք

Դուք կարող եք խնդրել ստանալ Blue Shield Promise-ի PHI պարունակող հաղորդակցությունները այլընտրանքային միջոցներով կամ հերթական վայրերում: Ինչպես պահանջում է օրենքը, և երբ դա հնարավոր է, մենք կբավարարենք



Չանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսագանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝

blueshieldca.com/promise/medi-cal:

տրամաբանական խնդրանքները: Մենք կարող ենք պահանջել, որ Ձեր խնդրանքը գրավոր ներկայացնեք: Եթե Ձեր խնդրանքը վերաբերում է դեռահաս երեխայի, մենք կարող ենք Ձեզանից խնդրել տրամադրել իրավական փաստաթղթեր՝ Ձեր խնդրանքին աջակցելու համար:

Ձեր PHI-ին մատչելու իրավունք

Դուք կարող եք խնդրել ստուգել կամ ստանալ որոշակի PHI-ի պատճենը, որը մենք պահպանում ենք Ձեր մասին «նշանակված արձանագրությունների հավաքածուում»: Սա ներառում է, օրինակ, անդամագրման, վճարումների, պահանջների որոշումների և գործերի կամ բժշկական կառավարման արձանագրությունների համակարգերը և որևէ տեղեկություն, որը մենք օգտագործել ենք Ձեր մասին որոշումներ կայացնելու համար: Ձեր խնդրանքը պետք է լինի գրավոր: Հնարավորության դեպքում, և ինչպես պահանջվում է օրենքով, մենք Ձեզ կտրամադրենք Ձեր PHI-ի պատճենը Ձեր խնդրած ձևով (թղթային կամ էլեկտրոնային): Եթե խնդրեք Ձեր PHI-ի պատճենը, մենք կարող ենք Ձեզանից գանձել տրամաբանական, ծախսերի վրա հիմնված վճար՝ այն պատրաստելու, պատճենելու և/կամ փոստով Ձեզ ուղարկելու համար: Որոշակի սահմանափակ հանգամանքներում, որոնք թույլատրվում են օրենքով, մենք կարող ենք մերժել հասանելի դարձնել Ձեր արձանագրությունների մի մասը:

Ձեր արձանագրությունները փոփոխելու իրավունք

Դուք իրավունք ունեք մեզանից խնդրելու ուղղել կամ փոփոխել PHI-ն, որը մենք պահպանում ենք Ձեր մասին նշանակված արձանագրությունների հավաքածուում: Ձեր խնդրանքը պետք է կատարվի գրավոր և բացատրի, թե ինչու եք ցանկանում Ձեր PHI-ի փոփոխումը:

Եթե մենք որոշենք, որ PHI-ն անճիշտ կամ թերի է, մենք կուղղենք այն, եթե դա թույլատրվում է օրենքով: Եթե մի բժիշկ կամ առողջական խնամքի հաստատություն է ստեղծել PHI-ն, որը ցանկանում եք փոխել, Դուք նրանցից պետք է խնդրեք փոփոխել տեղեկությունը:

Բացահայտումների հաշվետվություն ստանալու իրավունք

Ձեր գրավոր խնդրանքով մենք Ձեզ կտրամադրենք ցանկը այն բացահայտումների, որոնք արել ենք Ձեր PHI-ի վերաբերյալ որոշակի ժամանակահատվածի համար՝ Ձեր խնդրանքի ամսաթվից մինչև վեց տարի առաջ: Այնուամենայնիվ, ցանկը կբացառի՝



Չանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսագանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝

blueshieldca.com/promise/medi-cal:

- Բացահայտումները, որոնք Դուք եք լիազորել:
- Բացահայտումներ, որոնք արվել են վեց տարուց ավելի վաղ, Ձեր խնդրանքի ամսաթվից առաջ:
- Բացահայտումներ, որոնք արվել են բուժման, վճարման և առողջապահական գործառնությունների նպատակներով, բացառությամբ այն դեպքերի, երբ պահանջվում է օրենքով:
- Որոշ այլ բացահայտումներ, որոնք օրենքով մեզ թույլատրվում է բացառել հաշվետվությունից:

Եթե որևէ 12 ամսվա ընթացքում մեկից ավելի անգամ հաշվետվություն եք խնդրում, մենք Ձեզանից կգանձենք տրամաբանական ծախսերի վրա հիմնված վճար առաջինից հետո յուրաքանչյուր հաշվետվական տեղեկագրի համար:

Անձնական ներկայացուցիչ նշանակելու իրավունք Դուք կարող եք նշել մեկ այլ անձի՝ գործելու որպես Ձեր անձնական ներկայացուցիչ: Ձեր ներկայացուցչին կթույլատրվի մատչել Ձեր PHI-ին, շփվել Ձեզ խնամք մատուցող առողջապահական մասնագետների և հաստատությունների հետ, ինչպես նաև կիրառել HIPAA-ի մյուս բոլոր իրավունքները Ձեր անունից:

Կախված այն իրավասությունից, որը տալիս էք Ձեր ներկայացուցչին, նա կարող է նաև իրավասություն ունենալ առողջապահական որոշումներ կայացնելու Ձեզ համար:

Սույն ծանուցագրի թղթային պատճենը ստանալու իրավունք Ձեր խնդրանքով մենք կտրամադրենք սույն Ծանուցագրի թղթային պատճենը, նույնիսկ եթե համաձայնել եք այս Ծանուցագիրը ստանալ էլեկտրոնային եղանակով: Տեսեք սույն Ծանուցագրի «Հասանելիության և տևողության ծանուցագիր» բաժինը:

Գործողություններ, որոնք կարող եք ձեռնարկել

Կապ հաստատեք Blue Shield Promise-ի հետ

Եթե հարցեր ունեք Ձեր գաղտնիության իրավունքների վերաբերյալ, կարծում եք, որ մենք կարող ենք խախտած լինել Ձեր գաղտնիության իրավունքները կամ համաձայն չլինեք Ձեր PHI-ն մատչելի դարձնելու վերաբերյալ մեր կայացրած որոշման հետ, կարող եք կապ հաստատել մեզ հետ՝



Ձանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսագանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝

blueshieldca.com/promise/medi-cal:

Blue Shield of California Promise Health Plan Privacy Office

P.O. Box 272540 Chico, CA 95927-2540

Հեռախոս՝ (888) 266-8080 (անվճար)

Թեժ հեռախոսագիծ՝ (855) 296-9086 (անվճար)

Ֆաքս՝ (800) 201-9020 (անվճար)

Էլ. փոստ՝ privacy@blueshieldca.com

Որոշ տեսակի խնդրանքների համար, Դուք պետք է լրացնեք և մեզ ուղարկեք մի ձևաթուղթ, որը հասանելի է զանգահարելով Ձեր Promise Health Plan-ի անդամի ճանաչողական քարտի վրա գտնվող Հաճախորդների խնամքի համարով կամ այցելելով մեր կայքը՝

https://www.blueshieldca.com/bsca/bsc/wcm/connect/sites/sites_content_en/bsp/cmc-members/plan-documents/privacy

Շփվեք դաշնային կառավարական գործակալության հետ

Կարող եք նաև գրավոր զանգատ ներկայացնել ԱՄՆ Առողջապահության և մարդու ծառայությունների նախարարության (HHS) Քաղաքացիական իրավունքների գրասենյակի քարտուղարին, եթե համոզված եք, որ մենք թերևս ոտնահարել ենք Ձեր գաղտնիության իրավունքները՝

Office for Civil Rights

U.S. Department of Health & Human Services 200 Independence Avenue, S.W.
Washington, D.C. 20201

Հեռախոս՝ (877) 696-6775

Կայք՝ hhs.gov/ocr/privacy/hipaa/complaints

Եթե բնակվում եք Կալիֆորնիայում, կարող եք նաև դիմել Կալիֆորնիայի համար OCR-ի Շրջանային կառավարչին՝

Region IX Regional Manager

Office for Civil Rights



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսագանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ blueshieldca.com/promise/medi-cal:

U.S. Department of Health & Human Services 90 7th St., Suite 4-100

San Francisco, CA 94103

Հեռախոս՝ (800) 368-1019

Ֆաքս՝ (202) 619-3818

(TTY՝ (800) 537-7697

Շփվեք դաշնային կառավարական գործակալության հետ

Կարող եք նաև գրավոր զանգատ ներկայացնել Կալիֆորնիայի Առողջական խնամքի սպասարկման բաժնին (DHCS)՝

DHCS

Privacy Officer

c/o Office of HIPAA Compliance DHCS

P.O. Box 997413, MS 4721 Sacramento, CA 95899-7413

Հեռախոս՝ (916) 445-4646

Ֆաքս՝ (916) 440-7680

Կայք՝ [Data Privacy \(ca.gov\)](https://www.ca.gov/data-privacy)

Մենք վրեժխնդրական քայլի չենք դիմի Ձեր դեմ մեր գաղտնիության գործելակերպերի վերաբերյալ զանգատ ներկայացնելու համար:

Հասանելիության և տևողության ծանուցագիր

Հասանելիության ծանուցագիր

Այս Ծանուցագրի պատճենը հասանելի է զանգահարելով Ձեր Promise Health Plan-ի անդամի ճանաչողական քարտի վրա գտնվող Հաճախորդների խնամքի համարով կամ այցելելով մեր կայքը՝ [blueshieldca.com/bsca/bsc/wcm/connect/sites/Sites_Content_EN/bsp/about-promise/privacy](https://www.blueshieldca.com/bsca/bsc/wcm/connect/sites/Sites_Content_EN/bsp/about-promise/privacy).



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ [blueshieldca.com/promise/medi-cal](https://www.blueshieldca.com/promise/medi-cal):

Այս ծանուցագրի ընդհանուր դրույթների փոփոխությունների իրավունք

Մեզանից պահանջվում է հավատարիմ մնալ սույն Ծանուցագրի պայմաններին, քանի դեռ այն գործում է: Մենք կարող ենք որևէ պահի փոխել այս Ծանուցագրի պայմանները և, մեր հայեցողությամբ, կարող ենք նոր պայմաններն ուժի մեջ մտցնել մեր ձեռքի տակ գտնվող Ձեր բոլոր PHI-ների համար, ներառյալ՝ որևէ PHI, որը մենք ստեղծել կամ ստացել ենք մինչև նոր ծանուցագիրը հրապարակելը:

Եթե մենք փոխենք այս ծանուցագիրը, մենք կթարմացնենք ծանուցագիրը մեր կայքում, և եթե Դուք այդ պահին անդամագրված եք Blue Shield Promise նպաստների ծրագրին, մենք Ձեզ կուղարկենք նոր ծանուցագիրը, երբ և ինչպես պահանջվում է օրենքով:

Օրենքների մասին ծանուցագիր

Շատ օրենքներ են կիրառվում այս Անդամի տեղեկագրի նկատմամբ: Այս օրենքները կարող են ազդել Ձեր իրավունքների և պարտավորությունների վրա, նույնիսկ եթե օրենքներն այս տեղեկագրքում չեն ներառված կամ չեն բացատրված: Այս տեղեկագրքին վերաբերող հիմնական օրենքները Medicare և Medi-Cal ծրագրերին վերաբերող դաշնային օրենքներն են: Այլ դաշնային և նահանգային օրենքներ նույնպես կարող են կիրառվել:

Ծանուցագիր Medi-Cal-ի մասին՝ որպես վերջին ելքի վճարողի, ուրիշ առողջապահական ապահովագրության և վնասի վերականգնման մասին

Medi-Cal ծրագիրը ենթարկվում է նահանգային և դաշնային օրենքներին և կանոնակարգերին, որոնք վերաբերում են անդամներին առողջական խնամքի համար երրորդ կողմի իրավական պարտավորություններին: Blue Shield Promise-ը կդիմի բոլոր տրամաբանական միջոցներին՝ վստահ լինելու, որ Medi-Cal ծրագիրը լինում է վերջին ելքի վճարողը:



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝

blueshieldca.com/promise/medi-cal:

Medi-Cal-ի անդամները կարող են ունենալ նաև ուրիշ առողջական ապահովագրություն (Other Health Coverage, OHC), որը նաև կոչվում է մասնավոր առողջության ապահովագրություն: Որպես Medi-Cal իրավասության պայման, Դուք պետք է դիմեք և/կամ պահպանեք ցանկացած հասանելի OHC, երբ Ձեզ համար որևէ ծախս չկա:

Դաշնային և նահանգային օրենքները պահանջում են, որ Medi-Cal-ի անդամները զեկուցեն առկա OHC-ին և OHC-ում որևէ փոփոխության մասին: Եթե անհապաղ չզեկուցեք OHC-ին, հնարավոր է, որ ստիպված լինեք վերադարձնել DHCS-ին սխալ վճարված ցանկացած նպաստի համար: Առցանց ներկայացրեք Ձեր OHC-ն https://www.dhcs.ca.gov/services/Pages/TPLRD_OCU_cont.aspx կայքում: Եթե համացանցը հասանելի չէ Ձեզ, OHC-ն կարող եք հաղորդել Ձեր առողջապահական ծրագրին կամ զանգահարելով 1-800-541-5555 (TTY 1-800-430-7077 կամ 711՝ Կալիֆորնիայի սահմաններում) կամ 1-916-636-1980 (Կալիֆորնիայի սահմաններից դուրս) համարով: DHCS-ը իրավունք և պարտավորություն ունի գումարը գանձելու ապահովագրված Medi-Cal-ի ծառայությունների համար, որոնց համար Medi-Cal-ը չէ առաջին վճարողը: Օրինակ, եթե վնասվածք եք ստացել ավտովթարի կամ աշխատանքի ժամանակ, մեքենայի կամ աշխատողների փոխհատուցման ապահովագրությունը կարող է նախ վճարել կամ փոխհատուցել Medi-Cal-ը:

Եթե վնասվել եք, և մյուս կողմը պատասխանատու է վնասվածքի համար, Դուք կամ Ձեր օրինական ներկայացուցիչը պարտավոր եք DHCS-ին տեղեկացնել օրինական գործողության կամ հայցի դիմելուց հետո 30 օրվա ընթացքում: Ձեր ծանուցագիրը առցանց ներկայացրեք հետևյալին՝

- Անձնական վնասվածքի ծրագիր (Personal Injury Program) հետևյալ կայքում՝ <http://dhcs.ca.gov/PI>
- Աշխատավորների փոխհատուցման վերականգնման ծրագիր (Workers Compensation Recovery Program) հետևյալ կայքում՝ <http://dhcs.ca.gov/WC>

Ավելին իմանալու համար զանգահարեք 1-916-445-9891 համարով:



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ blueshieldca.com/promise/medi-cal:

Ծանուցագիր անշարժ գույքի միջոցով գումարի վերստացման վերաբերյալ

Medi-Cal ծրագիրը պարտավոր է հատուցում պահանջել որոշակի մահացած անդամների ունեցվածքից Medi-Cal-ի նպաստների համար, որոնք ստացվել են նրանց 55 տարեկան դառնալու օրը կամ նրանից հետո: Հատուցումը ներառում է վճարովի ծառայությունը և կառավարվող խնամքի ապահովագներն ու գլխահարկային վճարումները բուժքույրական հաստատության ծառայությունների, տանը մատուցվող և համայնքային հիմքով ծառայությունների, ինչպես նաև առնչակից հիվանդանոցի և դեղատոմսային դեղերի ծառայությունների համար, երբ անդամը ստացիոնար էր բուժքույրական հաստատությունում կամ ստանում էր տանը մատուցվող և համայնքային հիմքով ծառայություններ: Հատուցումը չի կարող գերազանցել անդամի շարժական ունեցվածքի արժեքը:

Ավելին իմանալու համար գնացեք DHCS-ի անշարժ գույքի միջոցով գումարի վերստացման կայքը՝ <http://dhcs.ca.gov/er> կամ զանգահարեք 1-916-650-0590 համարով:

Գործողության ծանուցագիր

Blue Shield Promise-ը Ձեզ Գործողության ծանուցագրի (NOA) նամակ կուղարկի ամեն անգամ, որ Blue Shield Promise-ը մերժի, ուշացնի, դադարեցնի կամ բարեփոխի առողջական խնամքի ծառայությունների համար խնդրանքը: Եթե Դուք չհամաձայնվեք ծրագրի որոշման հետ, կարող եք միշտ L.A. Care-ին կամ Blue Shield Promise-ին բողոքարկում ներկայացնել: Գնացեք վերևի Բողոքարկումներ բաժինը՝ Ձեր բողոքարկումը ներկայացնելու վերաբերյալ կարևոր տեղեկությունների համար: Երբ Blue Shield Promise-ը Ձեզ կուղարկի NOA-ն, այն Ձեզ կտեղեկացնի Ձեր ունեցած բոլոր իրավունքների մասին, եթե համաձայն չեք մեր կայացրած որոշման հետ:



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ blueshieldca.com/promise/medi-cal:

Բովանդակությունը Ծանուցագրերի մեջ

Եթե Blue Shield Promise-ը հիմնավորում է մերժումները, հետաձգումները, դադարեցումները կամ փոփոխությունները ամբողջությամբ կամ մասնակիորեն՝ բժշկական անհրաժեշտության հիմքի վրա, ձեր NOA-ն պետք է պարունակի հետևյալը՝

- Հայտարարություն գործողության մասին, որը Blue Shield Promise-ը մտադրել է ձեռնարկել:
- Blue Shield Promise-ի որոշման պատճառների պարզ և հակիրճ բացատրություն:
- Ինչպես է Blue Shield Promise -ը հանգել իր որոշման: Սա պետք է ներառի չափանիշները, որոնք օգտագործել է Blue Shield Promise-ը:
- Որոշման բժշկական պատճառները: Blue Shield Promise-ը պետք է հստակ նշի, թե ինչպես անդամի վիճակը չի համապատասխանում չափանիշներին կամ ուղեցույցներին:

Թարգմանություններ

Blue Shield Promise-ը պարտավոր է ամբողջությամբ թարգմանել և տրամադրել անդամների գրավոր տեղեկություններ ընդհանուր նախընտրելի լեզուներով, ներառյալ բոլոր բողոքների և բողոքարկման ծանուցագրերը:

Լիովին թարգմանված ծանուցագիրը պետք է ներառի Blue Shield Promise-ի որոշման բժշկական պատճառը՝ նվազեցնելու, առկախելու կամ դադարեցնելու առողջական խնամքի ծառայությունների համար խնդրանքը:

Եթե Ձեր նախընտրած լեզուն հասանելի չէ, MCP-ից պահանջվում է բանավոր օգնություն առաջարկել Ձեր նախընտրած լեզվով, որպեսզի կարողանաք հասկանալ Ձեր ստացած տեղեկությունները:



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսագանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ blueshieldca.com/promise/medi-cal:

Ծանուցազիր գաղտնի հաղորդակցության խնդրանքների մասին

Անդամներից, ովքեր կարող են համաձայնել ստանալ զգայուն ծառայություններ, չի պահանջվում ստանալ որևէ այլ անդամի, բաժանորդի կամ ապահովագրի տիրոջ լիազորումը՝ զգայուն ծառայություններ ստանալու կամ զգայուն ծառայությունների համար պահանջ ներկայացնելու համար: Blue Shield Promise-ը զգայուն ծառայությունների վերաբերյալ հաղորդակցությունները կուղղի անդամի հերթական նշանակված փոստային հասցեին, էլ. փոստի հասցեին կամ հեռախոսահամարին, կամ՝ նշանակման բացակայության դեպքում՝ անդամի անունով թղթածրարում նշված հասցեին կամ հեռախոսահամարին: Blue Shield Promise-ը չի բացահայտի զգայուն ծառայությունների հետ կապված բժշկական տեղեկություններ որևէ այլ անդամի, բաժանորդի կամ ապահովագրի տիրոջ՝ առանց խնամք ստացող անդամի գրավոր լիազորման: Blue Shield Promise-ը կընդառաջի խորհրդապահական հաղորդակցության խնդրանքներն՝ խնդրված ձևով և ձևաչափով, եթե այն հեշտությամբ է արտադրվում խնդրված ձևով և ձևաչափով կամ՝ այլընտրանքային վայրերում: Անդամի խնդրանքը զգայուն ծառայությունների հետ կապված խորհրդապահական հաղորդակցությունների վերաբերյալ վավեր կլինի այնքան ժամանակ, մինչև անդամը չեղարկի խնդրանքը կամ ներկայացնի նոր խնդրանք խորհրդապահական հաղորդակցությունների համար:

Խորհրդապահական հաղորդակցության խնդրանքը կարող է գրավոր ներկայացվել Blue Shield Promise-ին այս էջի ներքևում գտնվող փոստային հասցեով, էլ. փոստի հասցեով կամ ֆաքսի համարով: Անդամը կարող է, բայց դա պարտադիր չէ, խորհրդապահական հաղորդակցություն խնդրել լրացնելով Խորհրդապահական հաղորդակցության խնդրանքի ձևաթուղթը: Չանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով և խնդրեք, որ ձևաթուղթը փոստով ուղարկեն Ձեզ: Ձևաթուղթը կարող եք նաև գտնել և ներբեռնել առցանց հետևյալ կայքում՝ blueshieldca.com/promise/medi-cal:

Լրացված և ստորագրված ձևաթուղթը կարող եք վերադարձնել Blue Shield of California-ի Գաղտնիության գրասենյակ հետևյալ ընտրանքներից մեկի օգտագործումով՝



Չանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ blueshieldca.com/promise/medi-cal:

- Փոստ՝ Blue Shield of California Privacy Office, PO Box 272540, Chico CA, 95927-2540
- Էլ. փոստ՝ privacy@blueshieldca.com
- Ֆաքս՝ 1-800-201-9020 հեռախոսահամարով

Էլեկտրոնային փոստով կամ ֆաքսով ստացվելու դեպքում, խորհրդապահական հաղորդակցության Ձեր խնդրանքն ուժի մեջ կմտնի ստանալուց հետո 7 օրացուցային օրվա ընթացքում: Եթե ստացվի առաջին կարգի փոստով, ապա Ձեր խնդրանքն ուժի մեջ կմտնի ստանալուց հետո 14 օրացուցային օրվա ընթացքում: Եթե շփվեք մեզ հետ Ձեր խնդրանքի վերաբերյալ, Blue Shield Promise-ը կհաստատի Ձեր խորհրդապահական հաղորդակցության խնդրանքի ստացված լինելը և Ձեզ կհայտնի Ձեր խնդրանքի կարգավիճակի մասին:

Խորհրդապահական հաղորդակցության խնդրանքը կտարածվի բոլոր հաղորդակցությունների վրա, որոնք բացահայտում են բժշկական տեղեկություններ կամ մատակարարի անունը և հասցեն՝ կապված խորհրդապահական հաղորդակցություն խնդրող անդամի կողմից բժշկական ծառայությունների ստացման հետ:



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆոռնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ blueshieldca.com/promise/medi-cal:

8. Կարևոր համարներ և բառեր, որոնք պետք է իմանալ

Կարևոր հեռախոսահամարներ

Blue Shield Promise	
Հաճախորդների խնամք	1-800-605-2556 (TTY 711)
Տեղական ծառայությունների ծրագիր	1-800-877-7195 (TTY 711)
24-ժամյա Բուժքույրերի խորհրդատվական հեռախոսագիծ	1-800-609-4166 (TTY 711)
Համապատասխանության թեժ հեռախոսագիծ	1-800-400-4889 հեռախոսահամարով
Ընտանիքի աղբյուրների կենտրոններ	Boyle Heights (213) 294-2840 East L.A. (213) 438-5570 El Monte (213) 428-1495 Inglewood (310) 330-3130 Lynwood (310) 661-3000 Metro LA (213) 428-1457 Norwalk (562) 651-6060 Pacoima (213) 438-5497 Palmdale (213) 438-5580 Pomona (909) 620-1661 Wilmington (213) 428-1490

Կառավարական աղբյուրներ	
Հաշմանդամ ամերիկացիների օրենքի (Americans with Disabilities Act, ADA) մասին տեղեկություն	(800) 514-0301(Ձայն) (800) 514-0383 (TTY) (619) 528-4000
ԱՄՆ Քաղաքացիական իրավունքների գրասենյակ U.S. Office for Civil Rights	(866) 627-7748



Ձանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝

blueshieldca.com/promise/medi-cal:

Կառավարական աղբյուրներ	
Սոցիալական ապահովության վարչության Լրացուցիչ սոցիալական եկամուտ (SSI) (Social Security Administration Supplemental Social Income, SSI)	(800) 772-1213
Հաշմանդամության ծառայություններ	Կալիֆորնիայի փոխանցման ծառայություն (CRS) California Relay Service (CRS) TTY` 711 Sprint (888) 877-5379 MCI (800) 735-2922
Երեխայի առողջապահություն և հաշմանդամության կանխում (Child Health and Disability Prevention, CHDP)	(800) 993-2437
Կալիֆորնիայի Երեխաների ծառայություններ (CCS)	(800) 288-4584
Կալիֆորնիայի Առողջական խնամքի սպասարկման բաժին (California Department of Health Services, CDHS)	(916) 445-4171
Լոս Անջելես վարչաշրջան - Հանրային և հասարակական սպասարկման բաժին Los Angeles County - Department of Public Social Services (DPSS): Հաճախորդի սպասարկման կենտրոն	(866) 613-3777 (TTY` 1-800-660-4026)
Լոս Անջելես վարչաշրջանի Առողջական սպասարկման բաժին Los Angeles County Department of Health Services	(213) 240-8101
Լոս Անջելես վարչաշրջանի հոգեկան առողջության բաժին Los Angeles County Department of Mental Health	(800) 854-7771
Կանայք, նորածիններ և երեխաներ ծրագիր (Women, Infants and Children, WIC)	(888) 942-9675
Medi-Cal ատամնաբուժական ծրագիր (Denti-Cal)	(800) 322-6384 (TTY` (800) 735-2922
Կալիֆորնիայի սոցիալական սպասարկության բաժին (California Department of Social Services, CDSS)	(800) 952-5253



Ձանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք
1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է
երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսագանգն անվճար է:
Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711
համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝

blueshieldca.com/promise/medi-cal:

Կառավարական աղբյուրներ	
Medi-Cal-ի Կառավարվող խնամքի Իրավապաշտպանի գրասենյակ ☐ Medi-Cal Managed Care Office of the Ombudsman	(888) 452-8609
Medi-Cal Rx	(800) 977-2273 (TTY` (800) 977-2273 և սեղմեք 7 կամ 711
Կառավարվող առողջական խնամքի բաժին (Department of Managed Health Care, DMHC)	(888) 466-2219 ((888) HMO-2219)
Առողջական խնամքի ընտրանքներ Health Care Options	Արաբերեն (800) 576-6881 Հայերեն (800) 840-5032 Կամբոջերեն/Քմերերեն (800) 430-5005 Կանտոներեն (800) 430-6006 Անգլերեն (800) 430-4263 Պարսկերեն (800) 840-5034 Հնդկերեն (800) 430-2022 Կորեերեն (800) 576-6883 Լատներեն (800) 430-4091 Մանդարին (800) 576-6885 Ռուսերեն (800) 430-7007 Իսպաներեն (800) 430-3003 Տազալերեն (800) 576-6890 Վիետնամերեն (800) 430-8008 (TTY` (800) 430-7077

Բառեր, որոնք պետք է իմանալ

Ակտիվ երկուսք՝ Այն ժամանակամիջոցը, երբ կլինը գտնվում է ծննդաբերության երեք փուլերում և կամ հնարավոր չէ նրան ժամանակին անվտանգ փոխադրել մի ուրիշ հիվանդանոց ծննդաբերությունից առաջ, կամ փոխադրումը կարող է վնասել կնոջ կամ չծնված երեխայի առողջության և անվտանգության:



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք
1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է
երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսագանգն անվճար է:
Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711
համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝

blueshieldca.com/promise/medi-cal:

Սուր՝ Բժշկական վիճակ, որը հանկարծահաս է, պահանջում է արագ բժշկական ուշադրություն և երկար չի տևում:

Ամերիկյան հնդկացի՝ Անհատ՝ սահմանված Միացյալ Նահանգների օրենսգրքի (U.S.C.) 1603(13), 1603(28) բաժինների 25-րդ տիտղոսում: 1679(a) կամ ով իրավասու է ճանաչվել որպես հնդկացի, համաձայն 42 C.F.R. 136.12 կամ Հնդկացիների առողջական խնամքի բարելավման մասին օրենքի V տիտղոսի՝ առողջապահական ծառայություններ ստանալու համար Ամերիկեան հնդկացիների առողջապահական ծառայությունների մատակարարներից (Հնդկացիների առողջապահական ծառայություն, Հնդկացիների ցեղ, ցեղային կազմակերպություն կամ Քաղաքային հնդկացիների կազմակերպություն՝ I/T/U) կամ ուղղորդման միջոցով պայմանագրային առողջապահական ծառայությունների ներքո:

Բողոքարկում՝ Անդամի խնդրանքն է, որ Blue Shield Promise-ը վերանայի և փոխի մի որոշում, որը մենք կայացրել ենք խնդրված ծառայության ապահովագրման վերաբերյալ:

Նպաստներ՝ Առողջական խնամքի ծառայություններ և դեղեր, որոնք ապահովագրվում են այս առողջապահական ծրագրի ներքո:

Կալիֆորնիայի Երեխաների ծառայություններ (CCS)՝ Medi-Cal ծրագիրը, որը ծառայություններ է մատուցում մինչև 21 տարեկան երեխաների, ովքեր ունեն որոշակի հիվանդություններ և առողջական խնդիրներ:

Կալիֆորնիայի առողջապահություն և հաշմանդամության կանխում (CHDP)՝ Հանրային առողջապահական ծրագիր, որը փոխհատուցում է հանրային և մասնավոր առողջական խնամքի մատակարարներին վաղ առողջական գնահատումների համար, որպեսզի հայտնաբերվեն կամ կանխարգելվեն հիվանդություններն ու հաշմանդամությունը երեխաների և պատանիների մոտ: Ծրագիրը օգնում է երեխաներին և պատանիներին օգտվել սովորական առողջական խնամքից: Ձեր PCP-ն կարող է մատուցել CHDP-ի ծառայություններ:

Գործի կառավարիչ՝ Գրանցված բուժքույրեր կամ սոցիալական աշխատողներ, ովքեր կարող են օգնել, որ հասկանաք գլխավոր առողջական խնդիրներ և խնամք դասավորեք Ձեր մատակարարների հետ:



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ blueshieldca.com/promise/medi-cal:

Վկայագրված բուժքույր-մանկաբարձ (CNM)[՝] Մի անհատ, ով արտոնագրվել է որպես Գրանցված բուժքույր և վկայագրվել է որպես բուժքույր-մանկաբարձ Կալիֆորնիայի Գրանցված բուժքույրերի խորհրդի կողմից: Վկայագրված բուժքույր-մանկաբարձին արտոնվում է հաճախել բնականոն ծննդաբերության դեպքերի:

Ոսկրահարդար[՝] Մատակարար, ով ողնաշարը բուժում է ձեռքով մանիպուլյացիայի միջոցով:

Քրոնիկ վիճակ[՝] Մի հիվանդություն կամ ուրիշ բժշկական վիճակ, որը հնարավոր չէ լրիվ բուժել կամ որը վատանում է ժամանակի ընթացքում կամ անհրաժեշտ է այն դարմանել, որպեսզի ավելի չվատանաք:

Կլինիկա[՝] Մի հաստատություն, որը անդամները կարող են ընտրել որպես իրենց Առաջնային խնամքի մատակարար (PCP): Այն կարող է լինել Դաշնային որակավորման առողջապահական կենտրոն (FQHC), համայնքային կլինիկա, Գյուղական առողջապահական կլինիկա (RHC), Հնդկացիների առողջական խնամքի մատակարար (IHCP) կամ առաջնային խնամքի այլ հաստատություն:

Համայնքային հիմքով չափահասի սպասարկում (CBAS)[՝] Ամբուլատոր, հաստատությունում տրամադրվող ծառայություններ հմուտ բուժքույրական խնամքի համար, սոցիալական ծառայություններ, թերապիաներ, անձնական խնամք, ընտանիքի անդամի և խնամակալի վերապատրաստում և աջակցություն, սննդային ծառայություններ, փոխադրումներ և այլ ծառայություններ որակավորվող անդամների համար:

Գանգատ[՝] Անդամի բանավոր կամ գրավոր դժգոհության արտահայտությունը յMedi-Cal-ի, Blue Shield Promise-ի, վարչաշրջանի հոգեկան առողջության ծրագրի, կամ Medi-Cal-ի մատակարարի կողմից ապահովագրված ծառայության վերաբերյալ:

Խնամքի շարունակում[՝] Ծրագրի անդամի կարողությունը՝ շարունակելու Medi-Cal-ի ծառայություններն ստանալ իր առկա արտացանցային մատակարարից մինչև 12 ամիս, առանց ծառայությունների ընդմիջման, եթե մատակարարն ու Blue Shield Promise-ը համաձայնեն:



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսագանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ blueshieldca.com/promise/medi-cal:

Պայմանագրային դեղերի ցանկ (CDL)՝ Medi-Cal Rx-ի վավերացված դեղերի ցանկը, որից Ձեր մատակարարը կարող է պատվիրել Ձեզ անհրաժեշտ ապահովագրված դեղեր:

Նպաստների համակարգում (COB)՝ Որոշման գործընթացը՝ թե ո՞ր ապահովագրական ծածկույթը (Medi-Cal, Medicare, առևտրային ապահովագրություն կամ այլ) ունի առաջնային բուժման և վճարման պարտավորություններ անդամների համար, ովքեր ունեն մեկից ավելի առողջական ապահովագրության ծածկույթ:

Համավճար՝ Ձեր կատարած վճարումը, ընդհանրապես ծառայության պահին, ի հավելումն ապահովագրող կողմի վճարման:

Ապահովագրություն (ապահովագրված ծառայություններ)՝ Medi-Cal-ի ծառայություններ, որոնց վճարման համար պատասխանատու է Blue Shield Promise-ը: Ապահովագրված ծառայությունները ենթակա են Medi-Cal-ի պայմանագրի ընդհանուր դրույթներին, պայմաններին, սահմանափակումներին և բացառություններին, և ըստ այս Ապահովագրության ապացույցում (EOC) նշված որևէ բարեփոխման:

DHCS՝ Կալիֆորնիայի Առողջական խնամքի սպասարկման բաժնի ծառայություններ: Սա Նահանգային գրասենյակն է, որը վերահսկում է

Ապանդամագրել՝ Այս ծրագրի օգտագործման դադարեցումը, քանի որ այլևս չեք որակավորվում դրա համար կամ անցել եք մի նոր առողջապահական ծրագիր: Պարտավոր եք ստորագրել մի ձևաթուղթ, որը նշում է, որ այլևս չեք ուզում օգտվել այս ծրագրից, կամ զանգահարել HCO և ապանդամագրվել հեռախոսի միջոցով:

DMHC՝ Կալիֆորնիայի Կառավարվող առողջական խնամքի բաժին: Սա Նահանգային գրասենյակն է, որը վերահսկում է կառավարվող խնամքի առողջապահական ծրագրերը:

Տեսական օգտագործման բժշկական սարքեր (DME)՝ Սարք՝ որը բժշկականորեն անհրաժեշտ է և այն պատվիրել է Ձեր բժիշկը կամ ուրիշ մատակարար: Blue Shield Promise-ը կորոշի, թե DME-ը վարձել է պետք, թե՞ գնել: Վարձի գները չպետք է գերազանցեն գնման գինը:



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝

blueshieldca.com/promise/medi-cal:

Վաղ և պարբերաբար զննում, ախտորոշում և բուժում (EPSDT)՝ EPSDT

ծառայությունները նպաստ են Medi-Cal-ի՝ մինչև 21 տարեկան անդամների համար, նրանց առողջ պահելու համար: Անդամները պետք է անցնեն համապատասխան առողջական ստուգումներ իրենց տարիքին համապատասխան և համապատասխան զննումներ՝ առողջական խնդիրներ հայտնաբերելու և հիվանդությունները վաղ բուժելու համար, ինչպես նաև ցանկացած բուժում՝ հոգալու կամ օգնելու այն վիճակներին, որոնք կարող են հայտնաբերվել ստուգումների ժամանակ:

Արտակարգ իրավիճակի բժշկական վիճակ՝ Մի բժշկական կամ հոգեկան վիճակ այնպիսի սուր ախտանիշներով, ինչպես՝ ակտիվ երկունքը (սահմանումը տեսնել վերևում), կամ սուր ցավը, որը առողջապահական և բժշկական գիտելիքների տեր տրամաբանող պարզ անձին կարող է հավատացնել, որ անմիջական բժշկական խնամք չստանալը կարող է՝

- Ձեր կամ Ձեր չծնված երեխայի առողջությունը ենթարկել լուրջ վտանգի
- Խանգարում պատճառել մարմնական գործառույթի
- Պատճառ դառնալ, որ մարմնի մասը կամ օրգանը լավ չգործի

Շտապ օգնության կայանի խնամք՝ Քննություն, որը կատարում է բժիշկը (կամ օրենքի թույլատրության համաձայն բժշկի ցուցմունքի ներքո գործող անձնակազմը), պարզելու համար արտակարգ իրավիճակի բժշկական վիճակի առկայությունը: Բժշկականորեն անհրաժեշտ ծառայություններ, որոնք հարկավոր են հաստատության հնարավորությունների ծիրում Ձեր վիճակը դարձնելու կլինիկականորեն կայուն:

Արտակարգ իրավիճակի բժշկական փոխադրություն՝ Հիվանդակառքով կամ արտակարգ իրավիճակի մեքենայով փոխադրում դեպի շտապ օգնության կայան՝ արտակարգ իրավիճակի բժշկական խնամք ստանալու համար:

Անդամագրյալ՝ Անձ, ով անդամ է առողջապահական ծրագրին և ծառայություններ է ստանում ծրագրի միջոցով:

Հաստատված հիվանդ՝ Հիվանդ, ով հաստատված կապ ունի մատակարարի հետ և տեսել է այդ մատակարարին ծրագրով սահմանված որոշակի ժամկետում:



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսագանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ blueshieldca.com/promise/medi-cal:

Բացառված ծառայություններ՝ Ծառայություններ, որոնք ապահովագրված չեն Կալիֆորնիայի Medi-Cal ծրագրի կողմից:

Փորձարարական բուժում՝ Դեղորայք, սարքավորումներ, բուժօգնություններ կամ ծառայություններ, որոնք գտնվում են փորձարկման փուլում՝ անցնում են լաբորատոր և/կամ կենդանիների վրա հետազոտություններ՝ նախքան մարդկանց վրա փորձարկումը: Փորձարարական ծառայությունները կլինիկական հետազոտություն չեն անցնում:

Ընտանիքի ծրագրման ծառայություններ՝ Հղիությունը կանխարգելելու կամ ուշացնելու ծառայություններ:

Դաշնային որակավորման առողջապահական կենտրոն (FQHC)՝ Առողջապահական կենտրոն մի վայրում, որտեղ չկան առողջական խնամքի բազմաթիվ մատակարարներ: FQHC-ում կարող եք ստանալ առաջնային և կանխարգելող խնամք:

Վճարովի ծառայությամբ (FFS) Medi-Cal՝ Երբեմն Ձեր Medi-Cal ծրագիրը չի ապահովագրում ծառայությունները, բայց Դուք դեռ կարող եք դրանք ստանալ Medi-Cal FFS-ի միջոցով, ինչպես օրինակ՝ FFS Medi-Cal Rx-ի միջոցով դեղատների բազմաթիվ ծառայություններ:

Հետևման խնամք՝ Բժշկի սովորական խնամք՝ ստուգելու հիվանդի բարելավումը հիվանդանոցային բուժումից հետո կամ բուժման ընթացքում:

Խարդախություն՝ Խաբելու կամ ապակողմնորոշելու միտումնավոր արարք անձի կողմից, ով գիտի, որ խաբեությունը կարող է հանգեցնել չլիազորված նպաստի տվյալ անձի կամ ուրիշի համար:

Անկախ ծննդաբերության կենտրոններ (FBCs)՝ Առողջապահական հաստատություններ, որտեղ նախատեսվում է ծննդաբերություն իրականացնել հղի կնոջ բնակության վայրից դուրս, որոնք նահանգի կողմից արտոնագրվել կամ այլ կերպ վավերացվել են՝ մատուցելու նախածնական երկունք և ծննդաբերություն կամ հետ-ծննդաբերական խնամք և ծրագրում ընդգրկված ուրիշ ամբուլատոր ծառայություններ: Այս հաստատությունները հիվանդանոցներ չեն:



Ձանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ blueshieldca.com/promise/medi-cal:

Բողոք՝ Անդամի դժգոհության բանավոր կամ գրավոր արտահայտությունը Blue Shield Promise-ի, մատակարարի կամ մատուցված ծառայությունների նկատմամբ: Մի գանգատ, որը ներկայացվել է Blue Shield Promise-ին ցանցի մատակարարի մասին՝ բողոքի օրինակ է:

Վերականգնողական ծառայություններ և սարքեր՝ Առողջական խնամքի ծառայություններ, որոնք օգնում են, որ պահեք, սովորեք կամ բարելավեք ունակությունները և գործունեությունները առօրյա կյանքի համար:

Առողջական խնամքի ընտրանքներ (HCO)՝ Ծրագիրը, որը կարող է Ձեզ անդամագրել առողջապահական ծրագրի կամ ապանդամագրել նրանից:

Առողջական խնամքի մատակարարներ՝ Բժիշկներ կամ մասնագետներ, ինչպես՝ վիրաբույժները, քաղցկեղ բուժող բժիշկները, կամ այն բժիշկները, ովքեր բուժում են մարմնի հատուկ մասեր և գործում են Blue Shield Promise-ի հետ կամ գտնվում են Blue Shield Promise-ի ցանցում: Blue Shield Promise-ի ցանցի մատակարարները պարտավոր են արտոնագիր ունենալ Կալիֆորնիայում գործելու համար և Ձեզ մատուցել Blue Shield Promise-ի ապահովագրած մի ծառայություն:

Ձեզ սովորաբար ուղեգիր է հարկավոր Ձեր PCP-ից՝ մասնագետի գնալու համար: Ձեր PCP-ն պարտավոր է նախավավերացում ստանալ Blue Shield Promise-ից, նախքան Դուք խնամք կստանաք մասնագետից:

Ձեզ PCP-ից ուղեգիր անհրաժեշտ չէ որոշ տեսակի ծառայությունների համար, ինչպես՝ ընտանիքի ծրագրումը, շտապ օգնությունը, մանկաբարձ/գինեկոլոգի խնամքը կամ զգայուն ծառայությունները:

Առողջական ապահովագրություն՝ Ապահովագրական ծածկույթ, որը վճարում է բժշկական և վիրաբուժական ծախքերը, ապահովագրված անձին փոխհատուցելով հիվանդության կամ վնասվածքի պատճառած ծախքերը, կամ ուղղակի վճարելով խնամքի մատակարարին:

Տանը մատուցվող առողջական խնամք՝ Տանը մատուցվող հմուտ բուժքույրական խնամք և այլ ծառայություններ:

Տանը մատուցվող առողջական խնամքի մատակարարներ՝ Մատակարարներ, որոնք Ձեզ տալիս են տանը մատուցվող հմուտ բուժքույրական խնամք և այլ ծառայություններ:



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսագանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ blueshieldca.com/promise/medi-cal:

Անբուժելի հիվանդների խնամք՝ Մահացու հիվանդություն ունեցող անդամի համար ֆիզիկական, հուզական, սոցիալական և հոգևոր անհանգստությունները նվազեցնող խնամք: Անբուժելի հիվանդների խնամքը հասանելի, եթե անդամն ունի 6 ամիս կամ նվազ ապրելու ակնկալություն

Հիվանդանոց՝ Վայր, որտեղ կարող եք բժշկներից և բուժքույրերից ստանալ ստացիոնար և ամբուլատոր խնամք:

Հիվանդանոցային բուժում՝ Հիվանդանոց ընդունում՝ որպես ստացիոնար հիվանդ բուժման համար:

Հիվանդանոցի ամբուլատոր խնամք՝ Բժշկական կամ վիրաբուժական խնամք, որը հիվանդանոցում իրականացվում է առանց այնտեղ որպես ստացիոնար ընդունվելու:

Հնդկացիների առողջական խնամքի մատակարար (IHCP)՝ Առողջական խնամքի ծրագիր, որը բանեցվում է Ամերիկեան հնդկացիների առողջապահական ծառայությունների (IHS), Հնդկացիների ցեղի, Ցեղային կազմակերպության կամ Քաղաքային հնդկացիների կազմակերպության (I/T/U) կողմից, ինչպես այս տերմինները սահմանվել են Ամերիկյան հնդկացիների առողջական խնամքի բարելավման օրենքի (Indian Health Care Improvement Act) 4-րդ բաժնում (25 U.S.C. բաժին 1603):

Ստացիոնար խնամք՝ Երբ պարտավոր եք գիշերել հիվանդանոցում կամ այլուր Ձեզ անհրաժեշտ բժշկական խնամքի համար:

Հետազոտական բուժում՝ Բուժման դեղամիջոց, կենսաբանական արտադրանք կամ սարք, որը հաջողությամբ ավարտել է FDA-ի կողմից հաստատված կլինիկական հետազոտության առաջին փուլը, որը հաստատված չէ FDA-ի կողմից ընդհանուր օգտագործման համար և մնում է FDA-ի կողմից հաստատված կլինիկական հետազոտության տակ:

Երկարաժամկետ խնամք՝ Հաստատությունում ընդունման ամսից ավելի երկար ժամանակով խնամք:

Կառավարվող խնամքի ծրագիր՝ Medi-Cal-ի ծրագիր, որն օգտվում է միայն որոշակի բժիշկներից, մասնագետներից, կլինիկաներից, դեղատներից և հիվանդանոցներից՝



Ձանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսագանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝

blueshieldca.com/promise/medi-cal:

ծրագրին անդամագրված Medi-Cal ընդունողների համար: Blue Shield Promise-ը կառավարվող խնամքի ծրագիր է:

Medi-Cal Rx՝ FFS Medi-Cal դեղատնային նպաստների ծառայություն, որը հայտնի է որպես «Medi-Cal Rx», որը տրամադրում է դեղատնային նպաստներ և ծառայություններ, ներառյալ դեղատոմսային դեղեր և որոշ բժշկական պաշարներ Medi-Cal-ի բոլոր շահառուներին:

Բժշկական տուն՝ Խնամքի մոդել, որը ավելի լավորակ առողջական խնամք կմատուցի, կբարելավի անդամների՝ իրենց սեփական խնամքի ինքնատնօրինումը և կնվազեցնի անտեղի ծախսերը ժամանակի ընթացքում:

Բժշկական փոխադրում՝ Փոխադրում՝ երբ չեք կարող ապահովագրված բժշկական ժամադրության գնալ և/կամ դեղատոմսեր վերցնել մարդատար մեքենայով, ավտոբուսով, գնացքով կամ տաքսիով և Ձեր մատակարարն է նշանակում այն Ձեզ համար: Blue Shield Promise-ը վճարում է ամենից էժան փոխադրման համար Ձեր բժշկական կարիքների համար, երբ Ձեզ փոխադրություն է հարկավոր Ձեր ժամադրության համար:

Բժշկականորեն անհրաժեշտ (կամ բժշկական անհրաժեշտություն)՝ Բժշկականորեն անհրաժեշտ խնամքը ներկայացնում է կարևոր ծառայություններ, որոնք տրամաբանական են և պաշտպանում են կյանքը: Խնամքն անհրաժեշտ է արգելելու համար հիվանդների լուրջ հիվանդ կամ հաշմանդամ դառնալը: Այս խնամքը նվազեցնում է սաստիկ ցավը՝ բուժելով ախտը, հիվանդությունը կամ վնասվածքը: Մինչև 21 տարեկան անդամների համար Medi-Cal-ի բժշկականորեն անհրաժեշտ ծառայությունները ներառում է բժշկականորեն անհրաժեշտ խնամքը՝ ֆիզիկական կամ հոգեկան հիվանդությունը կամ վիճակը ուղղելու կամ օգնելու համար, ներառյալ թմրանյութի օգտագործման խանգարումները, ինչպես սահմանվել է Միացյալ Նահանգների օրենսգրքի 42-րդ Տիտղոսի 1396(r) բաժնում:

Medicare՝ Դաշնային առողջության ապահովագրության ծրագիր՝ 65 տարեկան և ավելի տարեց անձանց, որոշ ավելի երիտասարդ հաշմանդամների, և վերջին շրջանի երիկամային հիվանդություն (մշտական երիկամային անբավարարություն, որը պահանջում է դիալիզ կամ երիկամի փոխպատվաստում, որը երբեմն կոչվում է ESRD) ունեցող անձանց համար:



Ձանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսագանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ blueshieldca.com/promise/medi-cal:

Անդամ՝ Որևէ իրավասու Medi-Cal-ի նպաստառու, ով անդամագրվել է Blue Shield Promise-ին և իրավունք ունի ստանալու ապահովագրված ծառայություններ:

Հոգեկան առողջության ծառայությունների մատակարար՝ Արտոնագրված անհատներ, ովքեր հիվանդներին մատուցում են հոգեկան առողջության և վարքագծային առողջության ծառայություններ:

Մանկաբարձական ծառայություններ՝ Նախածնական, ներծննդաբերական և հետ-ծննդաբերական խնամքի, ներառյալ՝ ընտանիքի ծրագրման խնամքը մոր և անմիջական խնամքը նորածնի համար, որը մատուցվում է վկայագրված բուժքույր-մանկաբարձների (CNM) և արտոնագրված մանկաբարձների (LM) կողմից:

Ցանց՝ Բժիշկների, կլինիկաների, հիվանդանոցների և ուրիշ մատակարարների մի խումբ, որը խնամքի մատուցման համար պայմանագիր է կնքել Blue Shield Promise-ի հետ:

Ցանցի մատակարար (կամ ներքանցային մատակարար)՝ Տեսեք «Մասնակից մատակարար»:

Չապահովագրված ծառայություն՝ Ծառայություն, որը Blue Shield Promise-ը չի ապահովագրում:

Ոչ-բժշկական փոխադրում՝ Փոխադրում՝ երբ Medi-Cal-ի ապահովագրված ծառայության համար Ձեր մատակարարի լիազորումով նշանակված ժամադրության եք գնում և այնտեղից վերադառնում, ինչպես նաև դեղատոմսեր և բժշկական պաշարներ եք վերցնում:

Ոչ-մասնակից մատակարար՝ Blue Shield Promise-ի ցանցում չգտնվող որևէ մատակարար:

Ուրիշ առողջական ապահովագրություն (OHC)՝ Ուրիշ առողջական ապահովագրությունը (OHC) վերաբերում է մասնավոր առողջության ապահովագրության և ծառայությունների վճարողներին, բացի Medi-Cal-ից: Ծառայությունները կարող են ներառել բժշկական, ատամնաբուժական, տեսողության, դեղատան և/կամ Medicare-ի լրացուցիչ ծրագրեր (Մաս C և D):



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսագանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ blueshieldca.com/promise/medi-cal:

Օրթեգային սարք՝ Որպես հենարան օգտագործվող մի սարք կամ դրսից մարմնին ամրացված ամրակ՝ նեցուկ ընծայելու կամ ուղղելու մի խիստ շատ վնասված կամ ախտահարված մարմնի մաս և որը բժշկականորեն անհրաժեշտ է անդամի բժշկական ապաքինման համար:

Արտատարածքային ծառայություններ՝ Ծառայություններ՝ երբ անդամը գտնվում է սպասարկման տարածքից դուրս որևէ վայրում:

Արտացանցային մատակարար՝ Blue Shield Promise-ի ցանցում չգտնվող մատակարար:

Ամբուլատոր խնամք՝ Երբ պարտավոր չեք գիշերել հիվանդանոցում կամ այլուր Ձեզ անհրաժեշտ բժշկական խնամքի համար:

Հոգեկան առողջության ամբուլատոր ծառայություններ՝ Ամբուլատոր ծառայություններ անդամների համար, ովքեր ունեն մեղմից չափավոր հոգեկան առողջության վիճակներ, ներառյալ՝

- Անհատական կամ խմբային հոգեկան առողջության գնահատում և բուժում (հոգեբուժություն)
- Հոգեբանական ստուգում՝ հոգեկան առողջության վիճակի գնահատման համար, երբ կլինիկականորեն ախտորոշվել է
- Ամբուլատոր ծառայություններ, որոնք նպատակ ունեն դեղաբուժումը հսկել
- Հոգեբուժական խորհրդատվություն
- Ամբուլատոր լաբորատորային անալիզներ, պաշարներ և լրացուցիչներ

Ցավամոքիչ խնամք՝ Լուրջ հիվանդություն ունեցող անդամի համար ֆիզիկական, հուզական, սոցիալական և հոգևոր անհանգստությունները նվազեցնող խնամք: Ցավամոքիչ խնամքը անդամից չի պահանջում ունենալ 6 ամիս կամ նվազ ապրելու ակնկալություն

Մասնակից հիվանդանոց՝ Արտոնագրված հիվանդանոց, որը պայմանագիր է կնքել Blue Shield Promise-ի հետ, որպեսզի ծառայություններ մատուցի անդամներին՝ անդամի խնամք ստանալու պահին: Ապահովագրված ծառայությունները, որոնք մի շարք մասնակից հիվանդանոցներ թերևս առաջարկում են անդամներին,



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսագանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ blueshieldca.com/promise/medi-cal:

սահմանափակվում են Blue Shield Promise-ի օգտագործման վերանայումով և որակի երաշխավորման քաղաքականություններով կամ հիվանդանոցի հետ Blue Shield Promise-ի ունեցած պայմանագրով:

Մասնակից մատակարար (կամ մասնակից բժիշկ)՝ Մի բժիշկ, հիվանդանոց կամ ուրիշ արտոնագրված առողջական խնամքի մասնագիտական կամ արտոնագրված առողջապահական հաստատություն, ներառյալ՝ ենթասուր խնամքի հաստատությունները, որոնք պայմանագիր ունեն Blue Shield Promise-ի հետ՝ անդամներին առաջարկելու ապահովագրված ծառայություններ, երբ անդամը խնամք է ստանում:

Բժշկի ծառայություններ՝ Ծառայություններ, որոնք մատուցվում են նահանգային օրենքի ներքո բժշկություն կամ կմախամկանային թերապիա կիրառելու նպատակով արտոնագրված անձի կողմից, առանց ներառելու ծառայությունները, որոնք մատուցվում են բժշկի կողմից, երբ Ձեզ ընդունել են հիվանդանոց և դրանց համար ծախք է ներկայացվել հիվանդանոցի հաշվում:

Ծրագիր՝ Անցեք «Կառավարվող խնամքի ծրագիր»:

Հետ-կայունացման ծառայություններ՝ Արտակարգ իրավիճակի բժշկական վիճակի հետ կապված ապահովագրության ծառայություններ, որոնք տրամադրվում են անդամի կայունացումից հետո՝ կայունացված վիճակը պահպանելու համար: Հետ-կայունացման խնամքի ծառայությունները ապահովագրվում և վճարվում են: Արտացանցային հիվանդանոցները կարող են նախավերացման կարիք ունենալ:

Նախավերացում (կամ նախօրոք լիազորում)՝ Ձեր PCP-ն կամ այլ մատակարարներ պարտավոր են վավերացում ստանալ Blue Shield Promise-ից, Ձեզ որոշակի ծառայություններ տրվելուց առաջ: Blue Shield Promise-ը կվավերացնի միայն Ձեզ անհրաժեշտ ծառայությունները: Blue Shield Promise-ը չի վավերացնի ոչ-մասնակից մատակարարների ծառայությունները, եթե Blue Shield Promise-ը համոզված է, որ կարող եք համապատասխան կամ ավելի հարմար ծառայություններ ստանալ Blue Shield Promise-ի մատակարարներից: Ուղեգիրը վավերացում չէ: Պարտավոր եք վավերացում ստանալ Blue Shield Promise-ից:



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ blueshieldca.com/promise/medi-cal:

Դեղատոմսային դեղի ապահովագրություն՝ Ապահովագրություն մատակարարի կողմից նշանակված դեղերի համար:

Դեղատոմսային դեղեր՝ Դեղ, որը օրինական կերպով պահանջում է արտոնագրված մատակարարի պատվեր տրամադրել:

Առաջնային խնամք՝ Անցեք «Սովորական խնամք»:

Առաջնային խնամքի մատակարար (PCP)՝ Արտոնագրված մատակարարը, ում ունեք Ձեր հիմնական առողջական խնամքի համար: Ձեր PCP-ն կօգնի Ձեզ, որ ստանաք Ձեզ անհրաժեշտ խնամքը: Մի շարք խնամքի կարիքներ պետք է առաջուց վավերացվեն, բացի այն դեպքերից, երբ՝

- Ունեք արտակարգ իրավիճակ
- Ձեզ անհրաժեշտ է Մանկաբարձ/Գինեկոլոգի խնամք
- Ձեզ անհրաժեշտ են զգայուն ծառայություններ
- Ձեզ անհրաժեշտ են ընտանիքի ծրագրման ծառայություններ / ծննդյան հսկողություն

Ձեր PCP-ն կարող է լինել՝

- Ընդհանուր բժշկության մասնագետ
- Ներքին հիվանդությունների մասնագետ
- Մանկաբույժ
- Ընտանեկան բժշկության մասնագետ
- Մանկաբարձ/Գինեկոլոգ
- Հնդկացիների առողջական խնամքի մատակարար (IHCP)
- Դաշնային որակավորման առողջապահական կենտրոն (FQHC)
- Գյուղական առողջապահական կլինիկա (RHC)
- Առաջնային խնամք տրամադրող բուժքույր
- Օգնական բժիշկ
- Կլինիկա

Նախօրոք լիազորում (նախավավերացում)՝ Ձեր PCP-ն կամ այլ մատակարարներ պարտավոր են վավերացում ստանալ Blue Shield Promise-ից, Ձեզ որոշակի



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝

blueshieldca.com/promise/medi-cal:

Ծառայություններ տրվելուց առաջ: Blue Shield Promise-ը կվավերացնի միայն Ձեզ անհրաժեշտ ծառայությունները: Blue Shield Promise-ը չի վավերացնի ոչ-մասնակից մատակարարների ծառայությունները, եթե Blue Shield Promise-ը համոզված է, որ կարող եք համապատասխան կամ ավելի հարմար ծառայություններ ստանալ Blue Shield Promise-ի մատակարարների միջոցով: Ուղեգիրը վավերացում չէ: Պարտավոր եք վավերացում ստանալ Blue Shield Promise-ից:

Պրոթեզային սարք՝ Մի արհեստական սարք, որը կցվում է մարմնին՝ մարմնի բացակա մասը փոխարինելու համար:

Մատակարարների հասցեագիրք՝ Blue Shield Promise-ի ցանցում գտնվող մատակարարների ցանկ:

Հոգեբուժական արտակարգ իրավիճակի վիճակ՝ Հոգեկան խանգարում, որտեղ ախտանիշներն այնքան են լուրջ կամ սաստիկ, որ առաջացնում են կա՛մ անմիջական վտանգ Ձեր անձին կամ ուրիշների նկատմամբ, կա՛մ էլ անմիջականորեն անկարող եք ապահովել կամ օգտագործել սնունդ, ապաստան կամ հագուստեղեն՝ հոգեկան խանգարման հետևանքով:

Հանրային առողջապահական ծառայություններ՝ Առողջապահական ծառայություններ, որոնք ուղղված են ողջ բնակչության: Մրանք ընդգրկում են, ուրիշների կարգին, առողջական վիճակի վերլուծություն, առողջության հսկում, առողջության խթանում, կանխարգելիչ ծառայություններ, վարակիչ հիվանդության կառավարում, միջավայրի պաշտպանություն և առողջագիտություն, աղետի պատրաստվածություն և հակազդում, և աշխատանքային առողջապահություն:

Որակյալ մատակարար՝ Բժիշկը, ով որակավորվել է Ձեր վիճակը բուժելուն հարմար գործառության մարզում:

Վերականգնողական վիրահատություն՝ Վիրահատություն՝ ուղղելու կամ վերանորոգելու մարմնի անբնականոն կառուցվածքներ, որպեսզի բարելավի գործառույթը կամ ստեղծի հնարավորինս բնականոն տեսք: Մարմնի անբնականոն կառուցվածքները նրանք են, որոնք առաջանում են մի բնածին թերությունից, զարգացական անբնականոնություններից, տրավմայից, վարակից, նորագոյացություններից կամ հիվանդությունից:



Ձանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսագանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝

blueshieldca.com/promise/medi-cal:

Ուղեգիր՝ Երբ Ձեր PCP-ն հայտնում է, որ խնամքը կարող էք ստանալ ուրիշ մատակարարից: Մի շարք ապահովագրված խնամքներ և ծառայություններ պահանջում են ուղեգիր և նախավավերացում (նախօրոք լիազորում):

Վերականգնողական թերապիայի ծառայություններ և սարքեր: Ծառայություններ և սարքեր, որոնք կօգնեն վնասվածքներ, հաշմանդամություն կամ քրոնիկ հիվանդություններ ունեցող մարդկանց մտավոր և ֆիզիկական հմտություններ ձեռք բերել կամ վերականգնել:

Սովորական խնամք՝ Բժշկականորեն անհրաժեշտ ծառայություններ և կանխարգելիչ խնամք, քաջառողջ երեխայի այցեր, կամ խնամք, ինչպես՝ սովորական հետևումի խնամքը: Սովորական խնամքի նպատակն է առողջական խնդիրների կանխարգելումը:

Գլուղական առողջապահական կլինիկա (RHC)՝ Առողջապահական կենտրոն մի վայրում, որտեղ չկան առողջական խնամքի բազմաթիվ մատակարարներ: RHC-ում կարող էք ստանալ առաջնային և կանխարգելող խնամք:

Զգայուն ծառայություններ՝ Հոգեկան կամ վարքագծային առողջության, սեռական և վերարտադրողական առողջության, ընտանիքի ծրագրման, սեռական ճանապարհով փոխանցվող վարակների (STI), ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, սեռական բռնության և վիժումների, թմրանյութերի օգտագործման խանգարման, սեռը հաստատող խնամքի և մտերիմ զուգընկերոջ բռնության հետ կապված ծառայություններ:

Լուրջ հիվանդություն՝ Հիվանդություն կամ վիճակ, որը պետք է բուժել և կարող է մահացություն պատճառել:

Սպասարկման տարածք՝ Blue Shield Promise -ի սպասարկված աշխարհագրական տարածքը: Սա ներառում է Լոս Անջելես վարչաշրջանը:

Հմուտ բուժքույրական խնամք՝ Ապահովագրված ծառայություններ, որոնք մատուցվում են արտոնագրված բուժքույրերի, տեխնիկների և/կամ թերապևտների կողմից հմուտ բուժքույրական հաստատությունում կեցության ընթացքում կամ անդամի տանը:

Հմուտ բուժքույրական հաստատություն՝ Վայր, որը մատուցում է 24-ժամյա բուժքույրական խնամք, որը կարող են տալ միայն պատրաստված առողջապահական մասնագետները:



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսագանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ blueshieldca.com/promise/medi-cal:

Մասնագետ (կամ մասնագիտացած բժիշկ)՝ Բժիշկ, ով բուժում է որոշ տեսակի առողջական խնամքի խնդիրներ: Օրինակ, ոսկրաբույժ վիրաբույժը բուժում է կոտրած ոսկորները. ալերգիաների մասնագետը բուժում է ալերգիաները. և սրտաբանը բուժում է սրտի խնդիրները: Հիմնականում, մասնագետի այցելելու համար Ձեզ անհրաժեշտ է Ձեր PCP-ից մի ուղեգիր:

Մասնագիտացված հոգեկան առողջության ծառայություններ՝ Հոգեկան առողջության ծառայությունների կարիք ունեցող անդամների ծառայություններ, որոնք ավելի բարձր մակարդակի խանգարում ունեն, քան թերևից միջին:

Մահացու հիվանդություն՝ Բժշկական վիճակ, որը հնարավոր չէ շրջել և շատ հավանական է, որ մահացնի մեկ կամ նվազ տարվա ընթացքում, եթե հիվանդությունը հետևի իր բնական ընթացքին:

Քաղաքացիական իրավախախտման հետ կապված գումարի ստացում

Երբ նպաստները տրամադրվում են կամ կտրամադրվեն Medi-Cal-ի անդամին վնասվածքի պատճառով, որի համար պատասխանատու է մեկ այլ կողմ, DHCS-ը այդ կողմից ստանում է այդ վնասվածքի համար անդամին մատուցված նպաստների տրամաբանական արժեքը:

Տեսակավորում (կամ գնում)՝ Ձեր առողջական վիճակի գնահատումը այն բժշկի կամ բուժքրոջ կողմից, ով հատուկ պատրաստություն ունի՝ որոշելու Ձեր խնամքի անհրաժեշտության հրատապությունը:

Հրատապ խնամք (կամ հրատապ ծառայություններ)՝ Ծառայություններ, որոնք մատուցվում են բժշկական խնամք պահանջող ոչ-արտակարգ իրավիճակի հիվանդության, վնասվածքի կամ վիճակի համար: Հրատապ խնամքը կարող էք ստանալ արտացանցային մատակարարից, եթե ցանցի մատակարարները ժամանակավորապես հասանելի կամ մատչելի չեն:



Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների խնամք 1-800-605-2556 (TTY 711) համարով: Blue Shield Promise-ը այստեղ է երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 18:00: Հեռախոսագանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ 711 համարով: Այցելեք առցանց այս հասցեով՝ blueshieldca.com/promise/medi-cal: